



21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

5 (63)

ԵՐԵՎԱՆ

2015

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

5 (63), 2015

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի

Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական լայնախոսքային լրատվության կենտրոնի վարիչ, փ.գ.թ.
(Մոսկվա, ՌԴ)

Ալեքսանդր Կորնիլով

Նիժնի Նովգորոդի Ն.Ք. Լոբաչևսկու անվան պետական համալսարանի արտասահմանյան տարածաշրջանագիտության և տեղային պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր (Նիժնի Նովգորոդ, ՌԴ)

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Արամ Սաֆարյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

Արթուր Աթանեսյան

ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ.

Բաբկեն Վարդանյան

«Հայկ հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական

Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Զավեն Եկավյան

Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

Էդուարդ Լ. Դանիելյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ. Կարապետյան

Տնտեսագիտության դոկտոր (Մոսկվա, ՌԴ)

Հրանուշ Հակոբյան

ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.դ.

Միհրան Դաբաղ

Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետի և արվեստի Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

Մուշեղ Լալայան

ՀՀ Կ փոխնախագահ

Մամվել Մանուկյան

IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Մելրան Օհանյան

ՀՀ Պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ

Մերգել Գրինյան

Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)

Վահագն Ազյան

«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ-խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Աթոյան

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային անվտանգության հետազոտություններ» ծրագրի տնօրեն, տ.գ.թ.

Վարդան Հարությունյան

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 5 (63), 2015թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Գլխավոր խմբագիր

Գագիկ Հարությունյան

Պատասխանատու

խմբագիր

Խոնարհիկ

Քարատուղանյան

Պատասխանատու

քարտուղար

Լուսինե Բաղրամյան

Աննա Ժամակոչյան

Արեստակես Սիմավորյան

Էդուարդ Դանիելյան

Սերգեյ Սարգսյան

Վահագն Ազյան

Վահրամ Հովյան

Վարդան Աթոյան

Գագիկ Հարությունյան

Ծայրահեղականության աճը և

«մտավոր հավասարության» գործոնը 5

Արման Նավասարդյան

Հարավային Կովկասի փոքր

պետությունների մարտահրավերները

հետսառաքատերազմյան շրջանում 17

Վահագն Ազյան

Միջազգային հիերարխիկ համակարգերի որոշ

կառուցվածքային առանձնահատկությունների մասին 25

Մամիկ Մանուկյան

Հայաստանում երիտասարդական շարժումների

գարգացումների շուրջ 41

Նվարդ Մելքոնյան

ԶԼՄ-ում կիրառվող մանիպուլյացիոն հնարքներն ու

սոցիալ-հոգեբանական ազդեցության մեխանիզմները 53

Գևորգ Պետրոսյան

Թուրքիայում գործող հայկական, հունական, հրեական

տպագիր և առցանց լրատվամիջոցները 75

Արման Գալոյան

Հայաստանի անկախության գաղափարը

«սամիզդատ» թերթերում 85

Դավիթ Սարգսյան

Հայաստանի եվրախնտեզրումը

եվրոպական լրատվադաշտի ընկալմամբ 95

Հուշագիր հեղինակին 107

ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՃԸ ԵՎ «ՄՏԱՎՈՐ ՀԱՎԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ» ԳՈՐԾՈՆԸ¹

Գազիկ Հարությունյան

*Բանալի բառեր*²՝ ծայրահեղականություն, բազմաբևեռ աշխարհ, «Սառը պատերազմ», ուղեղային կենտրոններ», կառավարելի քառս:

Այսօր գլոբալ անվտանգությունը շատ բանով կախված է մերձավորարևելյան զարգացումներից՝ Իսլամական պետության կազմավորման համատեքստում: Միևնույն ժամանակ, ԻՊ-ը միայն սառցաբեկորի գագաթն է. մերձավորարևելյան գործընթացները սերտորեն կապված են նրա հետ, թե ինչ է տեղի ունենում Կենտրոնական և Հարավարևելյան Ասիայում, աշխարհամասային Աֆրիկայում: Մակայն իրադրության սրումն արմատական ուժերի գործողությունների պատճառով այսօր տեղի է ունենում ոչ միայն այդ տարածաշրջաններում: Մի շարք ցուցանիշների գծով նույն տրամաբանությանն են ենթարկվում զարգացումներն Ուկրաինայում: Բնավ պատահական չէ, որ «Աջ սեկտորի» անդամներն իրենց անվանում են «քրիստոնյա թալիբներ», իսկ ուկրաինացի և իսլամական ծայրահեղականների (ՌԴ որոշ շրջաններից և ԱՊՀ երկրներից) միջև համագործակցության վերաբերյալ փաստերը բազմաթիվ են: Ծայրահեղականության պոտենցիալը, առայժմ՝ փոքր-ինչ լատենտ վիճակում, կուտակվում է նաև ԵՄ երկրներում: Երկար ընդմիջումից հետո ռասայական հողի վրա վերսկսվել են բախումները նաև ԱՄՆ-ում: Տպավորություն է ստեղծվում, թե ծայրահեղականության ալիքը ծածկում է ամբողջ գլոբալ տարածքը, և կան բոլոր հիմքերն այս երևույթը կարևորագույն համաշխարհային սոցիալ-քաղաքական միտում համարելու համար:

Վերլուծաբանների մի մասն այս զարգացումները կապում է բազմաբևեռ աշխարհի ցավագին կազմավորման հետ, որն ընթանում է «Սառը պատեր-

¹ Հոդվածը ճանաչվել է հաղթող «Քաղաքակրթությունների երկխոսություն» Համաշխարհային հանրային Հռոդոսյան ֆորումի «գիտական մարաթոնում»:

² «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

բազմ-2»-ի կոշտ ռեժիմով: Իսկ ազդեցության ոլորտների վերաբաժանումն ուղեկցվում է աշխարհաքաղաքական տեղաշարժերով: Մինևույն ժամանակ, տեղի ունեցող իրադարձությունները միայն աշխարհաքաղաքականության հետ կապելը նույնպես փոքր-ինչ խնդրահարույց է:

Ձևավորվող նոր համակարգի խնդիրները

Այսօր ձևավորվում է բողոքի ալիք ընդդեմ կեղծ արժեքների, որոնք հենվում են տնտեսության ֆինանսա-սպեկուլյատիվ մոդելի վրա, որը խթանում և բացարձակեցնում է սպառողական բնագոյները՝ արդյունքում ձևավորելով սոցիալ-դարվիինիզմի կանոններով առաջնորդվող հասարակություն: Բնական է, որ նման հասարակություններում արժեզրկվում են ժողովրդավարական նորմերը, ինչը թույլ է տալիս արդի արևմտյան հանրությունները բնորոշել որպես «հետժողովրդավարական» [1]: Այս իրավիճակը, թերևս, ամենադիպուկ կերպով բնութագրել է ակադեմիկոս Ալ. Պանարինը՝ գրելով, որ «Սառը պատերազմում Արևմուտքի հաղթանակից հետո նշմարվել են արևմտյան քաղաքակրթության՝ գլոբալ տիպի նոր սեփականագրկող (*էքսպրոպրիաց-նող*) համակարգի այլասերման ախտանշաններ» [2]:

Հայտնի է, որ ԻՊ և մյուս ահաբեկչական կազմակերպությունների շարքերը համալրվում են նաև ի հաշիվ նմանատիպ խռովարարների ինչպես քրիստոնեական, այնպես էլ մուսուլմանական միջավայրից: Բողոքի շարժումը, որի կազմակերպումն անիմաստ է առանց արդիական տեղեկատվա-հաղորդակցային համակարգերի, ուղղված է նաև ընդդեմ հենց այդ համակարգի, հանգեցրել է տեղեկատվական տոտալիտարիզմի: Դա դրսևորվում է ինչպես «ուղեղների մեթոդական լվացմամբ» (ինչը երբեմն ոչ այնքան պոլիտկոռեկտ կերպով անվանում են «գլոբալ հիմարացում»), այնպես էլ ամեն ինչ և բոլորին զանգվածաբար գաղտնալսելով, ինչի համեմատ հանճարեղ Ջորջ Օրուելի մարգարեությունը բավական դժգույն է թվում: Նման պայմաններում ամենին զարմանալի չէ «այլախոհական շարժման» ի հայտ գալը, որն ինչ-որ բանով հիշեցնում է խորհրդայինը, քանի որ առանձին խիզախներ (Ասանժ, Մնոուդեն և այլք) հրապարակում են այսպես կոչված «ընթացիկ իրադարձությունների ժամանակագրությունը (*хроника текущих событий*)» տոտալիտար համակարգում: Բողոքի շարժումը ճնշելու համար կիրառվում են ամենաբազ-

մագան մեթոդներ: Բայց գործընթացն «արդեն սկսվել է», և այդ խոռվությունը, երբեմն անգամ շատ ներդաշնակորեն, գումարվում է գլոբալ ռազմաքաղաքական իրադրությանը՝ այն դարձնելով էլ ավելի բարդ և անկանխատեսելի:

Բարդության ընկալման խնդիրը

Զարմանալի չէ, որ արդի իրողությունները բնութագրելու համար օգտագործվում են «տուրբուլենտություն», «բազմաչափություն» կամ էլ «քաոս» եզրերը: Մինչդեռ այս ամբողջ «խելագարության» մեջ, ըստ շեքսպիրյան հերոսի, առկա է նաև «մի ինչ-որ համակարգ»: Ուստի այսօր, ինչպես, թերևս, երբեք, հրատապ է դարձել մեզ շրջապատող իրողությունների աղեկվատ ընկալման և իմաստավորման խնդիրը: Ելնելով այս աքսիոմից՝ փորձենք ներկայացնել այդ իրողությունների մեխանիզմի որոշ տարրերի մեր տեսլականը: Ընդ որում՝ էլնելով այն հայտնի մոտեցումից, որը ենթադրում է, թե, բնական-էվոլյուցիոն գործընթացներին զուգահեռ, ներկայիս «բարդությունն» աշխարհում ձևավորվում է մասամբ նաև շնորհիվ ուժի կենտրոնների ուղղորդիչ գործողությունների: Եվ հենց այդ «բարդության» պատճառով ստորև ներկայացվող որոշ դատողություններ հարկ է ընդունել որպես վարկածներ, բայց ոչ երբեք կոնսպիրոլոգիական իմպրովիզացիաներ: Միննույն ժամանակ, կարծում ենք, որ միայն այսօրինակ ազատ քննարկումները կօգնեն գալ իրատեսական և պրագմատիկ եզրահանգումների, ինչն, իր հերթին, կօգնի պատասխանել «ի՞նչ անել» հավերժական հարցին:

Քաղաքական ծայրահեղականության նախադեպեր

Տեղեկատվական հարթությունում կարելի է հանդիպել բազմաթիվ հղումների ահաբեկչական կազմավորումների, այդ թվում՝ «Ալ-Քաիդայի» և ԻՊ-ի հետ տարբեր երկրների հատուկ ծառայությունների կապերի վերաբերյալ: Նորություն չէ. լավ հայտնի է, որ արմատականները այն բրուտալ ուժն են, որը բոլոր քիչ թե շատ ազդեցիկ պետությունների կառավարությունները և հատուկ ծառայությունները միշտ ջանում են պահել իրենց վերահսկողության տակ և օգտագործել սեփական նպատակներով: Միննույն ժամանակ, ծայրահեղականության ներկայիս տարածումն ամենուրեք և նրա վերածումը գլոբալ աշխարհաքաղաքական գործոնի սուկ որպես հատուկ ծառայությունների առանձին գործողություններ դիտարկելը (չնայած դրանց կարևորությանը)

փոքր-ինչ դժվար է: Իրադարձությունների տրամաբանությունն առնվազն անուղղակիորեն թույլ է տալիս առաջ քաշել նաև վարկած ծայրահեղականության արհեստական կամ մտածված տարածման մասին:

Վերջերս նշվեց հիտլերյան Գերմանիայի նկատմամբ տարած հաղթանակի տարեդարձը: Այդ պատերազմը նույնպես ծայրահեղականության՝ ֆաշիզմի և նացիզմի աճի հետևանքն էր: Գերմանիայում ֆաշիզմի գաղափարախոսության առաջացման բավականաչափ օբյեկտիվ նախադրյալներ կային: Իսկ ռասիզմի պարագայում փոքր-ինչ բարդ է. հայտնի է, որ այդ երևույթը սկզբում ծագել է անգլոսաքսոնական միջավայրում: Վատ օրինակը միշտ էլ գայթակղիչ է, բայց, մի շարք հետազոտողների պնդմամբ՝ ռասիստական գաղափարների արտահանումը և հետագա խորացումը աշխարհամասային Եվրոպայում այնքան էլ ինքնաբերական կերպով չէին կատարվում: Ուստի, այս հարցն էլ քննարկվում էր և քննարկվում է պատերազմի հարուցման գործում բրիտանական ընկերակցության դերի համատեքստում: Բայց ֆաշիզմի մասին այսօր հիշում են միայն պատմական առումով, այնինչ մյուսների նկատմամբ առանձին էթնոսի (մի փոքր այլ ձևակերպմամբ՝ նաև առանձին կրոնի) գերազանցության թեզն այսօր էլ բավական արդիական է: Մեփական բացառիկության իմաստային վիրուսները դրված են «գունավոր հեղափոխությունների» տեխնոլոգիաներում, և դրանցով ոգևորված վարակվում են նման հեղափոխություններ իրականացնող հանրությունները: Թարմ օրինակն Ուկրաինան է:

Հետևաբար, կան բոլոր հիմքերը ենթադրելու, որ այսօր ծայրահեղականության համաճարակի տարածումը հակամարտությունների ծավալման տեխնոլոգացված հնարավորություն է՝ «վարակողների» համար շահավետ խմբագրությամբ: Դրա համար երբեմն օգտակար է պատերազմ «հայտարարել» «ծայրահեղականությանը»: Համենայնդեպս, նման հնարավորության մասին են վկայում վերջին տարիների ռազմաքաղաքական զարգացումները:

**«Խելացի տեխնոլոգիաներ», «ուղեղային կենտրոններ»
և «կառավարելի քառս»**

Առաջին փուլում գործողություններն իրականացվում էին ավանդական կանոնով. Աֆղանստանը և Իրաքը ռմբակոծվեցին, զավթվեցին և այլն: Հետո գործի դրվեցին ավելի «խելացի տեխնոլոգիաներ»: Մեծ Մերձավոր Արևելքում իր

քաղաքականությունն իրագործելու համար ԱՄՆ-ը լայնորեն օգտագործում էր *RAND* կորպորացիայի մշակումները: Այս հայտնի կենտրոնի արտադրանքի հանդեպ ուշադրությունը, հատկապես «մերձավորարևելյան բարդությունները» հասկանալու համատեքստում, պարզապես անհրաժեշտ է. բավական է թվարկել *RAND*-ի ընդամենը մի քանի աշխատությունների անվանումները՝ «Քաղաքացիական դեմոկրատական իսլամ. գործընկերներ, ռեսուրսներ և ռազմավարություններ»¹, «Չափավոր մուսուլմանական ցանցի ստեղծումը»² և այլն: Ակնհայտ է, որ «արաբական գարնան» կամ «եվրամայդանի» հաջողությունը միայն Ջին Շարփի հեղափոխական տեխնոլոգիաներին վերագրելը չափազանցություն կլինի. այդ հեղաշրջումները (ի դեպ, ծայրահեղականության դասական օրինակներ են) հիմնվում էին կոնկրետ երկրի և հասարակության սոցիալ-քաղաքական և էթնո-կրոնա-հոգեբանական բնութագրերի խոր իմացության վրա: Բայց սա ևս դեռ ամբողջը չէ. *RAND*-ը և Շարփը տրամադրում էին գիտելիքներ և տեխնոլոգիաներ, այսինքն՝ «տակտիկական զենք», բայց ոչ քաղաքական փիլիսոփայություն և գաղափարախոսություն, այսինքն՝ զլոբալ ռազմավարություն:

Դեռ վերջերս բոլոր վերլուծաբանները խոսում էին Մերձավոր Արևելքում «կառավարելի քառսի» մասին: Որոշ փորձագետներ արդարացիորեն այդ երևույթը կապում էին *Միջդիսցիպլինար հետազոտությունների ինստիտուտի* կամ Կրիտիկական բարդության ինստիտուտի (Սանտա Ֆե, ԱՄՆ) մշակումների հետ: Այսօր այդ եզրին շատ ավելի քիչ են դիմում, ինչը նույնպես, մեր կարծիքով, հատկանշական է, և մենք կվերադառնանք դրան: Պենտագոնի և Պետդեպարտամենտի հովանու ներքո ստեղծված այդ կառույցը պետք է քառսի տեսությունը հարմարեցնել կիրառական աշխարհաքաղաքական նպատակների համար: Հատկանշական է, որ ինստիտուտի հիմնադիրներից մեկը Նոբելյան դափնեկիր, հայտնի ֆիզիկոս Մյուրեյ Գել-Մանն էր, իսկ ինստիտուտի գործունեության հիմքն են կազմել մեկ այլ Նոբելյան մրցանակակիր՝ Իլյա Պրիգոժինի կոնցեպտները «քառսի և կարգի» մասին [3]:

Հնարավոր է՝ ականավոր գիտնականներն իրենց գաղափարներն իրական քաղաքականության մեջ ներդնելը համարել են զվարճալի, միևնույն ժա-

¹ Cheryl Benard, «Civil Democratic Islam. Partners, Resources, and Strategies», http://www.rand.org/pubs/monograph_reports/MR1716.html.

² «Building Moderate Muslim Networks», <http://www.rand.org/pubs/monographs/MG574.html>.

մանակ՝ լավ վճարվող, մտավոր խաղ (ինչն ընդհանուր առմամբ բնորոշ է տեսաբան ֆիզիկոսներին): Ավելի դժվար է պատկերացնել, որ նրանք, անսահմանորեն հավատալով ֆիզիկական օրենքների ունիվերսալությանը, մտածել են, թե այդ օրենքները «կաշխատեն» նաև անկանխատեսելի մարդկային-հասարակական միջավայրում: Կարծում ենք, որ վճռական գործոն է հանդիսացել այդ մշակումներին Զբիգն Բժեզինսկու և դիվանագիտության ու հատուկ ծառայությունների ոլորտների ներկայացուցիչների մասնակցությունը: Լինելով պակաս տաղանդավոր՝ նրանք կարող էին, ենթարկվելով իրենց աշխարհաքաղաքական բնագոյներին, կամք գործադրելով, այնուամենայնիվ, ստիպել քաղաքականությունը «խաչաձևել» տեսական ֆիզիկայի հետ: Եթե աշխարհը «շախմատի տախտակ է», իսկ աշխարհաքաղաքականությունը ենթարկվում է այդ խաղի կանոններին (միշտ էլ մտածելն օգտակար է), ապա ինչո՞ւ չի կարելի քաղաքական հարթությունում օգտագործել նաև ֆիզիկան... Ի վերջո, սիմբիոզը կայացավ, ու քաղաքական վերլուծաբանության մեջ ի հայտ եկավ «կառավարելի քառու» սովորական դարձած եզրը, որից, նրա հեղինակների մտահղացմամբ, պետք է ծագեր «նոր կարգը»:

Proxy-ցեղասպանություն

Մերձավոր Արևելքում եղել են և կան ռազմական, սոցիալ-տնտեսական և կրոնա-դավանաբանական բնույթի բազմաթիվ օբյեկտիվ խնդիրներ [4]: Հայտնի է նաև, որ իրական քաղաքականությունը հազվադեպ է մարդասեր լինում: Միևնույն ժամանակ, թվում է, որ որոշ արդի քաղաքական տեխնոլոգիաներ, որոնք երբեմն «ուղեղային տրեստների» «արտադրած» ոչ այնքան կոռեկտ և մեխանիստական թեզիսներ են պարունակում, առանձնապես ապահումանիզացված են: Նրանք հարուցում են ռազմաքաղաքական և հասարակական գործընթացներ, որոնք հանգեցնում են մարդկանց և քաղաքակրթական արժեքների զանգվածային ոչնչացման: Այդ տեխնոլոգիաներն իրենց ներկայացման ձևով բավական պոլիտկոռեկտ են և կարծես թե չեն պարունակում ռասիզմի կամ ֆաշիզմի տարրեր: Սակայն դրանք հանգեցրին հումանիտար աղետի, որը լիովին համադրելի է նրա հետ, ինչը տեղի էր ունենում Երկրորդ համաշխարհայինի դարաշրջանում: Իհարկե, մեխանիզմներն այս դեպքում շատ ավելի նուրբ են, պատերազմները վարվում են ուրիշի ձեռքերով, այլ խոսքերով, *proxy* ռեժիմով:

Օրինակ, Մերձավոր Արևելքում տեղի է ունենում «ցեղասպանություն վազող տողի ռեժիմով»¹. զոհվածների թիվը հասնում է 2 մլն-ի, իսկ փախստականներինը անցնում է 15 մլն-ից: Ցեղասպանությունն ուղեկցվում է մշակութասպանությամբ, անհետացման եզրին են հայտնվել տարածաշրջանի քրիստոնեական (այդ թվում և հայկական) համայնքները: Այս ամենը, թվում էր, թե անմիջական ոչ մի կապ չունի նրանց հետ, ովքեր մշակել և կիրառել են «կառավարելի քառսի» տիպի կասկածելի հայեցակարգերը: Համաշխարհային հանրության կողմից «*proxy*- ցեղասպանության» մեխանիզմները չընկալելը կապված է պրոֆիլակտիկ տեղեկատվական մանիպուլյացիայի տեխնիկայի զարգացման հետ. օրինակ, այն, ինչ կատարվում է Սիրիայում, ներկայացվում է որպես «դեմոկրատական ընդդիմության» պայքար ընդդեմ բռնակալ Ասադի: Իսկ համաշխարհային ընկերակցության հնարավոր բողոքները ճնշելու համար (Վիետնամական պատերազմի ժամանակ տեղի ունեցած նախադեպից խուսափելու նպատակով) կիրառվում են տարբեր մեթոդներ: Բանը հասնում է թմրանյութերի զանգվածային տարածմանն, ինչն ըստ էության կարելի է անվանել հոգեբանական պատերազմ ընդդեմ սեփական հասարակության²: Չի բացառվում, որ «հիմարացնելուն» է ուղղված նաև «միասեռ ամուսնությունների» գաղափարի և զանգվածների կառավարման նմանատիպ տեխնոլոգիաների ֆետիշացումը (հատկապես առկա խնդիրների ֆոնին): Այնինչ, կասկած չի հարուցում, որ ցեղասպանությունը Մերձավոր Արևելքում պետք է հետաքննվի միջազգային դատարանի ձևաչափով՝ որպես մարդկության դեմ հանցագործություն: Ընդ որում՝ բնավ պարտադիր չէ, որ դա հենց Հաագայի դատարանը լինի:

Քաղաքակրթական չափում

Պակաս դրամատիկ չեն տեղեկատվա-հոգեբանական բնույթի հետևանքները. ԻՊ անվանումը գլոբալ հանրության գիտակցության մեջ ներդրել է իսլամի ասոցացումն ահաբեկչության հետ, ինչը հանգեցնում է միջքաղաքակրթական անտագոնիզմի սաստկացմանը՝ Հանթինգտոնի հայեցակարգերի ոգով:

Դրան զուգահեռ՝ Մերձավոր Արևելքում և Արևելյան Եվրոպայում ընթացող գործընթացների համատեքստում խաթարվում են նաև ընդհանուր էթնո-

¹ *Гагик Арутюнян*, Мультиполярные реалии, Ближний Восток и геноцид в режиме «бегущей строки», http://noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=12307&spphrase_id=47943.

² *Гагик Арутюнян*, Информационные операции: история и современность, http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=13489&spphrase_id=47952.

մշակութային միջավայրին պատկանող ժողովուրդների միջև հարաբերությունները: Մասնավորապես, ներկայում «փափուկ ուժի» հայեցակարգի շրջանակներում կիրառվող մանիպուլյացիոն տեխնոլոգիաները թույլ են տալիս դեֆորմացնել անգամ այն ժողովուրդների «քաղաքակրթական կողը», որոնց մինչ այդ ընդունված էր անվանել «հոգևոր առումով մերձավոր»: Մինչդեռ, սեփական «քաղաքակրթական կոորդինատների» կորուստը հանգեցնում է մեծ հիմնախնդիրների կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Նման հասարակություններում, որպես կանոն, զարգանում է նաև անհանդուրժողականությունը, որը երբեմն վերաճում է ռազմաքաղաքական առճակատման հենց «յուրայինների» հետ, ինչպես դա տեղի է ունենում Ուկրաինայում: Այս համատեքստում պետք է մշակել ինչպես հայեցակարգային, այնպես էլ կազմակերպչական (ցանցային սկզբունքով) տեխնոլոգիաներ, որոնք թույլ կտային վերականգնել արհեստականորեն բաժանված ժողովուրդների ինքնությունն ու քաղաքակրթական ընդհանրությունը (դրանով իսկ՝ ընդհանուր զարգացմանն անհրաժեշտ սիներգիզմը):

Քաղաքական հետևանքները

Հարկ է ընդունել, որ ռազմական-մտավոր ջանքերը բավական շոշափելի արդյունքներ են տվել: Այսօր Եվրասիան զգալի չափով շրջապատված է անկայունության գոտիով (տխրահոշակ «Անակոնդա»-ն), իսկ արմատական խմբավորումները ակտիվություն են ցուցաբերում Ռուսաստանում և Չինաստանում: Միննույն ժամանակ, Ռուսաստանն ու Իրանը ներքաշված են ուկրաինական և եմենյան հակամարտություններում, ԲՊ գինյալների կողմից զավթված և վաճառվող նավթն ու գազը զցում են ածխաջրածինների գները և այլն:

Թվում էր, թե հիմնական աշխարհառազմավարական խնդիրները կատարված են: Բայց բնավ ոչ լիովին, քանի որ գործին խառնվել են ֆիզիկական այլ օրինաչափություններ՝ շատ ավելի պարզ և իսկապես ունիվերսալ, այն է՝ «գործողությունը ծնում է հակագործողություն»:

Ռուսաստանը և ՉԺՀ-ն, յուրաքանչյուրը՝ յուրովի, սկսեցին հակազդել ամերիկյան պլաններին և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել: Իրանը, հիմնականում շնորհիվ իր ուրույն հասարակական-քաղաքական համակարգի, տուկուն դուրս եկավ ամեն տեսակ գունավոր հեղափոխությունների առջև, և Լիբիայի կամ Սիրիայի մղձավանջն այնտեղ չկրկնվեց: Հեղափոխական անար-

խիայի դեմ ապստամբեցին և նախկին կարգը զգալի չափով վերականգնեցին եգիպտացի զինվորականները: «Դիմադրության» համատեքստում մի շարք պետություններ սկսեցին համակարգել իրենց ջանքերը ՇՀԿ-ի (Շանհայի համագործակցության կազմակերպություն), ԲՐԻԿՍ-ի (Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան, Հարավաֆրիկյան Հանրապետություն) և ԵԱՏՄ-ի (Եվրասիական տնտեսական միություն) ձևաչափերում: Հնարավոր է՝ հենց այս պատճառներով է, որ տեղեկատվական կոնտենտում նկատվում է «կառավարելի քառու» պոպուլյար եզրի օգտագործման էական նվազում. չէ՞ որ շատ բան վկայում է այն մասին, որ «քառու» դուրս է եկել վերահսկողությունից, գործում է սեփական և անկանխատեսելի օրենքներով, ինչպես և հարիր է հասարակական-մարդկային քառուին...

Այս ֆոնին ի հայտ եկան հայտնի խնդիրները հենց Միացյալ Նահանգներում: Ժամանակին Փոլ Քենեդին զգուշացնում էր, որ «ԱՄՆ գլոբալ շահերի և պարտավորությունների գումարը էապես գերազանցում է դրանք միաժամանակ պահպանելու հնարավորությունը», և այդ երևույթը բնորոշել է որպես «կայսերական գերլարում»: Այդ «գերլարումը» միևնույն ժամանակ ուղեկցվում է նաև «հաջողություններից ունեցած գլխապտույտով»: Սակայն թե՛ «գերլարման», թե՛ «գլխապտույտի» վիճակում ամերիկացիներն ի գորու են շատ բանի, հատկապես հաշվի առնելով այն, որ նրանք հսկայական գերազանցություն ունեն իրենց մրցակիցների հանդեպ գիտա-նորարարական և ռազմատեխնիկական ոլորտներում:

Հեռանկարների անորոշությունը

Համաձայն ԱՄՆ ցամաքային զորքերի շտաբի պետի հայտարարության՝ ԻՊ-ը ոչնչացնելու համար կպահանջվի տասը տարի¹, մինչդեռ նախագահ Օբաման ավելի վաղ նշում էր երեք տարվա մասին: Հիշենք, որ 2003թ. Իրաքի բանակի ջախջախման համար երեք շաբաթ պահանջվեց: Հատկանշական է, որ Ուկրաինայի կոնֆլիկտի վերաբերյալ քչերը կհամարձակվեն ինչ-որ ժամկետներ նշել, բայց կան բոլոր հայտանիշներն այն բանի, որ դիմակայությունն այնտեղ քրոնիկական բնույթ է ձեռք բերում:

¹ *США назвали сроки ликвидации «Исламского государства»,*
<http://www.u-f.ru/News/u328/2015/06/12/716371>.

Նոր «Սառը պատերազմում» անորոշությունների աճը պայմանավորված է նաև նրանով, որ աշխարհը դարձել է բազմակենտրոն: Այսօր, ի տարբերություն անցած նմանատիպ պատերազմի, դրան մասնակցում են ոչ միայն խոշոր աշխարհաքաղաքական ակտորները, այլև մի շարք ազդեցիկ կոմերցիոն ընկերություններ (տրանսազգային տեսակի) և հասարակական կազմակերպություններ: Գլոբալ քաղաքականության այս սուբյեկտներից յուրաքանչյուրն իր պատկերացումներն ունի (մեծ մասամբ՝ բավական աղոտ) ապագայի մասին, որոնք, բնականաբար, հազվադեպ են համընկնում: Այդ պատճառով ապագայի կանխատեսումներ անելը կամ կոռեկտ սցենարներ առաջարկելն օբյեկտիվորեն դժվար է: Սովորաբար, նման դեպքերում դիմում են *NIC*¹ կանխատեսումներին, բայց տպավորություն է ստեղծվում, թե ԻՊ, Ուկրաինայի գործոնները և ծայրահեղականության գլոբալ աճը դեռևս բավականաչափ հաշվառված չեն այդ ու նմանատիպ այլ կազմակերպությունների մշակումներում:

Բայց միևնույն ժամանակ, եթե փորձենք էքստրապոլացնել արդի իրողությունները հետագայի վրա, ապա հիմնական միտումը, ինչպես արդեն նշել ենք, ծայրահեղականության աճն է: Այդ գործընթացը կուժեղանա նաև եվրոպական աշխարհամասում՝ երկու զուգահեռ մեխանիզմներով: Նախ՝ դա «բումերանգի էֆեկտն է». «քառսից» դժգոհ փախստականների հոսքը պարարտ հող է հանդիսանում ահաբեկչական կազմակերպությունների համար, ի լրումն փախստականների շարքերում հատուկ ներդրված ԻՊ էմիսարների: Երկրորդ՝ բողոքը հասունանում է նաև էթնիկ եվրոպացիների շրջանում, որոնց համար ակտուալանում է որպես տեսակ գոյատևման խնդիրը: Այս համատեքստում հիմնավորված կանխատեսումներ կարելի է համարել նաև գեղարվեստորեն արված ինտուիտիվ մարգարեությունները [5]:

Որոշ եզրահանգումներ

Վերը ներկայացված հնարավոր միտումները չեն հակասում ավելի վաղ արված կանխատեսումներին, որոնց համաձայն՝ աշխարհը վերափոխվում է, ուժեղանում է ինտեգրացիան ազդեցության նոր կենտրոնների շուրջ, ինչին զուգահեռ ընթանում է գլոբալ տարածքի ֆրագմենտացիա՝ ըստ քաղաքա-

¹ National Intelligence Council, Global Trends,

<http://www.dni.gov/index.php/about/organization/national-intelligence-council-global-trends>.

կրթական և այլ հատկանիշների: Ըստ որոշ սցենարների՝ ԱՄՆ-ը սրընթացորեն կորցնում է մոնոպոլ դիրքերը, ըստ այլ սցենարների՝ հնարավոր է, որ այդ տերությունը դեռ պահպանելու է իր առաջատարությունը:

Նման սցենարների իրականանալու հնարավորությունը կախված է ոչ միայն և անգամ ոչ այնքան տնտեսական ու ռազմական ցուցանիշներից, որքան այն բանից, թե կկարողանան արդյոք Ռուսաստանը, Չինաստանը և մյուս երկրները մրցակցել գերտերության հետ «խելացի քաղաքական, հումանիտար և կազմակերպչական տեխնոլոգիաների» ոլորտում¹: Այս համատեքստում իրավիճակը համեմատելի է անցած դարի կեսերի այն շրջանի հետ, երբ տերությունները չէին կարող առաջատար համարվել, եթե միջուկային զենք չունենային: Այս հանգամանքը, մասնավորապես, բավական սուր է ընկալվում ՉՏՀ-ում, որտեղ Պետխորհուրդը որոշում է ընդունել մի շարք նոր «ուղեղային կենտրոններ» ստեղծելու մասին: Նրանց առջև խնդիր է դրվել, որպեսզի «դրանցից մի քանիսը հասնեն գլոբալ ազդեցության» [6]:

Մեր կարծիքով՝ լիարժեք բազմաբևեռ աշխարհակարգը հնարավոր է միայն առաջատար երկրների միջև «մտավոր հավասարության» ձևավորման դեպքում՝ «խելացի տեխնոլոգիաների» զուպման» համապատասխան մեխանիզմների մշակմամբ:

Հուլիս, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Коллин Крауч*, Постдемократия, М., Изд-во Государственного университета-Высшая школа экономики, 2010.
2. *Александр Панарин*, Народ без элиты: между отчаянием и надеждой. «Наш современник», №11, 2001.
3. *Пригожин И., Стенгерс И.*, Порядок из хаоса: Новый диалог человека с природой, М., Прогресс, 1986, 432 с.
4. *Գազիկ Հարությունյան*, ԱՄՆ ռազմավարության որոշ դրույթները Իրաքյան հիմնախնդրի համատեքստում, 21-րդ դար, #3(5), էջ 105, 2004:
5. *Елена Чудинова*, Мечеть Парижской Богородицы, М., Изд-во: Яуза, Эксмо, Лепта-Пресс, 2005.
6. О развитии «мозговых центров» в КНР, Зарубежное военное обозрение, #4, с. 92, 2015.

¹ Տե՛ս, օրինակ, *Гагик Арутюнян*, Прогнозирование и формирование будущего, 21-й Век, #3(19), с. 5, 2011, *Гагик Арутюнян*, История, информационные войны и интеллектуальный паритет, http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=13442.

**ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՃԸ
ԵՎ «ՄՏԱՎՈՐ ՀԱՎԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ» ԳՈՐԾՈՆԸ**

Գագիկ Հարությունյան

Ամփոփագիր

Ծայրահեղականության նկատվող աճը պայմանավորված է ոչ միայն բազմաբևեռ աշխարհի ձևավորման ցավագին գործընթացով և բողոքի շարժման ակտիվացմամբ, այլև «խելացի տեխնոլոգիաներ» արտադրող ամերիկյան «ուղեղային կենտրոնների» գործունեությամբ, որն ուղղված է աշխարհաքաղաքական մրցակիցների դեմ: Նման տեխնոլոգիաներին արդյունավետ հակազդեցությունն այլ պետությունների կողմից հնարավոր է համապատասխան հումանիտար տեխնոլոգիաների ոլորտում նրանց «մտավոր հավասարություն» ձեռք բերելուց հետո միայն:

**РОСТ ЭКСТРЕМИЗМА
И ФАКТОР «ИНТЕЛЛЕКТУАЛЬНОГО ПАРИТЕТА»**

Գագիկ Արությունյան

Резюме

Наблюдаемый рост экстремизма обусловлен не только болезненным процессом формирования мультиполярного мира и ростом протестного движения, но и деятельностью генерирующих «умные технологии» американских «мозговых центров», направленной против геополитических конкурентов. Эффективное противодействие подобным технологиям со стороны других государств возможно лишь после достижения ими «интеллектуального паритета» в сфере соответствующих гуманитарных технологий.

**THE GROWTH OF EXTREMISM
AND THE FACTOR OF “INTELLECTUAL PARITY”**

Gagik Harutyunyan

Resume

The growth of extremism observed currently is caused not only by painful process of multi-polar world formation and protest movement rise, but also by activities of American think tanks that generate “smart technologies.” Effective counteraction to such technologies by other countries is possible only when they achieve an “intellectual parity” in the area of relevant humanitarian technologies.

**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻՒ
ՓՈՔՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ
ՀԵՏՄԱՌԸՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

Արման Նավասարդյան՝

Բանալի բառեր՝ տարածաշրջանի նոր դերակատարներ, աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական փոփոխություններ, աշխարհի քարտեզի վերաձևման միտումներ, Հարավային Կովկասում քաղաքական լարվածության թուլացում, պետությունների միջև բնականոն հարաբերությունների հաստատում:

Հազարամյակներ շարունակ կովկասյան տարածքում զարգացել են աշխույժ առևտրական և մշակութային կապեր, կնքվել են դիվանագիտական համաձայնագրեր, կազմավորվել և փլուզվել են ռազմական միություններ: Կովկասը հանդիսացել է Մետաքսե մեծ ճանապարհի կարևորագույն հատվածը, որը Եվրոպան կապել է Կենտրոնական և Արևմտյան Ասիայի հետ: Հարավային Կովկասով, այդ թվում՝ Հայաստանի վրայով անցնող առևտրական ճանապարհը հայտնի էր դեռևս Հումբոլտի և Ոսկե գեղմի Ժամանակներից [1, p. 290]: Այսպիսով, դեռևս վաղնջական ժամանակներից ժողովուրդներն ու պետությունները ոչ միայն գծովել ու պատերազմել են, այլև խելամիտ են գտնվել համագործակցելու քաղաքական, առևտրական, մշակութային ոլորտներում, այդպիսով ուղի են հարթել գալիք սերունդների համագործակցության և ինտեգրացիայի համար:

Սակայն Անդրկովկասի պետությունների համաշխարհային քաղաքականությանը մասնակցելու և նոր աշխարհակարգի կայացմանը հաղորդակցվելու հրամայականը բախվում է անհաղթահարելի արգելքների հետ, քանի որ տարածաշրջանը ներկայում ներկայացնում է քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական, մշակութային և էթնիկական հակասությունների ու հակամարտությունների թնջուկ, որում «խճճված են դժվար լուծվող սոցիալ-

¹ Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, Արտակարգ և լիազոր դեսպան:

տնտեսական, ազգային-տարածքային, կրոնական, աշխարհաքաղաքական և այլ հետաքրքրություններ» [2, c. 8]:

ԽՍՀՄ փլուզմանը և «Սառը պատերազմի» ավարտին հաջորդող քաղաքական տեկտոնիկ շարժումներն իրենց մեջ առան նաև Հարավային Կովկասը, որը դադարեց միայն Ռուսաստանի ազդեցության տարածք լինելուց: Տարածաշրջանում հայտնվեցին նոր դերակատարներ՝ ԱՄՆ-ը, Եվրամիությունը, Թուրքիան, Իրանը, Չինաստանը: Ի լրումն՝ Հարավային Կովկասն սկսեց դիտվել Մեծ Մերձավոր Արևելքի բաղադրյալ՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով: Արդյունքում՝ ծավալվում են մեծ քաղաքական խաղեր ու կոմբինացիաներ, որոնք սպառնում են տարածաշրջանը դարձնել Կովկասի համար պայքարող պետությունների, առաջին հերթին՝ ատլանտիկումի և Եվրասիայի շահերի բախման էպիկենտրոն: Ընդ որում՝ երկու բլոկների միջև ուժերի հարաբերակցությունը ենթակա է փոփոխման: Անցած դարավերջին Ռուսաստանի դիրքերը նկատելիորեն թուլացան այստեղ, իսկ ԱՄՆ-ն ակտիվացրեց կովկասյան քաղաքականության վեկտորը: Սակայն Վ.Պուտինի վճռական և կարծր գործողություններն աստիճանաբար փոխում են քաղաքական իրողությունը: Ռուսաստանը «վերադառնում» է Կովկաս: «Սառը պատերազմի» խաղաղ վախճանը, որն ավարտվեց Խորհրդային Միության փլուզումով, ազդարարեց Միացյալ Նահանգների՝ որպես իրոք գլոբալ գերտերության կայացման վերջին փուլը: Լինելով Եվրամիության հետ քաղաքականապես մոտիվացված և տնտեսապես դինամիկ գործընկեր՝ թվում էր, թե այդ միջազգային լիդերը (ԱՄՆ-ը- Ա.Ն.) ի վիճակի է ոչ միայն վերածնել Արևմուտքի հեգեմոնիան, այլև ապահովել իր համար առաջատար կառուցողական դերակատարություն: Քսան տարի անց քչերն են հավատում, որ մոտ ապագայում Եվրամիությունը կարող է հանդիսանալ լուրջ խաղացող: Ամերիկայի տիրապետող դիրքերը համաշխարհային թատերաբեմում նույնպես հարցականի տակ են» [3, c. 14]: Այսպիսի հոռետեսությամբ է ներկայացնում Եվրամիության և Միացյալ Նահանգների քաղաքական ապագան ժամանակի խոշորագույն քաղաքագետ-վերլուծաբաններից մեկը՝ Ջոզեֆն Բժեզինսկին, որն ամբողջ կյանքում հանդիսացել է արևմտյան արժեքների ու շահերի համոզված ջատագով: ԱՄՆ դիրքերի թուլացումը, սակայն, ամենևին չի նշանակում նրա հետաքրքրությունների նվազում Հարավային Կովկասում, որը «գտնվում

է Արևելքի և Արևմուտքի, Հյուսիսի և Հարավի «քաղաքական մրրիկների» խաչմերուկում: Տարածաշրջանում վերջերս հայտնված պետությունները դանդաղորեն միջազգային իրավունքի օբյեկտից վերածվում են սուբյեկտի: Կովկասը դեռ երկար կմնա տարածաշրջանի դասական հեգեմոն պետությունների՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի կենսականորեն կարևոր հետաքրքրությունների կենտրոնում» [4, c. 13]:

Միջազգային հարաբերությունների գլոբալ փոփոխությունների ենթատեքստում երեք հարավկովկասյան հանրապետությունները գրավում են ոչ համասեռ դիրքորոշում. Հայաստանը Ռուսաստանի ռազմավարական գործընկերն է, ԵՏՄ անդամ, զուգահեռաբար զարգացնում է հարաբերություններն Իրանի, ԱՄՆ-ի և Եվրամիության հետ: Թուրք-ադրբեջանական քաղաքական մեղրամսից հետո Բաքուն փորձում է հավասարակշռվել Անկարայի և Մոսկվայի միջև՝ չմոռանալով Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ նավթային հետաքրքրությունները, իսկ Վրաստանը հանդես է գալիս որպես ամերիկյան արժեքների ջատագով՝ վարելով մեծ հաշվով հակառուսական քաղաքականություն: Ժամանակակից աշխարհի քարտեզը վերաձևելու վտանգավոր միտումների ենթատեքստում, որի հիմքում գլխավորաբար ընկած են ածխաջրածնի (մոտ ապագայում՝ նաև խմելու ջրի) պաշարների վերաբաշխման նկրտումները, տարածաշրջանի դերն ավելի ու ավելի է մեծանում:

Վերջին քսան տարում Կովկասում տեղի ունեցող աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական փոփոխությունները հիմնովին փոխում են միջազգային իրավունքի նոր սուբյեկտներ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի քաղաքական իմիջը և արտաքին քաղաքականության գործելակերպը: Նրանց՝ միջազգային ընտանիքին լիարժեք անդամագրվելու, նոր աշխարհակարգի ձևավորմանն ակտիվորեն մասնակցելու գործընթացին խանգարում է երկու էական հանգամանք. ա) Արևմուտք-Արևելք պայքարը տարածաշրջանում, բ) էթնիկական և միջպետական կոնֆլիկտները: Ընդհանրապես, Կովկասը, ինչպես Բալկանները, համարվում է միջազգային անվտանգության սպառնալիքի աղբյուր: Ողջ Կովկասում «միտում են 50-ից ավելի էթնոքաղաքական կոնֆլիկտներ, որոնցից շատերն ունեն միջազգային բնույթ... միջ-էթնիկական տարբերությունները որոշակի քաղաքական ուժերի կողմից (այդ թվում նաև միջազգային) կարող են օգտագործվել կոնկրետ լիդերների կողմից,

երբ դրանց հաղորդվում է զուտ քաղաքական բնույթ» [5, c. 222]: Բացի վրացիների, աբխազների, օսերի, հայերի ու ազերիների բացահայտ հակամարտությունից, տարածաշրջանում առկա է թաքնված թշնամանք ջավախահայության (Վրաստան), թալիշների, լեզգիների (Ադրբեջան) և այդ հանրապետությունների ազգային մեծամասնությունների միջև: Հայ-ադրբեջանական հարաբերությունների՝ ոչ պատերազմ, ոչ խաղաղություն իրավիճակը, Հայաստան-Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների բացակայությունն ու չկարգավորված հիմնահարցերը, ինչպես նաև Անկարայի աշխարհաքաղաքական հավակնությունները պահպանում են «Սառը պատերազմի» իրավիճակը և դուրս են մղում նրանց համաշխարհային քաղաքականության շրջանակներից:

Խորհրդային Միության կազմաքանդման հետևանքներից մեկը եղավ այն, որ Կովկասում երևան եկան կազմավորումներ, որոնք նույնպես հայտարարեցին իրենց սուվերենությունը և կարողացան պահել այն անգամ նախկին խորհրդային հանրապետությունների հետ ռազմական հակամարտության ընթացքում, սակայն չստացան միջազգային ճանաչում կամ ճանաչվեցին ՄԱԿ սահմանափակ թվով անդամ պետությունների կողմից: Դրանք են Աբխազիան, Հարավային Օսիան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Մոլդավիայի Մերձդնեստրյան Հանրապետությունը: Բացի այդ, XX դարի 90-ական թթ. եղան ռազմական ճանապարհով անկախության հռչակման և ինստիտուցիոնալացման մի քանի անհաջող փորձեր: Դրա ամենացայտուն օրինակը Հյուսիսային Կովկասում Իչկերիայի Չեչենական Հանրապետությունն է» [6]: Ուրիշ հեղինակների կարծիքով՝ Ռուսաստանը կատարվածին նայում է քամահրանքով և ոչ որպես վերջնական կատարված իրողության: «Մակայն նրանք լրիվ չանկախացան... ռուսները հարևան երկրներն անվանում են մոտակա արտասահման և նրանց հիմնականում վերաբերվում են որպես մոլորյալ զավակների և ոչ թե անկախ պետությունների» [7, c. 363]:

Տարածաշրջանի քաղաքական լարվածության թուլացման, պետությունների միջև բնականոն հարաբերությունների հաստատման և քաղաքակիրթ երկրների ընտանիք ներառելու գործընթացին, մեր կարծիքով, կարող էր նպաստել Բրյուսելում Եվրոպական քաղաքական հետազոտությունների կենտրոնի ծրագրի իրականացումը, որի մի քանի դրվագների շարադրանքը ներկայացնում ենք ստորև.

1. Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի լուծում (Աբխազիա, Հարավային Օսիա, Լեռնային Ղարաբաղ), համաձայն յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունների, յուրաքանչյուր ազգային-տարածքային միավորման ազգաբնակչության կամքի ազատ արտահայտության: Ստեղծվում են ազգային-տարածքային միավորումները ներկայացնող վեհաժողովներ, որոնք օժտված կլինեն օրենքներ ընդունելու իրավագործությամբ և կապահովեն այդ միավորումների քաղաքացիական, մշակութային, կրոնական իրավունքները:
2. Երկկողմ կամ բազմակողմ տարածաշրջանային համագործակցություն, մասնավորապես՝ ԵՄ-ի և ԱՊՀ-ի շրջանակներում: Հարավային Կովկասի երեք անկախ հանրապետությունները (գումարած Նախիջևանի տարածքը)՝ որպես առանձին կազմավորումներ, պետք է կարողանան մասնակցել այս համագործակցությանը: Այդուհանդերձ, դեռ վաղ է պատկերացնել նման հարաբերությունների հաստատումը տարածաշրջանային կառույցների ձևով: Հարավային Կովկասը՝ որպես ռազմավարական տարածք, չի կարող մեկուսացված մնալ համաշխարհային գործընթացներից, ուստի արտատարածաշրջանային պետությունները, ինչպես նաև տարածքային կազմակերպությունները, գտնվում են հավասարակշռված համագործակցություն հաստատելու պարտադրանքի ներքո: Համագործակցությունը պետք է միտված լինի ինչպես քաղաքական ատյանների, այնպես էլ քաղաքացիական հասարակական կազմակերպությունների մակարդակին:
3. Պատմական փորձը ցույց է տալիս, որ ազգային հիմնահարցերի առկայությունը չի նպաստում տարածաշրջանային համագործակցությանը: Սա լուրջ մարտահրավեր է, որը Հարավային Կովկասի ժողովուրդները պետք է հաղթահարեն, եթե ձգտում են տարածաշրջանում այլընտրանքային հասարակության կայացմանը, քանզի այդ արժեքների վրա հիմնված հասարակությունն ավելի ունակ է կարգավորելու ժողովուրդների միջև ազգային տարածայնությունները:
4. Եվ վերջապես, տարածաշրջանային անվտանգության համակարգը պետք է կարողանա արձագանքել Հարավային Կովկասի ժողովուրդների անվտանգության կարիքներին՝ հաշվի առնելով այստեղ մեծ տերու-

թյունների հակամարտությունների ու աշխարհաքաղաքական դիմադարձումների պատմական փորձառությունը: Ռուսաստանի և արևմտյան գերութերի, Ռուսաստանի և Թուրքիայի աշխարհաքաղաքական մրցակցությունը, հայ-թուրքական հակամարտությունն այս պատմական փորձառության ցցուն իրողություններն են: Հարավային Կովկասի անվտանգության համակարգի հիմնական տարրերը պետք է կարողանան հակազդել նման կարգի դիմադարձությանը՝ ապահովելով ժողովուրդների անվտանգությունը: Մինչդեռ առկա հիմնախնդիրների բարդությունը թույլ չի տալիս ստեղծել ընդհանուր անվտանգության համակարգ: Հարավային Կովկասի յուրաքանչյուր պետություն հոգում է սեփական անվտանգության կարիքները, և այս իրավիճակը մոտ ապագայում հնարավոր չի լինի փոխել: Մինչդեռ տարածաշրջանի ազգաբնակչությանը կործանարար ընդհարումներից պաշտպանելու միակ միջոցը պետությունների ընդհանուր չեզոքությունը պահպանելն է [8]:

Մեպտեմբեր, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Seymour T.D.*, The Life in the Homeric Age. N.Y. 2000.
2. *К.С. Гаджиев*, Геополитика Кавказа, изд. Международные отношения, М., 2003.
3. *Збигнев Бжезинский*, Стратегический взгляд. Америка и глобальный кризис, изд. АСТ, М., 2013.
4. Геополитика Каспийского региона, М., изд. «Международные отношения», 2003.
5. Внешняя политика: вопросы теории и практики, изд. Университет, М., 2009.
6. *Сергей Маркедонов*, Аналитические доклады Института Кавказа, N 5, январь 2012.
7. *Джеймс Ф. Данниген, Остин Бэй*, Горячие точки XXI века, из. ЭМСКО, М., 2014.
8. *Անդրանիկ Պետրոսյան*, Հարավային Կովկասն ու Եվրոպական քաղաքական հետազոտությունների կենտրոնական ծրագիրը, Քննական վերլուծություն, Երևան, 2013:

**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈՔԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԵՏԱԱՌԸՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

Արման Նավասարդյան

Ամփոփագիր

Նոր աշխարհակարգի մարտահրավերները և գլոբալ փոփոխություններն իրենց մեջ առան նաև Հարավային Կովկասը, որը դադարեց միայն Ռուսաստանի ազդեցության տարածք լինելուց: Տարածաշրջանում հայտնվեցին նոր դերակատարներ՝ ԱՄՆ-ը, Եվրամիությունը, Թուրքիան, Իրանը, Չինաստանը: Ի լրումն՝ Հարավային Կովկասն սկսեց դիտվել Մեծ Մերձավոր Արևելքի բաղադրյալ՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով: Տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական փոփոխությունները հիմնովին փոխում են միջազգային իրավունքի նոր սուբյեկտներ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի քաղաքական իմիջը և արտաքին քաղաքականության գործելակերպը: Ժամանակակից աշխարհի քարտեզը վերաձևելու վտանգավոր միտումների ենթատեքստում, որի հիմքում գլխավորաբար ընկած են ածխաջրածնի պաշարների վերաբաշխման նկրտումները, տարածաշրջանի դերն ավելի ու ավելի է մեծանում: Հոդվածում հեղինակը շարադրում է Հարավային Կովկասում քաղաքական լարվածության թուլացման և պետությունների միջև բնականոն հարաբերությունների հաստատման իր տեսլականը:

**ПРОБЛЕМЫ МАЛЫХ ГОСУДАРСТВ ЮЖНОГО КАВКАЗА
ПОСЛЕ ОКОНЧАНИЯ ХОЛОДНОЙ ВОЙНЫ**

Арман Навасардян

Резюме

Проблемы и вызовы нового миропорядка, а также глобальные изменения охватывают и Южный Кавказ, переставший быть сферой влияния только лишь России. В регионе появились новые акторы – США, Евросоюз, Турция, Иран, Китай. Южный Кавказ стал рассматриваться как составная часть Большого Ближнего Востока со всеми вытекающими отсюда последствиями. Геополитические и геостратегические перемены в регионе кардинально меняют политический имидж и внешнеполитическое поведение новых субъектов международного права – Армении, Грузии и Азербайджана. В контексте опасной тенденции перекройки карты современного мира, в основе которой лежит главным образом стремление к перераспределению углеводородных запасов (в ближайшем будущем и питьевой воды), роль региона возрастает. Автор статьи представляет свои соображения относительно ослабления политической напряженности на Южном Кавказе и установления нормальных отношений между государствами региона.

**THE CHALLENGES OF SMALL STATES OF THE SOUTH CAUCASUS
IN THE POST-COLD-WAR PERIOD**

Arman Navasardian

Resume

The challenges of the New World Order and global changes engulfed also the South Caucasus, which stopped being just the sphere of Russian influence. New players appeared in the region: the US, EU, Turkey, Iran, and China. Also South Caucasus started to be viewed as a part of the Greater Middle East, with all that it entails. The ongoing geopolitical and geo-strategic transformations in the region fundamentally change the political image of Armenia, Georgia and Azerbaijan as new subjects of international law, and the relevant foreign policy practices. The region plays an increasingly larger role in the context of dangerous trends to redraw the modern world map, which are based primarily on aspirations to redistribute hydrocarbon resources (and also drinking water in the near future). In the article the author presents his vision about easing the political tensions and establishment of normal relations between states.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻԵՐԱՐԽԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ՈՐՈՇ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վահագն Ագյան՝

Բանալի բառեր՝ հիերարխիա, միջազգային համակարգեր, տարածաշրջանային համակարգեր, հեգեմոնիա, անուղղակի կառավարում:

Անարխիայի կամ անիշխանության մասին թեզը շարունակում է արդիական և պահանջված մնալ ինչպես միջազգային հարաբերությունների տեսական հոլովություն, այնպես էլ արտաքին քաղաքականության վարույթի դասական «ուղղորդող» մոտեցումներում: Վերջինիս հիմնական իմաստը, իրական քաղաքականության հարթության մեջ, հանգում է նրան, որ միջազգային համակարգում սկզբունքորեն տիրապետող է անիշխանությունը: Այդ հանգամանքը, թեև մեքենայորեն չի ենթադրում բացարձակ կամ հարաբերական քառսի առկայություն միջազգային հարաբերությունների համակարգում, սակայն ելնում է այն կանխադրությից, ըստ որի՝ միջազգային ասպարեզում առայժմ չի ստեղծվել կառուցվածքային մի ինստիտուտ, որը կապահովեր միջազգային կարգուկանոնը: Գլոբալ կառավարման մեխանիզմներ և գործիքներ հիմնելու շուրջ դիսկուրսը, չնայած իր «կայուն արդիականությանը», նույնիսկ հայեցակարգային հարթության մեջ առայժմ չի առաջադրում որևէ գործնական եղանակ կամ եղանակներ՝ միջազգային անարխիայի բնույթից ծագող մարտահրավերների կասեցման կամ ծառայած հիմնախնդիրների լուծման համար: Դասական միջազգային քաղաքական դիսկուրսում ակնհայտորեն շարունակում է գերակայող մնալ ավանդական այն փաստարկը, թե «ոչ ոքի վերագրված չէ հրամայել, ոչ ոք պարտադրված չէ ենթարկվել» [1]: Նույն ավանդույթի շրջանակներում՝ Ռ.Արտը և Ռ.Ջերվիսը պնդում են, որ «անարխիան միջազգային հարաբերությունների ֆունդամենտալ փաստ է» [2]:

¹ «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ-խորհրդական, պ.գ.թ., դոցենտ:

Այդուհանդերձ, նույնիսկ ոչ շատ վաղ անցյալի հետահայաց քննումը փաստում է այն մասին, որ գործնականում հիերարխիկ կարգավորման միջպետական/միջազգային մոդելներն ու մոդուսները ոչ միայն գոյություն են ունեցել, այլև այժմ էլ առկա են և խիստ կարևոր են միջազգային և տարածաշրջանային դինամիկան հասկանալու համար: Հետսառըպատերազմյան համատեքստում, երբ նախկինում տիրապետող կանոնակարգվածությանը փոխարինելու է եկել տարածաշրջանային առանձին համակարգերի կայացումը, առավել կարևորվում են մակրոտարածաշրջանային հիերարխիկ համադրությունների դիտարկումն ու դրանց հենքում ընկած օպերացիոնալ բնույթի առանձնահատկությունների վերլուծությունը:

***Միջազգային հիերարխիայի որոշ առանձնահատուկ դրսևորումներ
«Սառը պատերազմի» ժամանակաշրջանում***

Երկրորդ աշխարհամարտից հետո, «Սառը պատերազմի» դարաշրջանում, միջազգային հարաբերությունների համակարգային մակարդակում կարգուկանոնի պահպանումը սկզբունքորեն հենվում էր այսպես կոչված երկբևեռ խստապահանջության վրա, երբ համակարգում գերակայող երկու գերտերություններ՝ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը, ստանձնել էին համաշխարհային մասշտաբով կայունության կամ գոնե՝ տարբեր աշխարհամասերում ծավալվող զարգացումների վերահսկելիության ապահովման առաքելությունը: Հիշյալ ժամանակաշրջանում միջազգային քաղաքականության հատկանշական ասպեկտներից էր հենց իրենց՝ երկու գերտերությունների կողմից անմիջական ուղղորդմամբ ստեղծված երկբևեռ հարացույցի լեգիտիմության մերժումը. թե՛ Մոսկվան և թե՛ Վաշինգտոնը պաշտոնապես չէին ընդունում միմյանց լայնարձակ հավակնությունների իրավասությունը¹: Ի տարբերություն նախորդող՝ գաղութատիրական ժամանակափուլի, երբ միջազգային խաղի կանոնները հենվում էին հիմնական դերակատարների կողմից «հաստատված կոնսենսուսի» վրա, ինչն էլ գաղափարապես ընդունելի էր համարվում առանցքային պետությունների համար, «Սառը պատերազմի» իներցիոն մտածողությունն իրականում հույսեր չէր ներշնչում «խաղաղ գոյակցության» հեռանկարների պարագայում: Թեև բանականության սահմանները չհատող,

¹ R. Cooper, The Post Modern State and the World Order, Demos 2000, pp. 12-13.
<http://www.demos.co.uk/publications/thepostmodernstate>

սակայն խորհրդա-ամերիկյան գլոբալ մրցապայքարի հենքում ընկած էին միմյանց ներքաղաքական և տարածաշրջանային համակարգերի վերջնական քայքայումը և սեփական ազդեցության տարածումն այդ աշխարհամասերում:

Դրա հետ մեկտեղ, երկրներ աշխարհակարգը՝ իրեն բնորոշ բոլոր հակասություններով և վտանգներով հանդերձ, միջազգային հարաբերությունների համադրությամբ սկզբունքային փոխակերպումներ սանձազերծեց՝ ներազդելով միջազգային կառուցվածքի ուժերի դասավորվածության ու հարաբերակցության, հիերարխիկ կազմակերպման, ինչպես նաև համակարգի միասնության կամ հետերոգեն որակի վրա [3, с. 185-186]: Հարկ է միաժամանակ նշել, որ միջազգային հարաբերություններում տասնամյակներ շարունակ գերակայող դասական ռեալիստական մոտեցումները, որոնք շաղկապված էին ազգային շահի առաջնահերթության և անվտանգության դիլեմայի գաղափարների հետ, ընկալվում էին իբրև «հարց լուծող» մի համադրությի տարր:

Այդուհանդերձ, սառըպատերազմյան շրջանում թե՛ ամերիկյան և թե՛ խորհրդային արտաքին քաղաքականությանը բնորոշ լեյթմոտիվներից մեկն էր՝ սկզբունքորեն հակառակվել գաղութատիրական մոտեցմանը. Բրիտանական կայսրության նախկին աշխարհաքաղաքական ըմբռնումներն անընդունելի համարվեցին ինչպես նորմատիվային և քաղաքական, այնպես էլ օպերացիոնալ տեսանկյուններից [4]: Ուղղակի գործողության ձևաչափն, իբրև արտաքին քաղաքականության իրագործման եղանակ¹, դադարեց օրակարգային լինել՝ նկատի ունենալով ինչպես համաշխարհային փոխակերպումների դինամիկան, այնպես էլ երկու գերտերությունների միջև ծավալվող մրցապայքարի յուրահատկությունը: Ի տարբերություն գաղութատիրական շրջանի անմիջական և ուղղակի գործողության ռազմավարության, ինչն, օրինակ, բնորոշ էր Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի քաղաքականությանն աֆրիկյան և ասիական տարածքներում², նոր ժամանակներում արտաքին ներգրավման և միջամտության սխեմաները զգալի փոխակերպումներ վերապրեցին: Ինքնիշխանության, ինչպես նաև համահավասարության ճանաչումը որպես ժամանակակից միջպետական հարաբերությունների ֆորմալիզացված նորմ՝

¹ А. Журавлев, Параметры эффективности внешней политики в зарубежной литературе, *Международные процессы: журнал теории международных отношений и мировой политики*, <http://www.intertrends.ru/twelfth/006.htm>

² Նույն տեղում:

նշանակալիորեն ձևափոխեց (մակրո)տարածաշրջանային զարգացումների և գործընթացների վերահսկողության կանոնները և ըմբռնումները [5]:

Նորագույն ժամանակաշրջանի կարևորագույն հատկանիշներից մեկը դարձավ ուժային բևեռների շուրջ կազմավորված պետությունների խմբավորումներում համապատասխան կարգապահության ապահովումն ուժային կենտրոնների կողմից՝ սահմանելով վերահսկողության ինչպես ինստիտուցիոնալացված, այնպես էլ *ad hoc* մեխանիզմներ: Ի տարբերություն կայսերապաշտության դասական շրջանի, երբ տարածական ծավալման ու քաղաքական կոնսոլիդացման գլխավոր շարժառիթներից էր ռեսուրսների ներհոսքը գաղութներից դեպի մետրոպոլիս, կամ, ըստ Դ.Լեյկի, համակարգային մրցապայքարի օրենքները [6], նորագույն ժամանակներում հենց երկու գերտերություններն էին ահռելի ռեսուրսներ ծախսում «սեփական» ազդեցության գոտիները պահելու նպատակով: Այլ խոսքերով, լայնածավալ միջոցներ էին ուղղվում ազդեցության գոտիներում ու կախյալ տարածքներում, ինչպես նաև դաշնակից պետությունների սոցիալական և քաղաքական կայունության ապահովման վրա: Ակնհայտ է, որ շահերի գոտում գտնվող պետությունների ներքին կայունության, հարատևության (քաղաքական, սոցիալական, տնտեսական) և արտաքին անվտանգության ապահովման վրա ծախսվող գումարներն ու ռեսուրսներն ավելի լայն՝ աշխարհաքաղաքական բնույթի գործառույթի արտահայտիչ էին. տարածաշրջանային զարգացումների ու դինամիկայի կառավարելիության և վերահսկողության, ինչը, հասկանալի է, էական ծախսեր էր ենթադրում:

Օրինակ, Երկրորդ աշխարհամարտից հետո ԽՍՀՄ-ի կողմից Արևելյան և Կենտրոնական Եվրոպան մոնոլիթ և կառավարելի վերահսկողության ներքո պահելու համար ահռելի ծախսեր պահանջվեցին: Այսպես, ըստ որոշ հաշվարկների, եթե սկզբնական շրջանում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից դեպի ԽՍՀՄ արտահանվող ընդհանուր ռեսուրսները և կապիտալը կազմում էին մոտ \$1 մլրդ տարեկան, ապա արդեն 1980-ական թթ. դրությամբ ԽՍՀՄ-ն էր սուբսիդավորում այդ պետությունների տնտեսությունները՝ տարեկան մոտ \$17 մլրդ ծավալով. Տնտեսական փոխօգնության երկրներին Մոսկվան սկսեց ամենամյա դոտացիաներ և սուբսիդիաներ հատկացնել՝ խորհրդային բլոկի միասնականության և կապերի պահպանման նպատակով [7]:

Ըստ էության, «Մառը պատերազմի» ժամանակաշրջանից ի վեր բյուրեղացան միջպետական հարաբերությունների դասական՝ անարխիկ ընկալմանը որոշ իմաստով հակասող միջպետական հարաբերությունների ժամանակակից համադրություններ, որոնք, թերևս, դժվար կլինեն միանշանակ որակել պարզապես իբրև կայսերապաշտական կամ հեգեմոնիստական: Խոսքն այստեղ հիերարխիկ միջազգային հարաբերությունների երևույթի մասին է, որը (չնայած իր պատմական նախադեպերի առկայությանը՝ ի դեմս հին Չինաստանի կայացրած մակրոտարածաշրջանային հարացույցի [8]) նորագույն ժամանակներում ստացավ կարգավիճակային և օպերացիոնալ նոր ըմբռնում:

***Հիերարխիան և միջազգային հարաբերությունների համակարգը.
արդիական ըմբռնումներ***

Միջազգային հիերարխիայի վերլուծական և կիրառական կարևորությունը պայմանավորված է մի քանի առումներով:

Տեսական մակարդակում հիերարխիայի երևույթը միջազգային հարաբերությունների ասպարեզում կարևոր վերլուծական և հայեցակարգային հեռանկարներ կարող է բացել մի քանի տեսանկյուններից: Նախ, ակադեմիական, նաև քաղաքական դիսկուրսում, որն ակնհայտորեն գտնվում է (նեո)ռեալիստական՝ «հարց լուծող» [9] տրամախոսության ազդեցության ներքո, միջազգային հարաբերությունների ոլորտում ընթացող գործընթացները գլխավորապես դիտարկվում են որպես համակարգային գործոնների փոխազդեցության արդյունք: Ընդունելով անարխիայի մասին թեզն իբրև միջազգային քաղաքականության առաջնորդող սկզբունք՝ բազմաթիվ և գերակայող են այն տեսական և հայեցակարգային մոտեցումները, որոնք միջազգային հարաբերությունների շարժիչ ուժերի շարքին են դասում հիմնականում «անդեմ» կառուցվածքային բնույթ կրող ֆենոմեններ, ինչպիսիք են ուժերի կոնֆիգուրացիան, դրանց դասավորվածության ընդհանուր համակարգային առանձնահատկությունները, անվտանգության դիլեման և այլն: Այս համատեքստում միջազգային հարաբերությունների դինամիկան հիերարխիկ համադրույթի հեռանկարում քննելը կարող է առաջին պլան բերել ոչ միայն և ոչ այնքան այլընտրանքային դիտակետ, որքան զգալիորեն ընդլայնել հետազոտական բազան. միջազգային հարաբերությունների նյութական ռեսուրսներ

րից և նյութականացված ընկալումներից (որոնք ինքնին միջազգային հիերարխիայի հենքային նախապայման են) զատ՝ տեսական տիրույթ ներմուծելով իշխանության, լեզվատիրության և ինքնության փոփոխականները: Մոտ լինելով կոնստրուկտիվիստական հարացույցին [10]՝ միջազգային հիերարխիայի հայեցակարգը կարող է նաև կարևոր կամուրջ ստեղծել արտաքին քաղաքականության տեսության հետ:

Քաղաքականության վերլուծության մակարդակում հիերարխիկ համատեքստում միջազգային գործընթացների և երևույթների դիտարկումն ու քննումը կարևորվում են մի քանի առումներով: Նախ, հիերարխիկ մոդուսի հիմքում ընկած տրամաբանությունն ավելի մեծ չափով է միտված օգտագործելու և հենվելու հետազոտության քանակական մեթոդների վրա, ինչը շահեկանորեն տարբերվում է արտաքին քաղաքականության վերլուծության ավանդական որակական եղանակներից: Դիտարկվող երևույթները հիերարխիկ համակարգում համեմատաբար ավելի առարկայական բնույթ են կրում: Դրա հետ մեկտեղ, հիերարխիայի համատեքստում միջազգային զարգացումների վերլուծումը հարաբերականորեն ավելի հստակ սահմաններ է գծում համապատասխան ժամանակափուլերի միջև:

Հիերարխիան միջազգային (միջպետական) հարաբերությունների ասպարեզում բնորոշվում է որպես սոցիալական ստրատիֆիկացիայի մի իրավիճակ [11]: Մի կողմից՝ այն կարող է դիտարկվել որպես միջազգային հարաբերություններում առկա *որոշակի դրության* ստատիկ նկարագրման միջոց և «ձևաչափ»՝ նկատի ունենալով միջազգային համակարգի հիմնական դերակատարների՝ պետությունների կարգավիճակային տարբերությունները միմյանց նկատմամբ (իրավաբանորեն բոլոր պետությունները հավասար են, սակայն «որոշներն ավելի հավասար են, քան մյուսները» [12]), բայց այն նաև կարող է օպերացիոնալ բնույթ կրել՝ արտացոլելով և ներառելով նաև հիերարխիկ հարաբերությունների (փոխակերպման) դինամիկան, փոփոխականներն ու ոլորտային ինդիկատորները (ցուցիչները):

Ըստ Ռ.Արոնի, միջազգային համակարգերին բնորոշ են երեք կառուցվածքային չափումներ. ուժերի կոնֆիգուրացիան (դասավորվածությունը), դերակատարների միջև հիերարխիայի առկայությունը և մասնակից դերակատարների միատարրությունը կամ ընդհակառակը՝ դրանց տարբերակվածու-

թյունը միմյանցից [3, c. 185]: Հիերարխիան, ըստ հեղինակի, արտացոլում է դերակատարների միջև ռազմական, տեխնոլոգիական, տնտեսական, քաղաքական, ռեսուրսային, գաղափարախոսական և միջազգային համակարգի վրա ազդեցության այլ միջոցների տեսանկյունից առկա իրական անհավասարությունը [3, c. 185]:

Ինչպես վերև արդեն նշվեց, միջազգային հարաբերությունների գրեթե բոլոր տեսություններն ու դպրոցները ելնում են միջազգային ասպարեզում տիրապետող անարխիայի անփոփոխ կանխադրույթից. թերևս, միակ բացառությունն այս շարքում կոնստրուկտիվիստներն են, որոնց համար թե՛ անարխիան և թե՛ հիերարխիան միջազգային հարաբերությունների «*a priori*» կանխորոշված ֆենոմեն չեն, այլ պետությունների կողմից ձևավորվող հնարավոր իրողություն: Ինչ վերաբերում է միջազգային ասպարեզում հիերարխիայի հայեցակետի կողմնակիցներին, ապա նրանք հարում են տարբեր տեսական և դոկտրինալ դպրոցների, ինչպիսիք են, օրինակ, իշխանության տրանզիտի տեսությունը կամ անգլիական դպրոցի «միջազգային հասարակության/հանրության» հարացույցը: Առավել ընդհանուր՝ տարբերակվում է միջազգային հիերարխիայի երկու տիպ՝ «հարկադրանքի» վրա հիմնված և «կամայականության» սկզբունքի վրա խարսխված համակարգեր¹: Առաջինն առանձնանում է հարկադրանքի ուժի (այդ թվում նաև ուղղակի ուժի օգտագործման) ներքո ապահովվող աստիճանակարգված ռեժիմների պահպանմամբ, մինչդեռ երկրորդը՝ գերակայող պետության իշխանության կամայական ընդունման սկզբունքով: Որպես կանոն՝ դիսկուրսիվ և սեմանտիկ առումներով հիերարխիկ համակարգերի ժամանակակից ընկալումը չի ենթադրում ուղղակի կայսերական վերահսկման կամ անմիջական (արտաքին) կառավարման եղանակների գոյություն, այլ միջնորդավորված կամ «պայմանագրային» իշխանական լիազորությունների առկայություն, որոնք ընդունվում են որպես այդպիսին թե՛ գերակայող և թե՛ սուբորդինացիոն հարաբերություններում գտնվող պետությունների կողմից [13]:

Միջազգային հարաբերությունների ասպարեզում, հիերարխիկ եղանակների գործնական փորձից անկախ՝ սոցիալ-քաղաքական համատեքստում աստիճանակարգված համակարգերն ունեն մի շարք ընդհանուր բնույ-

¹ Հարկ է նշել, որ միջազգային հիերարխիկ հարաբերությունները չեն կարող ուղղակիորեն համարվել կամ հավասարազոր համարվել կայսերական կառավարման եղանակներին:

թի առավելություններ և թերություններ: Նախևառաջ, հարկ է նշել, որ հիերարխիկ համակարգերին բնորոշ գլխավոր առավելություններից է աշխատանքի բաժանման (մասնագիտացման) առանձնահատկությունը, ինչը հնարավորություն է ընձեռում իրականացնել լայնածավալ նախագծեր և աշխատանքներ: Լեզվափոխության և ռեսուրսների միակցումը, ինչպես պատմական փորձն է փաստում, հնարավորություն է ընձեռել նշանակալի ծավալների գործեր գլուխ բերել: Երկրորդ առավելությունը հանգում է այն հանգամանքին, որ համակարգի մասնակիցների բարձր ինտեգրումը և տրանսակցիոն ցածր ծախսերը (ինչը պայմանավորված է հիերարխիկ համակարգի մասնակիցների համոզմամբ և ձգտմամբ՝ կենտրոնանալ բացարձակ, այլ ոչ հարաբերական շահերի ու նպատակների վրա) ոչ միայն դուրսին են դարձնում համագործակցությունը մասնակիցների միջև, այլև նպաստում են ապագային միտված ռազմավարական ներդրումների իրականացմանը: Նման համակարգերում, նկատի ունենալով բևեռայնության բարձր աստիճանը, քիչ հավանական է, որ հակասությունները հատեն բացահայտ և ուղիղ բռնության կիրառման շեմը [14]: Անշուշտ, առավելությունների հետ մեկտեղ, հիերարխիկ համակարգերն ունեն նաև խոցելի կողմեր. եթե, օրինակ, կոնֆլիկտն, այդուհանդերձ, դուրս գա վերահսկելիության սահմաններից, ապա, հաշվի առնելով մասնակիցների ինտեգրման բարձր աստիճանն ու ներդրված «համատեղ» ռեսուրսների ծավալները՝ դրա հետևանքները շատ ավելի ծանր կարող են լինել, քան այլ պարագայում [14]:

Չուտ տեսականորեն, զարգացած երկրներում կոմերցիոն պայմանագրերն արտացոլում են այն կատարյալ գործառույթային համադրույթը, որ բնորոշ է հիերարխիկ համակարգին. մշտադիտարկում (մոնիթորինգ), վեճերի կարգավորում և կանոնների պարտադրում [15]: Մասնավոր հատվածում հիերարխիկ կառույցի ի հայտ գալը պայմանավորված է, մի կողմից, կողմերի ձգտմամբ՝ կրճատել տրանսակցիոն ծախսերը՝ թերի տեղեկացվածության պայմաններում (նույնիսկ հիերարխիկ համադրույթի շրջանակներում մշտադիտարկման և կանոնակարգման գործառույթները սահմանափակ բնույթ են կրում, ինչը, ըստ բրիտանացի գիտնականների, հաճախ հանգեցնում է իրավասություններից դուրս միջամտության սպառնալիքի [16]), իսկ մյուս կողմից՝ կայուն ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծման անհրաժեշտու-

թյամբ՝ կենտրոնանալով երկարաժամկետ, կանխատեսելի և բացարձակ ընդհանուր շահերի վրա: Նոբելյան մրցանակակիր Օ.Վիլյամսոնի՝ մասնավոր հատվածում տեղի ունեցող վերոհիշյալ երևույթի շարժառիթների և առանձնահատկությունների բացատրությունը [17] մի շարք գիտնականների համար հիմք հանդիսացավ առաջ քաշելու այն գաղափարը, թե միջազգային հարաբերություններում ևս առկա են հիերարխիկ փոխկախվածության առանձնատիպեր: Ի տարբերություն մասնավոր ոլորտի, սակայն, միջազգային հարաբերություններում առաջնային «ապրանք» է համարվում պետական *անվտանգությունը*, ինչպես նաև սոցիալական և տնտեսական բարօրությունը, որոնք էլ ենթակա են հիերարխիկ բաշխման տրամաբանությանը. «միջազգային հարաբերությունները հիշեցնում են մասնավոր ընկերությունների աշխարհ՝ այն առումով, որ անվտանգության ապահովումը կարող է պահանջել անարխիայի (շուկայական) փոխարինում հիերարխիկ կառավարման կառույցներով (մասնավոր ընկերություն)» [18]:

Բացի այդ, ակնհայտ է, որ հիերարխիկ կառույցների՝ լինեն դրանք կուռ կազմակերպություններ, թե երկկողմ համաձայնությունների վրա հիմնված ձևաչափեր, կառավարմանը և համակարգմանը հատկացվող ծախսերը զգալի են և կրում են հարատև բնույթ: Սուբորդինացված հարաբերություններում գտնվող երկրների պարագայում արտաքին ուժային կենտրոնի լեգիտիմության և իշխանության ընդունումը, անշուշտ, որոշակի զին ունի, որը կարող է ինչպես իր տնտեսական, այնպես էլ քաղաքական արտացոլումն ունենալ: Օրինակ, ըստ Կ.Չենկոկի [19]՝ հիերարխիկ համակարգին բնորոշ ծախսերն ու շահերը հետևյալ կերպ կարող են բաշխվել.

	Շահեկան գործոններ	Ծախսային գործոններ
<i>Ենթակա պետություն</i>	ա. Ֆինանսական օժանդակություն բ. Ռազմական օժանդակություն	ա. Անհամատեղելի քաղաքական նախընտրությունների համադրում բ. Ներքաղաքական կորուստներ
<i>Գերակայող պետություն</i>	ա. [ենթակա պետության] քաղաքականության ավելի մեծ վերահսկում բ. Ներքաղաքական առավելություններ	ա. Ֆինանսական ծախսեր բ. Պարտավորություններ գ. Միջազգային քաղաքական ռիսկեր

Հիերարխիկ համակարգերի առանձնահատկությունները տարածաշրջանային մակարդակում

Հիերարխիայի երևույթը միջազգային հարաբերությունների ասպարեզում, հայեցակարգային առումով, ելնում է պարամետրիկ երկու հանգուցային չափումների առկայությունից. *նյութական* բնույթի անհամաչափության (օրինակ՝ ռազմական և տնտեսական բնագավառներում) և *քաղաքական* (իշխանության) հարաբերություններում առկա անհավասարության գործոնների հարատև բնույթից: Էմպիրիկ տեսանկյունից, թեև տարածաշրջանային հիերարխիկ համակարգերի միջև գոյություն ունեն (ունեցել են) նշանակալի տարբերություններ հիերարխիայի ձևավորման և պահպանման առումով, սակայն ընդհանուր «տարածաշրջանային հիերարխիկ համակարգը կարող է բնորոշվել որպես տարածաշրջանային միջազգային համակարգ, որը բաղկացած է միակ Մեծ տերությունից և մի շարք համեմատաբար փոքր պետություններից» [20, p. 18]: Ըստ Զիմերմանի, տարածաշրջանային համակարգի գոյության մեկ այլ կարևոր իրողություն է այն, երբ որոշումներ կայացնողները մտածում են, որ այն (համակարգը) որպես այդպիսին գոյություն ունի և համապատասխան վարքագիծ են դրսևորում, ինչպես, օրինակ, Ամերիկյան պետությունների կազմակերպության կամ Արևելյան Եվրոպայի երկրների՝ Վարշավյան պայմանագրի անդամակցության պարագայում [20, pp. 19-20]:

Վերոհիշյալի համատեքստում հարկ է որոշակիորեն տարբերակել միաբնեռությունը, հեգեմոնիան և հիերարխիան: Միաբնեռության ներքո գլխավորապես հասկացվում է նյութական միջոցների և ռեսուրսների համակենտրոնացման փաստը, մինչդեռ հեգեմոնիան, նյութական հենքից բացի, ներառում է ոչնյութական (գաղափարական, արժեքային և նորմատիվ) գործոնների ամբողջություն: Այս լույսի ներքո հիերարխիան՝ որպես միջազգային հարաբերություններում տեղ գտնող երևույթ, ավելի շատ շեշտադրում է ոչ միայն ֆորմալ, այլ նաև հարաբերական (փոփոխվող) իշխանական հարաբերությունների առկայությունը գերիշխող նկրտումներ և ներուժ ունեցող պետության ու վերջինից որոշակի կախվածության մեջ գտնվող երկրների միջև:

Հիերարխիայի և տարածաշրջանային համակարգերի միջև կապի մասին խոսելիս նախևառաջ հարկ է նկատի ունենալ այն պարզ հանգամանքը, որ հիերարխիկ հարաբերություններն առաջին հերթին կրում են երկկողմ բնույթ

(*dyadic*). դրանք հարաբերությունների տեսակ են, երբ մեկ պետություն ընդունում է մյուսի դոմինանտ դերն ու կարգավիճակը առկա համակարգի շրջանակներում: Սակայն գերակայող պետության նմանատիպ կամ համանման հարաբերությունները մի շարք պետությունների հետ, որոնք աշխարհագրորեն գտնվում են մեկ ընդհանուր (մակրո)տարածաշրջանում, կարող են հիմքեր ստեղծել տարածաշրջանային հիերարխիկ համակարգի կայացման համար: Բացի քաղաքական չափումից, որն ակնհայտորեն փոխկապված է դոմինանտ տերության միջազգային լեգիտիմության հետ, ըստ Դ.Լեյկի, հիերարխիկ հարաբերությունները երկու դերակատարների միջև ստեղծում են այսպես կոչված մասշտաբի էկոնոմիա (*economies of scale*), ինչը մեքենայաբար, մի կողմից, էապես իջեցնում է հետագա ծավալման ծախսերը, իսկ մյուս կողմից՝ ինքնախթան ընդլայնման հիմքեր է ստեղծում: Ավելի պարզ ասած, եթե հեզեմոն տերությունն ի սկզբանե որոշակի լայնածավալ ծախսեր է իրականացնում սուբորդինացվող պետության պարագայում (օրինակ, ԱՄՆ-Պանամա. ռազմաբազայի ստեղծում, համապատասխան ենթակառուցվածքների ապահովում, տնտեսական և ֆինանսական այլ կարգի ծախսեր), ապա հարակից պետությունների պարագայում հիերարխիկ հարաբերությունների հաստատումը, հասկանալի պատճառներով, ավելի նվազ ծախսեր կարող է պահանջել (օրինակ, Պանամայում տեղակայված ակտիվների՝ լինեն դրանք նյութական, թե մարդկային, օգտագործումը հարակից պետություններում) [21]:

Տարածաշրջանային համակարգերը՝ հեզեմոն պետության կողմից հիերարխիկ կառավարման սխեմաների գործնականացման առանձնահատկությունների հետ մեկտեղ, որոշակի սկզբունքների վրա են հենվում: *Ուժային հավասարակշռության* և կոնֆլիկտային հարաբերությունների տիրապետմամբ տարածաշրջաններին, ըստ Բուզանի և Վեիվերի, հատկանշական է «անվտանգության ոլորտում փոխկախվածությունը միմյանցից, որն իր առարկայական ձևն է ստանում պատերազմի սպառնալիքի կամ քաղաքական հարաբերություններում ուժի կիրառման սպառնալիքի ներքո» [22]: Սակայն անվտանգության համակարգերը կարող են նաև արժեքային այլ հենքի վրա կառուցվել, ինչպես, օրինակ, Հյուսիսային Ամերիկայում և Եվրոպայում գոյություն ունեցող *անվտանգության հանրությունը (բազմակարծիք, պլյուրալիստական)* կամ *անվտանգության ռեժիմները* և *ուժային «համերգը»* (Հարավային Ամերիկա):

Հետխորհրդային տարածաշրջանը, որը դիտարկվում է որպես առանձին անվտանգության համակարգ, բնորոշվում է իբրև միաբնեռ «անվտանգության ռեժիմ/Ռուսաստանի հեգեմոնիայի ներքո գտնվող համակարգ» [23]:

Մեր կարծիքով, նկատի ունենալով նաև Խորհրդային Միության կազմալուծումից ի վեր կենտրոնական Եվրասիայում ծավալվող զարգացումների դինամիկան և կառուցվածքային առանձնահատկությունները [24], հնարավոր է «դուրս բերել» տարածաշրջանային հիերարխիայի մի շարք չափումներ: Նախ, տարածաշրջանային համակարգի (առաջին հերթին՝ անվտանգության համակարգի) առկայությունը և նյութական ռեսուրսների անհամաչափության փաստը, որն առկա է մի կողմից՝ ՌԴ-ի, իսկ մյուս կողմից՝ հետխորհրդային բոլոր հանրապետությունների ողջ ներուժի միջև: Ըստ Ա.Հարելի, միջազգային ասպարեզի կարևոր համակարգային հատկանիշներից է երկրներանքի գոյությունն ուժային հավասարակշռման կամ անհավասար (հիերարխիկ) հարաբերությունների միջև, որոնք, ի թիվս այլ հանգամանքների, պայմանավորված են հեգեմոն տերության դեմ բալանսավորման քաղաքականության անհնարությամբ [25, p. 120]: Մի շարք ամերիկյան փորձագետների և գիտնականների՝ դեռ 2000-ական թթ. կեսերին առաջ քաշած փաստարկները պնդում էին, որ հետխորհրդային պետությունների կողմից միացյալ ուժերով հիպոթետիկ ուղղակի հավասարակշռումն ընդդեմ Ռուսաստանի պարզապես անհեռանկարային է՝ գոյություն ունեցող ռեսուրսային անհամաչափության համատեքստում. «ռազմական հզորության միջինացված ցուցիչները փաստում են, որ տարածաշրջանը հակված է հեգեմոն գերիշխանության այնպես, ինչպես 1995թ. դրությամբ. Ռուսաստանի հարևաններից և ոչ մեկը չի հաջողել որևէ նշանակալի չափով մեծացնել իր հարաբերական ռազմական ներուժը» [26]:

Երկրորդ՝ տարածաշրջանային հիերարխիկ հարաբերությունների հանգուցային ցուցիչներից են քաղաքականությունների (արտաքին, պաշտպանական, սոցիալ-տնտեսական և այլ բնագավառներ) համադրման (*policy convergence*) աստիճանն ու պարամետրերը՝ գերակա պետության ռազմավարական շահերի առանցքի շուրջ: Չնայած հիշյալ չափման բարդ և համալիր բնույթին՝ քաղաքականության համադրումն էական է դառնում գերակա պետության կողմից կա՛մ ստիպողական և ուժային միջոցների կիրառման պարագայում, կա՛մ էլ՝ տարածաշրջանային մակարդակում գործող որոշակի կանոնների և ինստիտուտների գործնականացման միջոցով: Վերջիններիս հենքում ընկած է

հիերարխիկ պետության գերակա շահը, որին հետևելու մյուս պետությունների փաստացի քաղաքականությունը պայմանավորված է ոչ այնքան պարտադրանքի ուժով, որքան քաղաքական հեղինակությամբ (իշխանությամբ): Հետխորհրդային տարածաշրջանում՝ արտաքին քաղաքական առաջնահերթությունների և հիմնական ուղղությունների որոշման տեսանկյունից խիստ կարևորվում է կառուցվածքային ուժի կամ հզորության գործոնը, որի առկայությունը գորեղ մակրոլծակ է՝ ներագդելու փոքր պետություններից ակնկալվող ուղեգծի որդեգրումն ապահովելու գործում: Կառուցվածքային հզորության հայեցակարգ ասելով, ընդհանուր առմամբ, հասկանում են հետևյալ բաղադրիչների առկայությունը (որպես այս կամ այն պետության արտաքին քաղաքականության ռեսուրս՝ միտված որոշակիորեն վերահսկելու իր միջավայրը)՝ անվտանգություն, արտադրություն, վարկեր և ֆինանսական ներուժ, գիտելիքներ ու գաղափարներ [27]: Թեև տարբեր ուժային կենտրոններ տարբեր չափով և տատանվող հաջողությամբ են կիրառում իրենց կառուցվածքային հզորությունը՝ որոշելու հետխորհրդային երկրների քաղաքական նախընտրություններն ու արտաքին քաղաքական վարքագիծը, սակայն շատ բան կախված է կառուցվածքային ազդեցության ինստիտուցիոնալացման աստիճանից: Մ.Մուստանդոյի կարծիքով, հեգեմոն տերությունները ոչ միայն ձգտում են գերակայել այլ պետությունների նկատմամբ, այլև ավելի շատ հասնել նրան, որ մյուս մեծ տերություններն ընդունեն իրենց կողմից տվյալ միջազգային համակարգում խաղի կանոնների որոշման փաստը [25, p. 123]: Այս տեսանկյունից, Եվրասիական միության ստեղծումն ու ինստիտուցիոնալ ամրապնդումը միտված են ՌԴ կառուցվածքային ներագդեցության ամրապնդմանը, ինչն իր հերթին նպատակաուղղված է քաղաքականությունների համադրման գերխնդրի ապահովմանը: Էմպիրիկ փորձը փաստում է, որ շատ հզոր պետություններն իրականում առանձնակի հակված չեն առաջ մղելու տարածաշրջանային ինստիտուցիոնալացումը, քանի որ իրենց առաջնային արտաքին քաղաքական նպատակներին ավելի դյուրին է հասնել միակողմանի կամ երկկողմ ռազմավարությունների միջոցով [28]: Մակայն, դրա հետ մեկտեղ, հարկ է նկատի ունենալ, որ տարածաշրջանային հիերարխիայի պահպանման ծախսերի շարքում ներառվում է նաև ներտարածաշրջանային և արտատարածաշրջանային (միջազգային) լեգիտիմության ապահովման խնդիրը:

Մեյսունքեր, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *K. Waltz*, Theory of International Politics: Reading, MA: Addison-Wesley, 1979, p. 88.
2. *R. Art, R. Jervis*, International Politics, second edition, Boston, 1986, p. 7.
3. *П.Цыганков*, Теория международных отношений, Гардарики, М., 2002.
4. *Ольга Власова*, Теория развитого капитализма, *Эксперт*, No7 (501), 20 фев. 2006.
5. *K. Holsti*, Taming the Sovereigns: Institutional Change in International Politics, UK: Cambridge University Press, Cambridge 2004, pp. 26-29.
6. *D. Lake*, Imperialism: Political Aspects, *International Encyclopedia of the Social & Behavioral Sciences*, 2001, Elsevier Science Ltd, pp. 7232-7234.
7. *D. Lake*, Beyond Anarchy: the Importance of Security Institutions, *International Security*, 2001 Summer (26:1), p. 140.
8. *D. Kang*, Hierarchy in Asian International Relations: 1300-1900, *Asian Security*, vol. 1, no. 1, January 2005, pp. 53-79.
9. *A. Murrey*, Reconstructing Realism: Between Power Politics and Cosmopolitan Ethics, UK: Edinburgh University Press, 1997, p. 177.
10. *A. Wendt*, Social Theory of International Politics, UK: Cambridge University Press, Cambridge, 1999.
11. *G. Evans and J. Newnham*, The Penguin Dictionary of International Relations, The Penguin Books, 1998.
12. *J. Rasset, H. Starr*, World Politics. Menu for Choice, (1981) San Francisco, p. 79.
13. *K. Weber*, Hierarchy Amidst Anarchy: Transaction Costs and Institutional Choice, State University of New York, Albany, 2000, pp. 5-6.
14. *R.H. Lieshout*, Between Anarchy and Hierarchy: A Theory of International Politics and Foreign Policy, Edward Elgar Publication, 1995, p. 108-109.
15. *E. Erikson and J.M. Parent* (2007), Central Authority and Order, *Sociological Theory*, 25:3, pp. 245-267.
16. *J. Parent, E. Erikson*, Anarchy, Hierarchy, and Order, *Cambridge Review of International Affairs*, Volume 22, Number 1, March 2009, pp. 129-130.
17. *Williamson, Oliver*, The Economic Institutions of Capitalism: Firms, markets, relational contracting, New York: Free Press, 1985.
18. *K. Weber*, Hierarchy amidst Anarchy: A Transaction Costs Approach to International Security Cooperation, *International Studies Quarterly*, 1997, 41(2), p. 329.
19. *K. Hancock*, Surrendering Sovereignty: Hierarchy in the International System and the FSU, University of California, San Diego, 2001, p. 57.
20. *W. Zimmerman*, Hierarchal Regional Systems and the Politics of System Boundaries, *International Organizations* (Dec. 1972), vol. 26, issue 01.
21. *D. Lake*, Entangling Relations: American Foreign Policy in its Century, Princeton, NJ: Princeton University Press, 1999, pp. 44-49.
22. *B. Buzan, O. Waever*, Regions and Powers: the Structure of International Security, Cambridge University Press, 2001, p. 489.
23. *D. Lake*, Regional Hierarchy: authority and local international order, *Review of International Studies* / Volume 35 / Supplement / February 2009, p. 54.
24. *V. Aglyan*, Dimensions of International Hierarchy in the post-Soviet space: analytical approaches and empirical reflections, *Harbinger of RUPF: International Relations*, 2014, N3, pp. 85-92.

25. *T. Inoguchi and P. Bacon*, Empire, hierarchy, and hegemony: American grand strategy and the construction of order in the Asia-Pacific, *International Relations of the Asia-Pacific*, vol. 5 (2005).

26. *W. Wohlforth*, Revisiting Balance of Power Theory in Central Eurasia, in *Balance of Power: Theory and Practice in the 21st Century*, ed. T.V. Paul, J.J. Wirtz and M. Fortmann, Stanford University Press, Stanford 2004, p. 228-229.

27. *D. Averde* (2009), Competing Rationalities: Russia, the EU and the “Shared Neighbourhood”, *Europe-Asia Studies*, 61:10, p. 1703.

28. *A. Hurrel* (2004), Hegemony and regional governance in the Americas, Global Law Working Paper (05), NY: NYU School of Law [el-version].

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻԵՐԱՐԽԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՈՐՈՇ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վահագն Ազյան

Ամփոփագիր

Միջազգային հարաբերությունների տեսական ուղղությունների մեծ մասի ավանդական թեզը հիմնվում է միջազգային հարաբերություններում անարխիայի կանխադրույթի վրա, որը ենթադրում է ոչ թե քառս պետությունների միջև հարաբերություններում, այլ, ավելի շուտ, գլոբալ կառավարման ինստիտուցիոնալորեն ճանաչված մի ինչ-որ մեխանիզմի բացակայություն: Միևնույն ժամանակ, ինչպես արդի միջազգային հարաբերությունների իրողությունները, այնպես էլ դրանց պատմական հեռանկարը վկայում են այն մասին, որ հիերարխիայի ֆենոմենը միջպետական հարաբերություններում ոչ միայն գոյություն ունի, այլև բավական արդիական է: Միջազգային հարաբերությունների հիերարխիկ համակարգը և դրանց տարածաշրջանային չափումներն ընդհանուր առմամբ բխում են դոմինանտ պետության և փոքր երկրի միջև ասիմետրիկ փոխհարաբերությունների պրակտիկայից, ինչը միջնորդավորված կերպով ընդունում է «հեզեմոն» պետության հետ երկկողմանի հարաբերությունների սուբորդինացիոն բնույթ: Միջազգային հարաբերություններում հիերարխիայի կարևոր ասպեկտ են հանդիսանում հիերարխիկ համակարգի պահպանման պայմանները, որոնք ներկայանում են իբրև այս կամ այն համակարգի օպերացիոնալ և քանակական չափումներ:

О НЕКОТОРЫХ СТРУКТУРНЫХ ОСОБЕННОСТЯХ ИЕРАРХИЧНЫХ МЕЖДУНАРОДНЫХ СИСТЕМ

Ваагн Аглян

Резюме

Традиционный тезис большинства теоретических направлений международных отношений основывается на постулате анархии в МО, предполагающем не хаос в отношениях между государствами, а скорее отсутствие некоего институционально признанного механизма глобального управления. Вместе с тем, реалии как современных МО, так их историческая перспектива свидетельствуют о том, что феномен иерархии в межгосударственных отношениях не только существует, но весьма актуален. Иерархичные системы международных отношений и их региональные измерения в целом исходят из практики асимметричных взаимоотношений между доминирующим государством и малой страной, опосредованно принимающей субординационный характер двусторонних отношений с государством-«гегемоном». Важным аспектом иерархии в МО являются условия поддержания иерархичной системы, представляющие собой операциональное и количественное измерения той или иной системы.

SOME STRUCTURAL PECULIARITIES OF THE HIERARCHICAL INTERNATIONAL SYSTEMS

Vahagn Aglyan

Resume

The traditional thesis of the most of the international relations (IR) theories is based on the postulate of anarchy in IR, which does not imply chaos in international affairs, but rather, absence of any institutionally accepted mechanism of global management. At the same time, both the realities of modern IR and their historical perspective indicate that the phenomenon of hierarchy in international relations not only exists, but also matters. Hierarchical systems in international relations and their regional dimensions stem as a whole from the practice of asymmetrical interrelationship between the dominant state and a smaller country, which vicariously transforms into a subordinating character of bilateral relations with a “hegemon” state. An important aspect of the hierarchy is constituted by the conditions that maintain hierarchical systems, which represent operational and quantitative dimensions of one or another system.

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Մամվել Մանուկյան՝

Բանալի բառեր՝ երիտասարդական շարժում, էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացում, հասարակագիտական աշխարհայացք, անվստահություն առկա քաղաքական հասարակարգի նկատմամբ, ուսանողություն, մտավոր խարխիսի:

«Ոչ թալանին» հասարակական շարժումը

2015թ. մայիսին, կապված էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման հետ, Երևանում առաջացավ երիտասարդական «Ոչ թալանին» շարժումը [1]: Այն պահանջում էր չեղյալ հայտարարել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումը՝ էլեկտրաէներգիայի սակագինը Հայաստանում բարձրացնելու մասին: Շարժման առաջնորդները և մասնակիցները հայտարարեցին, որ նրանց պահանջները զուտ տնտեսական են և ոչ քաղաքական: Որպես ապացույց՝ շարժման մասնակիցները, որոնք, սկսած հունիսի 22-ից, արգելափակել էին Երևանի Բաղրամյան պողոտան, իրենց շարքերից վտարում էին անհայտ ծագումով տարբեր սաղրիչների և քաղաքականության շուրջ իրենց հանապազօրյա հացը հայթայթող քաղաքական արկածախնդիրներին: Շարժումն ուներ մեծ էներգիա և զարգացման պոտենցիալ: Մի շարք պայմանների դեպքում այն կարող էր լրջորեն ապակայունացնել Հայաստանի ներքաղաքական կայունությունը և ունենալ խիստ անցանկալի հետևանքներ:

Հայաստանի իշխանությունները և, մասնավորապես, նախագահը, խորապես գիտակցում էին, որ Հայաստանի իշխանությունների և հասարակության միջև առկա է խոր անջրպետ և, հետևաբար, ճիշտ գնահատեցին շարժման խիստ անցանկալի և ներքին ռեսուրսներով անկառավարելի զարգաց-

¹Սոց.գ.թ., IPSC քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, վերլուծաբան:

ման հնարավորությունները, ինչպես նաև շարժումն արտաքին ուժերի կողմից իրենց նպատակներին ծառայեցնելու ռիսկը:

Ըստ այդմ, ՀՀ նախագահը կասեցրեց էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման որոշումը, հանձնարարեց իրականացնել անկախ միջազգային աուդիտ, որը կուսումնասիրի սակագնի բարձրացման հիմնավորվածությունը և կգնահատի հնարավոր հետևանքները՝ սակագինը չբարձրացնելու դեպքում: Եվ ամենակարևորը՝ հայտարարեց, որ աուդիտը լինելու է առավելագույնս թափանցիկ և, այդ մտեցմանը համահունչ, շարժման մասնակիցներին առաջարկեց կազմավորել ներկայացուցիչների խումբ, որը կմասնակցի այդ աուդիտին:

Եվ այստեղ պարզ դարձավ, որ *երիտասարդական շարժումը՝ պետության հետ ադեկվատ հաղորդակցության և իր պահանջի ընդհանուր համատեքստերի գիտակցվածության տեսակետերից, տհաս է:*

Երիտասարդական շարժումը մերժեց աուդիտին մասնակցելու առաջարկը: Պատճառներից առաջինն այն էր, որ նրանք ենթադրեցին, թե աուդիտին մասնակցելու դեպքում իշխանությունների ներկայացուցիչներն իրենց կմոլորեցնեն: Այսինքն՝ բազմահազար երիտասարդների շրջանում չգտնվեցին անձինք, ովքեր ունեին աուդիտին մասնակցելու համար բավարար գիտելիքներ: Շարժումը չցանկացավ իր վրա վերցնել պետության հետ լուրջ հաղորդակցության պատասխանատվությունը և շարունակեց պնդել համագործակցության հրավերից հետո արդեն մանկամիտ դարձած պահանջը՝ չեղյալ հայտարարել որոշումը և վերջ: Երկրորդ՝ նրանք չմտածեցին կամ ունակ չեղան իրենց շարքերը համալրել համապատասխան գիտելիք կրող մարդկանցով՝ մասնագետներով, ովքեր նույնքան կողմ են շարժման պահանջին (շարժման պահանջին կողմ էր Հայաստանի ամբողջ հասարակությունը, բացառությամբ, հավանաբար, յուրահատուկ փոքրիկ խմբի, որին այդ որոշումը ֆինանսապես ձեռնտու է), անկախ են իշխանություններից և պատրաստ են մասնակցել աուդիտին՝ որպես հասարակության ներկայացուցիչներ:

Շարժումը տրոհվեց երկու մասի, մի մասը շարունակեց փակել Բաղրամյան պողոտան, մյուս մասը տեղափոխվեց Երևանի Ազատության հրապարակ:

Մեկ շաբաթ անց ոստիկանությունը բացեց պողոտայի շրջափակումը: Շարժման մի քանի ակտիվիստներ սպառնացին, որ կսկսեն փակել քաղաքի

տարբեր փողոցներ, իսկ հացադուլային և պառկելացույցի ավանդույթներով հայտնի կուսակցության ներկայացուցիչը պառկեց հացադուլի:

Առաջանում է երկու հարց.

1. Պատահակա՞ն էր արդյոք շարժման այսպիսի զարգացումը:
2. Ի՞նչ զարգացումներ են հնարավոր ռազմավարական հեռանկարում:

**Հասարակագիտական աշխարհայացքի կազմավորվածությունը
երիտասարդության շրջանում**

Հայտնի է, որ մենք ապրում ենք կապիտալիստական հասարակարգում: Ավելին, իր բնույթով կապիտալիստական է ներկայում գոյություն ունեցող միակ աշխարհամակարգը¹, իսկ ինքը՝ կապիտալիզմը, մնում է իմպերիալիստական և մոնոպոլիստական, մյուս կողմից՝ արդեն մոտ 100 տարի է, ինչ կապիտալիզմի շրջանակներում արդյունաբերական, առևտրային և ֆինանսական կապիտալներից բացարձակ գերիշխող է դարձել *ֆինանսականը*:

Ներկայում կապիտալիզմ տերմինի փոխարեն կիրառվում է «շուկայական տնտեսություն» տերմինը: Որտեղի՞ց և ինչպե՞ս է այն հայտնվել: Ըստ ամերիկացի ամենահեղինակավոր տնտեսագետներից մեկի՝ Գեյբրայթի, 1929-33թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո ԱՄՆ-ում, որտեղ խիստ անհանգստացած էին համաշխարհային ճգնաժամի պայմաններում ԽՍՀՄ աննախադեպ տնտեսական հաջողություններով և դրանից բխող՝ աշխարհում սոցիալիստական և կոմունիստական գաղափարախոսության տարածմամբ, առաջացավ գաղափարախոսական պայքարում նոր մոտեցումների մշակման և իրականացման անհրաժեշտություն: Այդ համատեքստում ԱՄՆ առավել հեղինակավոր տնտեսագետներն ու քաղաքագետները սկսեցին իրենց աշխատանքը, որի շրջանակներում, Գեյբրայթի խոսքերով, հորինեցին «շուկայական տնտեսություն» տերմինը, որով աստիճանաբար սկսեցին փոխարինել կապիտալիզմ տերմինը [2, c. 22-23]²:

¹ Աշխարհամակարգ՝ Ի.Վալերսթայնի սահմանմամբ: Անցյալի պատմական ժամանակաշրջաններում աշխարհում միաժամանակ գոյություն են ունեցել մի քանի աշխարհամակարգեր:

² Հայտնի է, որ շուկայական տնտեսություն տերմինն օգտագործել է նաև Ֆ.Բրոդելը՝ դրանով նշանակելով շուկան, որտեղ արհեստավորներն ու գյուղացիները վաճառում են *իրենց աշխատանքի արդյունքները*, որտեղ չկան օլիգոպոլիստներ և մոնոպոլիստներ: Բրոդելը «շուկայական տնտեսությունը» համարում է կապիտալիստական հասարակարգի ամենաերկրային նիշան [3]:

Դասագրքային ճշմարտություն է, որ տնտեսական ճգնաժամերի ընթացքում, մոնոպոլիաները, հատկապես բնական մոնոպոլիաները, օգտագործելով տնտեսական համակարգում իրենց բարձր կառուցվածքային և, նաև դրա հետևանքով, գերիշխող դիրքը, տիրապետելով անհրաժեշտ և բավարար չափի ֆինանսական ռեսուրսների, հնարավորություն են ստանում «համոզել» պետությունների, հատկապես տնտեսապես թույլ և միջազգային կապիտալից նշանակալիորեն կախված պետությունների քաղաքական իշխանություններին «պաշտպանել» տնտեսական վայրիվերումներից համակարգաստեղծ ենթակառուցվածքները, այդ թվում՝ բանկային համակարգը, էներգահամակարգը և այլն: Դրանով իսկ, նույնիսկ «կրճատվող» տնտեսություններում, որտեղ տեղի են ունենում բազմաթիվ սնանկացումներ, մոնոպոլ ենթակառուցվածքային ձեռնարկությունները, որոնք, որպես կանոն, վերազգային են, ոչ միայն պահպանում են իրենց կապիտալները, այլև բազմապատկում են դրանք: Նրանք՝ «Առևտրային գաղտնիք» իրավական դրույթի սահմաններում, լավագույն հնարավորություններ ունեն գաղտնի պահել ֆինանսական մեքենայությունները ոչ միայն հասարակության լայն շրջանակներից, այլև այն բոլոր պետական և ոչ պետական շրջանակներից, որոնք կարող են որևէ կերպ խոչընդոտել դրանց իրականացմանը:

Կոնկրետ տնտեսական ճգնաժամի կոնկրետ պայմաններում կոնկրետ մոնոպոլիաներն ունեն իրենց ծառայությունների կամ ապրանքների սակագներն ու գները բարձրացնելու յուրահատուկ բացահայտ հիմնավորումներ: Այնուամենայնիվ, որպես կանոն, խոշոր վերազգային կազմակերպություններն են ամենից քիչ տուժում տնտեսական ճգնաժամերից: Նրանք են, որ ունակ են ցանկացած տնտեսական կոնյունկտուրային պայմաններում իրականացնելու կապիտալիստական (մասնավոր) ձեռնարկության «սրբազան» նպատակը՝ շահույթի ստացումը: Եթե վերազգային մոնոպոլիաները չկարողանան իրականացնել այդ նպատակը, ապա դա կնշանակի կապիտալիզմի վերջը:

Իսկ գիտե՞ն արդյոք այս վաղուց հայտնի ճշմարտությունները մարդիկ, հատկապես՝ մտավորականությունը և, մասնավորապես, ուսանող երիտասարդությունը, որն, ըստ սահմանման՝ կա՛մ արդեն մտավորական է, կա՛մ պետք է դառնա մտավորական: Այդ նպատակով դիտարկենք հասանելի մի քանի հետազոտական տվյալներ:

Երևանի ուսանողության շրջանում 2015թ. իրականացված հետազոտության արդյունքներով՝ «Ըստ Ձեզ՝ ի՞նչ հասարակարգ է այսօր Հայաստանում» բաց հարցին² ճիշտ պատասխան է տվել ուսանողների ընդամենը 7.0%-ը, ևս 7.2%-ը նշել է սխալ հասարակարգ, 21.6%-ը հասարակարգի փոխարեն նշել է քաղաքական ռեժիմ կամ քաղաքական համակարգ: Հատկանշական է, որ *հարցվածների 57.3%-ը հայտնել է, որ դժվարանում է պատասխանել հարցին*, իսկ 6.9%-ը տվել է բացահայտ անհեթեթ պատասխան: Համեմատաբար ավելի տեղյակ էին դիտարկվող հարցի վերաբերյալ հասարակագետ ուսանողները, որոնց շրջանում, սակայն, ճիշտ պատասխանները կազմել են ընդամենը 12.4%, այսինքն՝

- *8 հասարակագետ ուսանողներից* (տնտեսագետ, իրավաբան, սոցիոլոգ, քաղաքագետ) *7-ը չգիտե, թե ինչ հասարակարգ է այսօր Հայաստանում:*

Այս փաստն արդեն *ուղղակիորեն է մատնանշում, որ համալսարաններում ուսանողների հասարակագիտական գիտելիքների մակարդակը շատ ցածր է անկախ ուսումնական հոսքից՝ հասարակագիտական, հումանիտար, բնագիտական, թե տեխնիկական:*

Չնայած ուսման տարիների ընթացքում ուսանողների հասարակագիտական գիտելիքներն աճում են, սակայն *նույնիսկ մագիստրատուրայի 2-րդ կուրսում ուսանողների միայն 9.2%-ն է ճիշտ պատասխանել, թե ինչ հասարակարգ է այսօր Հայաստանում:*

Եթե Երևանի ուսանողության 93%-ը կամ չգիտի, կամ «մոտավորապես» գիտի, կամ սխալ գիտի այն հասարակարգի անունը, որում ապրում է, ապա պետք է ենթադրել, որ հասարակագիտական տեսությունների, այդ թվում՝ աղեկվատ տեսությունների վերաբերյալ կոնկրետ գիտելիքներ ունեցող ուսանողների քանակը շատ քիչ է տարբերվում 0%-ից: Իսկ կարծել, թե ուսանողության շրջանում առկա է համակարգված հասարակագիտական գիտելիք՝ անհիմն ենթադրություն է: Չնայած հնարավոր են եզակի բացառություններ: Ակնհայտ է, որ, եթե ուսանողությունը նույնիսկ չգիտի, թե ինչ հասարակարգում է ապրում, ապա դժվար է ենթադրել, որ նա տեղյակ է դրա վերաբերյալ որևէ ամբողջական հայեցակարգի:

¹ Մանուկյան Ս., 22 ուսանողների կենսաոճի և Բոլոնիայի գործընթացի գնահատման հետազոտություն: IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, 2015թ.:

² Բաց է կոչվում այն հարցը, որի պատասխանները հարցվողին չեն հուշվում:

- Հետևաբար, «Ոչ թալանին» երիտասարդական հասարակական շարժման գաղափարական փակուղին օրինաչափ էր:
- Չունենալով կոնստրուկտիվ հաղորդակցության համար անհրաժեշտ գիտելիքներ՝ ուսանողությունն ուներ կամ կոնֆրոնտացիոն ճանապարհ, կամ «անփառունակ» ընկրկում, որը «հարիր չէ» ամբիցիոզ երիտասարդությանը:

Ի՞նչ զարգացումներ են հնարավոր երիտասարդական շարժումներում

Քանի որ Երևանի ուսանողությունը չունի համակարգված հասարակագիտական աշխարհընկալում, հետևաբար, ենթակա է մանիպուլյացիաների: Իսկ մանիպուլյացիաները հնարավոր են և արդյունավետ, երբ հիմնված են հասարակական գիտակցությունում առկա մտավոր խարխիսիների վրա:

Ի՞նչ մտավոր խարխիսներ են առկա Երևանի ուսանողության գիտակցությունում, որոնք կարող են օգտագործել այդ շարժումները «սանձահարելու» փորձ կատարող ներքին կամ արտաքին շրջանակները: Դիտարկենք նույն հետազոտությամբ ուսանողների սոցիալական գիտակցության մտավոր խարխիսները երկու ֆունդամենտալ հասարակական խնդիրների վերաբերյալ.

1. *Ո՞րն է հասարակության մեջ անհավասարության հիմնական պատճառը:*
2. *Ի՞նչ դիրքորոշումներ ունեն ուսանողներն այն երևույթի նկատմամբ, երբ վերնախավերը վեր են կանգնում օրենքից և հասարակական նորմերից:*

Առաջին դրույթի հետ կապված խարխիսները բացահայտելու համար ուսանողներին տրվել է հետևյալ հարցը. «Անհավասարության և աղքատության վերաբերյալ հետևյալ կարծիքներից որի՞ն է առավել մոտ Ձեր կարծիքը»: Պատասխանների տարբերակները և դրանց տրված պատասխանների տոկոսները տրված են ստորև.

- «Ամեն մարդ ինքն է պատասխանատու իր վիճակի համար», նշել է ուսանողների 58.8%-ը:
- «Եթե երկիրը հարստանա, այդ խնդիրները կլուծվեն», նշել է 12.1%-ը:
- «Աղքատության ու անհավասարության հիմնական պատճառն անարդար երկիրն է», նշել է 27.7%-ը:

Մնացած 1.4%-ը կամ համաձայն չի եղել ոչ մի դրույթին, կամ դժվարացել է պատասխանել:

Ուսանողների դիրքորոշումներն օրենքի առջև բոլորի հավասարության վերաբերյալ բացահայտվել են հետևյալ հարցի միջոցով. *«Ըստ Ձեզ, բնական է և, որ հարուստներն ու իշխանություն ունեցողները անպատիժ խախտում են օրենքները, քանի որ ով էլ հարստանա կամ գա իշխանության՝ այդպես կվարվի»*: Ուսանողների երկու երրորդը՝ 66.6%-ը, պատասխանել է «ոչ»՝ բնական չէ, իսկ մեկ երրորդը՝ 33.0%-ը՝ «այո»: 0.4%-ը դժվարացել է պատասխանել:

Ի՞նչ կարելի է եզրակացնել ստացված արդյունքներից: Ուսանող երիտասարդության մոտ 60%-ի գիտակցությունում գերիշխում են անհատապաշտական՝ *լիբերալ*, իսկ մոտ 25%-ի գիտակցությունում՝ *համակարգային քննադատական* դիրքորոշումները: Ուսանող երիտասարդության երկու երրորդի համար *անընդունելի է վերնախավերի սոցիալական վարքագիծը*, երբ նրանք վեր են կանգնում օրենքից, իսկ մեկ երրորդն ինքը, հավանաբար, հնարավորության դեպքում կունենար այդպիսի վարք¹:

Տվյալների նույնիսկ նման մակերեսային վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ.

- *Երիտասարդական շարժումները, մնացած հավասար պայմաններում, առավել հեշտությամբ կարող են մանիպուլացվել լիբերալ-դեմոկրատական, քան այլ գաղափարախոսական հենք ունեցող բովանդակություններ կիրառող ռազմավարություններով:*
- *Այնուամենայնիվ, յուրաքանչյուր չորրորդ ուսանողի գիտակցությունում առկա է հասարակարգի անկատարության զգացողությունը²:*

Մյուս կողմից, վերջին տասնամյակի գունավոր հեղափոխությունները և հատկապես 2013-ից սկսված ուկրաինական «մայդանը» հուշում են, որ նման դեպքերում միշտ անհրաժեշտ է դիտարկել քաղաքացիական շարժումները դեստրուկտիվ հասարակական, իսկ հետո նաև քաղաքական գործընթացների վերածելու հնարավորությունները:

¹ Ինչն, իհարկե, չի բացառում, որ նման վարք կունենային նաև նրանք, ովքեր պատասխանել են, որ վերնախավերի օրենքից վեր կանգնելն անընդունելի է:

² Այն, որ դա ընդամենը զգացողություն է, այլ ոչ թե գիտելիք՝ պարզ է դարձել նախորդ շարադրանքից:

Ուսանող երիտասարդության հասարակական գիտակցության համալիրները

Եթե ուսանող երիտասարդության շրջանում չկան հասարակագիտական տարրական գիտելիքներ, ապա դրանից չի հետևում, որ չկան նաև հասարակագիտական *պրոտո*-համալիրներ:

Ի՞նչ համալիրներ են առկա ուսանողական-երիտասարդական հասարակական շերտում, և ի՞նչ հնարավոր զարգացումների կարող են դրանք հանգեցնել: Վերը նշված հետազոտության շրջանակներում իրականացվել է այդ համալիրների ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության արդյունքում ստացվել է, որ ներկայում ուսանող երիտասարդության գիտակցությունում առկա են երկու հիմնական մտավոր համալիրներ, որոնք կարող են էապես ազդել ուսանողական շարժման զարգացումների վրա:

Առաջին համալիրն է՝ *անվստահությունն առկա քաղաքական համակարգի նկատմամբ, որի բաղադրիչ է նաև վատատեսությունը Հայաստանի ապագայի հանդեպ*: Այս համալիրի կոնկրետ բովանդակությունն այն է, որ ուսանող երիտասարդները համարում են, թե մոտակա տարիների ընթացքում Հայաստանում իրավիճակը չի բարելավվի, ընդ որում, դրա հետ մեկտեղ, նրանք չեն հավատում, որ Հայաստանի իշխանություններն անկեղծորեն ցանկանում են բարելավել իրավիճակը Հայաստանում: Մյուս կողմից, ավելի լավը չեն նաև քաղաքական կուսակցությունները, որոնք հետամուտ են իրենց դեկլարանտների, այլ ոչ թե հասարակ մարդկանց շահերին: Եվ վերջապես, հայկական պետությունը չի պաշտպանում հասարակ մարդկանց շահերը:

Մյուս համալիրի բովանդակությունն այն է, որ ուսանող երիտասարդները համարում են, թե Հայաստանում անհրաժեշտ են *լուրջ փոփոխություններ*, ընդ որում, դրա համար անհրաժեշտ են *նոր քաղաքական դեմքեր*, և, միաժամանակ, նրանք համարում են, որ *հասարակական կազմակերպությունները* նպաստում են Հայաստանում կյանքի բարելավմանը:

Ներկայում այս երկու համալիրներն ուսանողության հասարակական գիտակցությունում թույլ շաղկապված են:

Ուսանողության հասարակական գիտակցությունում առկա է ևս երեք գործոն, որոնք, չնայած ներկայում շաղկապված չեն նկարագրված երկու համալիրների հետ, սակայն համապատասխան կիրառման դեպքում ունակ են

առաջացնելու երիտասարդական ուսանողական շարժումների զարգացման տարբեր սցենարներ: Դրանք են՝ ա) ուսանողների երկու երրորդը համարում է, որ Հայաստանին այսօր պետք է ուժեղ ձեռքով կառավարում, իսկ մեկ երրորդը՝ ժողովրդավարություն, բ) ուսանողների երկու երրորդը համարում է, որ Հայաստանի տնտեսական վերնախավը բացասական դերակատարում ունի Հայաստանի զարգացման հարցում, իսկ մեկ երրորդը՝ դրական, գ) այն հարցում, թե որն է գերադասելի՝ սոցիալիզմը, թե կապիտալիզմը, ուսանողների դիրքորոշումները կիսվել են, իսկ մոտ 10%-ը կողմնորոշված չէ այդ հարցում¹:

Հետազոտության արդյունքները համապատասխանում են «Ոչ թալանին» շարժման ընթացքի կառուցվածքին: Շարժումը շնորհունեց «հին» ընդդիմադիր կուսակցություններին և քաղաքական դեմքերին: Բացառություն է կազմում միայն մեկ քաղաքական դեմք, որը ցուցադրաբար հեռացել է արդեն «ավանդական» բոլոր կուսակցություններից և հիմնադրել նոր կուսակցություն: Այնուամենայնիվ, այդ «նոր» քաղաքական դեմքը [դեռևս] չի ստացել շարժման շրջանակներում որևէ լուրջ դերակատարում²:

Մյուս կողմից, ուշագրավ է, որ ընդդիմադիր կուսակցություններն էլ, իրենց հերթին, առանձնապես եռանդուն քայլեր չկատարեցին շարժմանը մասնակցելու տեսակետից, ինչը կարող է բացատրվել նրանով, որ նրանք իրենց փորձով գնահատել և հասկացել են կամ գուցե նրանց հուշել են, որ իրենք չեն կարող այդ շարժման համար վերածվել քաղաքական առաջնորդների, իսկ շատ եռանդուն և *անարդյունավետ* գործունեությունն ուսանողների շրջանում, հասարակության ավելի լայն շերտերում ավելի կիսարիալի իրենց առանց այդ էլ ցածր հեղինակությունը³:

Մակայն հետազոտական տվյալները և հայաստանյան քաղաքացիական հասարակության (նեղ իմաստով) կառուցվածքը, բնույթն ու բովանդակությունը հուշում են, որ.

¹ Կարող է տարօրինակ թվալ, թե ինչպես են ուսանողները համեմատում սոցիալիզմը և կապիտալիզմը, եթե չգիտեն, թե ինչ հասարակարգ է այսօր Հայաստանում: Հիշեցնենք, որ հասարակարգի վերաբերյալ հարցի դեպքում նրանց պատասխաններ չեն հուշվել: Իսկ սոցիալիզմի և կապիտալիզմի համեմատությունը նրանք կատարել են՝ պատասխանելով հետևյալ հարցին. «*Համաձայն եք, թե՞ ոչ հետևյալ դրույթին՝ կապիտալիստական համակարգը գերադասելի է սոցիալիստականից*»: Այսպիսով, ոչ թե գնահատվել են ուսանողների գիտելիքները, այլ համեմատվել են նրանց՝ նույնիսկ հատվածային գիտելիքների վրա հիմնված դիրքորոշումները:

² Ինչն, իհարկե, չի նշանակում, որ հետագայում դա հնարավոր չէ:

³ Այնուամենայնիվ, չի կարելի մերժել «հին» կուսակցությունների՝ շարժմանը մերձենալու հնարավորությունը:

- Այսօր Հայաստանում առկա է նոր քաղաքական դեմքերի ու միավորների կազմավորման մեծ պոտենցիալ:
- Հայաստանի քաղաքական զարգացումները մեծապես կախված կլինեն նրանից, թե ովքեր, ինչպես և ինչ գաղափարախոսական շրջանակներում կիրականացնեն այդ պոտենցիալը:
- Նոր քաղաքական դեմքերն ու միավորումները [սպոնտան կամ ուղղորդված կերպով] կազմավորվելու կամ աճեցվելու են հասարակական կազմակերպությունների անդամներից և նրանց շրջապատից:

Սա, անշուշտ, ենթադրում է, որ Հայաստանում ընթանալու են [մեծ հավանականությամբ արդեն ընթանում են] այդ ներուժի իրականացման բարդ, բազմաբնույթ և տարրնթաց (միմյանց հակադիր) գործընթացներ:

Ակնհայտ է, որ Հայաստանում արդեն հասունացել է հասարակության և հատկապես երիտասարդության կողմից ընդունելի ազգային-պետական գաղափարախոսության անհրաժեշտությունը: Նա, ով ավելի արագ և արդյունավետ կլուծի այս խնդիրը, նրան էլ կպատկանի Հայաստանի ապագան:

Հարկ է նշել, որ արդեն արդիական է ոչ միայն նոր գաղափարախոսության ներկայացումը հանրությանը, այլև կոնկրետ և արդյունավետ ռազմավարությունների իրականացումը՝ նոր գաղափարախոսությունը հասարակության համար ընդունելի դարձնելու նպատակով: Այստեղ կիսատ և անորոշ էրգաց-գաղափարախոսությունները և հակասական գործողությունների շարքը ոչ միայն արդյունավետ չեն լինի, այլև կվնասեն այն շրջանակների, *այդ թվում և պետության*, նպատակների իրականացմանը, որոնք դրանք կներկայացնեն հանրությանը, նախ և առաջ՝ երիտասարդությանը, հատկապես ուսանողությանը:

Այս դեպքում գործունեության լայն դաշտ կբացվի նրանց համար, ովքեր անտարբեր են Հայաստանի և հայ ազգի ապագայի ու անվտանգության նկատմամբ և պարզապես այստեղ լուծում են իրենց գլոբալ և տարածաշրջանային խնդիրները: Այդ ուժերի մանիպուլյացիաների համար պարարտ հողը պատրաստ է:

Ժամանակն է կողմնորոշվելու և գործելու:

Հուլիս, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. «Ոչ թալանին» նախաձեռնությունն առաջարկում է էլեկտրաէներգիայի սակագների անհիմն բարձրացման դեմ պայքարը խորհրդարանից տեղափոխել փողոց, <http://www.arminfo.info/index.cfm?objectid=AF29D690-FACA-11E4-92330EB7C0D21663>
2. *Дж.К. Гэлбрейт*, Экономика невинного обмана: правда нашего времени, М., Издательство «Европа», 2009.
3. *Ф.Бродель*, Динамика капитализма, Смоленск, Полиграмма, 1993.

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Մամվել Մանուկյան

Ամփոփագիր

Հոդվածագիրն անդրադարձել է 2015թ. մայիսին էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման հետ կապված՝ Երևանում ի հայտ եկած «Ոչ թալանին» երիտասարդական շարժմանը: Շարժման ընթացքը ցույց տվեց, որ չունենալով կոնստրուկտիվ հաղորդակցության համար անհրաժեշտ գիտելիքներ՝ ուսանողությունն ուներ կամ «կոնֆրոնտացիոն», կամ «անփառունակ» ընկրկման ճանապարհ: Ուսանող երիտասարդները համարում են, որ Հայաստանում անհրաժեշտ են լուրջ փոփոխություններ, ընդ որում, դրա համար անհրաժեշտ են նոր քաղաքական դեմքեր: Ակնհայտ է, որ Հայաստանում արդեն հասունացել է հասարակության և հատկապես երիտասարդության կողմից ընդունելի ազգային-պետական գաղափարախոսության անհրաժեշտությունը:

О РАЗВИТИИ МОЛОДЕЖНЫХ ДВИЖЕНИЙ В АРМЕНИИ

Самвел Манукян

Резюме

В статье рассматривается молодежное движение «Нет грабежу», сформировавшееся в Ереване в связи с повышением тарифов за электроэнергию в мае 2015г. Время показало, что, не обладая необходимыми знаниями для конструктивной коммуникации, студенчество встало перед выбором или «конфронтационного», или «бесславного» пути. Студенты считают, что в Армении необходимы серьезные изменения, причем для этого требуются новые политические деятели. Очевидно, что в Армении назрела необходимость приемлемой для общества и особенно молодежи национально-государственной идеологии.

ON THE DEVELOPMENTS OF YOUTH MOVEMENTS IN ARMENIA

Samvel Manukyan

Resume

The author discusses the “No to Robbery!” youth movement that emerged in Yerevan in relation to the electricity tariff rate hikes introduced in May 2015. The evolution of the movement showed that having no skills for constructive communication, the students had to resort to only two options: either “confrontation”, or “graceless” retreat. The youth believed serious changes are necessary for Armenia and that new political figures are required for that. Obviously, there is a need for a new national/state ideology in Armenia that would be acceptable for the society and especially, for the youth.

**ԶԼՄ-ՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻՈՆ
ՀՆԱՐՔՆԵՐՆ ՈՒ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

Նվարդ Մելքոնյան՝

Բանալի բառեր՝ մանիպուլյատիվ տեխնոլոգիաներ, ԶԼՄ ազդեցություն, սոցիալական առասպելներ, միֆեր, սոցիալ-հոգեբանական ազդեցություն, ներշնչում, սուգեստիվ տեխնիկաներ, ՆԼԾ:

Ժամանակակից հասարակությունը հաճախ անվանվում է մեդիոկրատիկ, որտեղ իրական իշխանությունը պատկանում է զանգվածային լրատվության միջոցներին: Ըստ ֆրանսիացի հայտնի հետազոտող Ռ.Դեբբեի, որն առաջարկել է «մեդիոկրատիա» տերմինը, զանգվածային լրատվամիջոցներն այսօր կատարում են այն գործառույթները, որոնք միջնադարյան Եվրոպայում պատկանել են եկեղեցուն, ընդ որում՝ հասարակության գիտակցության մեջ նախկին սրբերի տեղը գրավել են «աստղերը» և ամբոխի կուռքերը, իսկ հավատքը փոխարինվել է ԶԼՄ-ի կողմից արտահայտվող հասարակական կարծիքով [1, p. 11]: Հեգելը թերթերի ընթերցումն անվանել է «ժամանակակից մարդու առավոտյան աղոթք» [2, c. 68-86]: Այսօր սովորական մարդն առավոտյան դիմում է ոչ թե Աստծուն, այլ հեռուստատեսությանը, ռադիոյին կամ թերթին: Սակայն Հեգելի համեմատության իմաստն ավելի խորն է. աշխարհիկացված հասարակության մեջ լրատվամիջոցները ոչ այնքան աշխարհիկ վերջին նորություններն են հայտնում, որքան ընդհանուր տրամադրվածություն, կյանքի տոնուս, արժեքա-իմաստային կողմնորոշում են հաղորդում: Հենց ԶԼՄ-ի միջոցով է կարգավորվում սոցիալական ու քաղաքական վարքը, հաղորդվում կյանքի բարոյական ու հոգեբանական երանգը, փոփոխվում կամ ամրապնդվում են ընկալման կարծրատիպերն ու արձագանքները:

Այս հանգամանքներն էլ ավելի մեծ արդիականություն ու նշանակություն են ձեռք բերում քաղաքական ոլորտում ԶԼՄ աճող ներթափանցման ֆո-

¹ ԵՊՀ, Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, սոց.գ.թ.:

նին. դրանք քաղաքական գործընթացների իրականացման, հասարակական գիտակցության կառավարման, հասարակական կարծիքի ձևավորման կարևոր գործիք են դառնում:

Ժամանակակից աշխարհում քաղաքական տեղեկատվական-հաղորդակցական գործընթացներում հաճախ կիրառվում են ոչ թե առանձին հնարքներ, այլ հատուկ մանիպուլյատիվ տեխնոլոգիաներ:

Ըստ ռուսաստանցի գիտնական Ս.Կարա-Մուրզայի՝ մանիպուլյացիան հասարակական գիտակցության և մարդկանց վարքագծի թաքնված ղեկավարումն է՝ ուղղված նրանց որևէ գործողության կամ անգործության դրդելու՝ մանիպուլացնողի շահերին համապատասխան [3, c. 47]: Հերբերտ Ֆրանկեն տալիս է հետևյալ բացատրությունը. «մանիպուլյացիա ասելով հասկանում ենք հոգեբանական ազդեցություն, որը տեղի է ունենում գաղտնի և, հետևաբար՝ ի վնաս այն անձանց, որոնց դեմ այն ուղղված է» [4, c. 19]:

Մանիպուլյացիան թաքնված ազդեցություն է, որի փաստը չպետք է նկատվի մանիպուլյացիայի օբյեկտի կողմից: Ինչպես նշում է Շիլլերը. «Մանիպուլյացիայի հաջողությունը երաշխավորված է, եթե մանիպուլյացիայի ենթարկվողը հավատում է, որ կատարվող բոլոր իրադարձությունները բնական են և անխուսափելի: Այլ կերպ ասած՝ մանիպուլյացիայի համար անհրաժեշտ է կեղծ իրականություն, որում դրա ներկայությունը նկատելի չի լինի» [5, c. 15]:

Ըստ ռուս քաղաքագետ, սոցիոլոգ Վ.Ամելինի՝ քաղաքական մանիպուլյացիան ենթադրում է հետևյալ գործողությունները [6, c. 32].

- Հասարակական գիտակցություն «օբյեկտիվ» տեղեկատվության ներմուծում, որը որոշակի լսարանի համար ցանկալի է:
- Հասարակական գիտակցության համար ցավոտ խնդիրների վերաբերյալ ազդեցություն՝ վախ, անհանգստություն, ատելություն և այլն ներշնչելու նպատակով:
- Հռչակված և թաքուն մտադրությունների իրականացում, որոնց հասնելու գործընթացը մանիպուլյատորը կապում է հասարակության կողմից իր դիրքորոշման սատարման հետ:

Պետք է նշել, որ առաջին կետը համապատասխանում էր մանիպուլյացիայի խնդիրներին, երկրորդը՝ մեթոդներին, իսկ երրորդը՝ քաղաքական մանիպուլյացիայի նպատակներին:

Մանիպուլյատիվ տեխնոլոգիաները կարելի է դասակարգել ըստ տարբեր հիմքերի:

Գործող օրենսդրությանը համապատասխանության տեսանկյունից դրանք տարանջատվում են օրենքով կարգավորվողների և իրավական նորմերին հակասողների, ըստ ազդեցության՝ ուղիղ և թաքնված, ըստ ձևի՝ ազիտացիոն, տնտեսական, ադմինիստրատիվ և սադրիչ, ըստ ազդեցության՝ միջանձնային, խմբային և զանգվածային, ըստ կրիչների՝ տպագիր, էլեկտրոնային և այլն:

Մանիպուլյատիվ տեխնոլոգիաները ենթադրում են մարդկանց գիտակցության վրա ազդեցության մեթոդների հարուստ զինանոցի կիրառում: Զանգվածային լրատվության միջոցներն իրենց հասարակական-հոգեբանական ազդեցությունն իրականացնում են նախ և առաջ տեղեկատվության կառավարման և մանիպուլյացիայի միջոցով: Այս տեսանկյունից տեղեկատվությունը կարելի է.

- կեղծել, բայց ներկայացնել որպես իրական,
- աղավաղել՝ այն ներկայացնելով ոչ լիարժեքորեն կամ միակողմանի,
- խմբագրել՝ ավելացնելով սեփական մեկնաբանումները և կարծիքները,
- մեկնաբանել ինչ-որ մեկի շահի տեսանկյունից,
- թաքցնել, գաղտնի պահել ինչ-որ էական փաստեր:

Բացի դրանից, ՁԼՄ-ում կիրառվում են.

- որոշակի, ընտրված փաստերի նկատմամբ ուշադրության գրավում,
- բովանդակությանն անհամապատասխան նյութի վերնագրում,
- արտահայտությունների վերագրում ինչ-որ մեկին, որոնք իրականում չեն հնչեցվել,
- ճշմարիտ, իրական տեղեկատվության հաղորդում ուշացումով, երբ այն կորցրել է իր արդիականությունը,
- ոչ հստակ մեջբերում, որը համատեքստից կտրված այլ իմաստ է ձեռք բերում, հաճախ իրական իմաստին հակասող [7]:

Ամերիկացի հետազոտող Ջ.Բրաունը նկարագրել է այն հիմնական մեթոդները, որոնք օգտագործվում են ՁԼՄ-ի կողմից քաղաքական ազդեցություն գործելու նպատակով [8, p. 74-79]: Նշենք, որ այս մեթոդներից շատերին

նույն կամ այլ անվանմամբ հաճախ կարող ենք հանդիպել նաև այլ հետազոտողների կողմից առաջարկվող դասակարգումներում:

- *Կարծրատիպերի օգտագործում:* Կարծրատիպ (ստերեոտիպ) ասելով հասկանում ենք որևէ երևույթի պարզեցված, սխեմայացված ընկալումը: Միանգամայն բնական է նույնական հատկանիշներով մի խումբ անհատներին որոշակի «սոցիալական տիպեր» վերագրելը: Ժամանակի ընթացքում այս պատկերը, ամրագրվելով մարդկային գիտակցության մեջ, փորձնական ստուգման այլևս չի ենթարկվում: Այդ պատճառով, երբ լրատվամիջոցները դիմում են այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են «հրեա», «նացիստ», «կոմունիստ», նկատի են ունենում ոչ թե կոնկրետ մարդու, այլ այն կերպարը, որն առկա է զանգվածային գիտակցության մեջ, և որի նկատմամբ հանրության մեջ արդեն ձևավորված է որոշակի արձագանք:
- *Անունների փոփոխում կամ պիտակավորում:* Քաղաքական լեզվի առանձնահատուկ ազդու զենքերից են մանիպուլյատիվ հասկացությունները կամ «պիտակները», որոնք վերագրվում են քաղաքական ընդդիմախոսին: Դրանք ստեղծվում և շրջանառության մեջ են դրվում հատուկ նպատակով: Վտանգն այն է, որ հիմնականում ԶԼՄ-ի միջոցով կիրառության մեջ մտնելով՝ դրանք գոյատևում են երկար, դառնում սովորական, առօրեական բառեր՝ երբեմն փոխարինելով ու դուրս մղելով այլ նույնիմաստ, բայց պակաս ազդեցիվ հասկացությունները, օրինակ՝ Ռեյգանի «չարի կայսրություն» պիտակը, որը բավական հաջող գտնվեց ամերիկացիների մեջ ԽՍՀՄ-ի վերաբերյալ կարծրատիպերի ձևավորման տեսանկյունից:
- *Փաստերի ընտրանք կամ «լռեցում և ընդգծում»:* Այս միջոցը, որը ԶԼՄ-ի կողմից կիրառվում է հանրության վստահությունն ապահովելու համար, հանդիսանում է օբյեկտիվ, հանգամանալից, կոնկրետ, սակայն ոչ նշանակալի մանրամասնությունների հաղորդման և էական ու կարևոր փաստերի քողարկման կամ առհասարակ իրադարձությունների ոչ ճշմարտացի մեկնաբանման տեխնիկա:

«ԶԼՄ-ում հաղորդագրությունների հեղեղը մեծ ուշադրություն է գրավում,- գրում է Հ.Լասուելը,- հրավիրել ուշադրությունը մի երևույթի վրա և

շեղել մյուսից, ահա թե որն է հաճախ ՁԼՄ գլխավոր խնդիրը: Այսօրվա թերթը լույս է տեսնում նրա համար, որպեսզի հիմնովին մոռանալ տա անցյալ ու նախանցյալ օրվա լուրը: Իսկ այն, ինչը չի հայտնվում ՁԼՄ-ում, կարծես ընդհանրապես գոլություն չունի» [9]:

1963թ. Բ.Կոենն առաջարկեց զանգվածային հաղորդակցության «օրակարգային կետերի սահմանման» (*«Agenda-setting» theory*)՝ այսօր արդեն դասական դարձած էֆեկտի գաղափարը: Մրա իմաստն այն է, որ մամուլն անկարող է ստիպել մարդկանց մտածել որոշակի ձևով, սակայն կարող է իր ընթերցողին ուղղորդել, թե ինչի մասին մտածել [10]:

- *Բացահայտ սուտ*: Սա «իրականում տեղի ունեցող ճշմարտանման», «իրականում տեղի ունեցող, բայց ոչ ճշմարտանման» և «մտացածին ճշմարտանման» «փաստերի» համակցումն է: Երբ երկրորդ տիպի փաստերի վերաբերյալ լսարանի կասկածները փարատվում են, այն առանց վարանման սկսում է հավատալ երրորդ խմբի փաստերին: Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ փաստերը կարելի է նաև բառի բուն իմաստով ստեղծել: Ամերիկացի հետազոտող Դ.Բուրստինն իր «Իմիջ. կեղծ իրադարձությունների շտեմարանն Ամերիկայում» գրքում շրջանառության մեջ է դնում «կեղծ իրադարձություն» հասկացությունը [11]: Վերջինս ոչ թե տեղի է ունենում ինքնին, այլ որովհետև որևէ մեկը պլանավորել, սադրել կամ հրահրել է այն՝ հասարակական ուշադրությունը շեղելու նպատակով:
- *Տեղեկատվության կրկնողություն*: Եթե հաղորդագրությունը բավական հաճախ է կրկնվում ՁԼՄ-ում, ապա վաղ թե ուշ այն ընդունվում է լսարանի կողմից և ամրապնդվում կոլեկտիվ գիտակցության մեջ:
- *Պնդում*: Այս միջոցի առանձնահատկությունն այն է, որ լրատվամիջոցներն իրենց մտքի, գաղափարի պաշտպանության համար հաճախ մերկ պնդումները գերադասում են քննարկումներից՝ դրանով իսկ սահմանափակելով բազմակարծությունն ու ներկայացնելով «մեղալի» միայն մեկ, հատկապես՝ իրենց համար շահավետ կողմը:
- *Թշնամու մատնանշում*: ՁԼՄ-ում հաղորդագրությունն առաջադրվում է ոչ միայն հանուն ինչ-որ բանի, այլև ընդդեմ որևէ իրական կամ երևակայական թշնամու: Այստեղ կարելի է դիմել երեք եղանակի՝ «ցեխ շպրտել», «ծաղրել» և «կլոնավորել մրցակցին»:

- «Ցեխ շարտելու» եղանակի էությունն այնպիսի պիտակների և տերմինաբանության ընտրությունն է, որոնք խոսակցության առարկային բարոյապես խիստ բացասական գնահատական են տալիս: Այս տեխնիկան դասվում է ամենակոպիտ մեթոդների շարքին և, այդուհանդերձ, մյուսներից ավելի հաճախ է կիրառվում ժամանակակից քաղաքական պայքարում:
- «Ծաղրը» ՁԼՄ-ում հաճախ գործածվող կոլեկտիվ գիտակցության վրա տեղեկատվական-հոգեբանական ազդեցություն թողնող եղանակ է: Այս միջոցի ազդեցությունը հիմնվում է նրա վրա, որ քաղաքականության սուբյեկտի առանձին արտահայտություններն ու վարքի տարրերը ծաղրելու արդյունքում վերջինիս նկատմամբ անլուրջ վերաբերմունք է ձևավորվում, որն ապագայում նաև տարածվում է նրա հետագա հայացքների ու արտահայտությունների վրա:
- «Հեղինակության վկայակոչումը» ներշնչման մեթոդներից մեկն է, որի օգտագործման բազմաթիվ դեպքերի կարող ենք հանդիպել ոչ միայն հասարակական մտքի պատմության մեջ, որտեղ նույնիսկ հայտնի է «ինքն է ասել» (լատ. *«ipse dixit»*) արտահայտությունը, այլև ՁԼՄ-ում արտացոլվող ժամանակակից քաղաքական իրականության մեջ: Նման «փաստարկի» երկակիությունն այն է, որ վերջինս ոչ թե տրամաբանական, այլ հոգեբանական գործառույթ է կատարում:
- Համոզելու նպատակ հետապնդող համանման փաստարկման մեխանիզմ է նաև ապավինումը *կարծիքների առաջատարներին*: Այս մեթոդը հանդես է գալիս իբրև քաղաքականության ու նախընտրական տեխնոլոգիաների հարցերում իրազեկ մարդկանց՝ քաղաքագետների, սոցիոլոգների, հենց իրենց՝ քաղաքական գործիչների, լրագրողների և այլոց ներգրավման տեխնիկա, որը ՁԼՄ-ում ակտիվորեն օգտագործվում է որպես անհատի արժեքային պատկերացումների ու հասարակական կարծիքի ձևավորման վրա ազդեցության արդյունավետ մեխանիզմ:
- *Վարկանիշների (ռեյթինգների) մանիպուլյացիա*: Մյուս հնարքը հասարակական կարծիքին հղման փոխարինումն է վարկանիշների (ռեյթինգների) մանիպուլյացիայով: Ընտրանքային հարցումների արդյունքում ստացված վարկանիշներն ընդամենը հասարակական կարծիքի մոդել կամ կերպար են, քանի որ հարցվողները, համաձայնելով փորձագետ-

ների կողմից կանխավ ձևակերպված դատողությունների հետ, կյանքի են կոչում դրանք: Փաստորեն, մասնակցելով հարցմանը և համաձայնելով կանխամտածված պատասխանների հետ՝ հարցվողները կյանքի են կոչում այդ մոդելներն իրենց մտքում, որոնք էլ քաղաքական նախապատվության, որոշումների ընդունման ու իրագործման իրական գործոններ են դառնում:

Այս տեսանկյունից մեծ նշանակություն ունի ՁԼՄ-ի կողմից ստեղծվող «հաջողության էֆեկտը»: Մարդիկ հակված են ընդունել այն կարծիքները, որոնք ընդհանուր են մեծամասնության համար: Այս պարագայում էլ ի հայտ է գալիս այսպես կոչված «լռության պարույրի» էֆեկտը, որը հիմնված է հասարակական կարծիքի հարցման արդյունքների մանիպուլյացիայի վրա: «Լռության պարույրի» ներգործությունն այն է, որ իրենց փոքրամասնության ներկայացուցիչ համարողները նախընտրում են լռել և չհայտնել իրենց տեսակետը (այստեղից էլ՝ երևույթի անվանումը): Այս հետաքրքիր օրինաչափությունը բացահայտել է հասարակական կարծիքի հետազոտող, գերմանացի գիտնական Է.Նոել-Նոյմանը [12]:

Ըստ էության, ՁԼՄ ազդեցության հիմնական նպատակը քաղաքական առասպելների ստեղծումն ու տարածումն է: Առասպելներն, ըստ ամերիկացի սոցիոլոգ Հ.Լասուելի, հանդես են գալիս իբրև «գաղափարների համակարգ, որը զանգվածները պատրաստ են դիտարկել իբրև ճշմարիտ՝ անկախ նրանից՝ արդյոք դրանք իրական են, թե կեղծ» [13, p. 37]:

Արդյունավետ քաղաքական հաղորդակցումը պետք է հաշվի առնի այն, որ ազդեցության տարաբնույթ հնարքները, կարծրատիպերը, զուգորդություններն ու արձագանքները երբեք մասնատված և ինքնաբերական չեն լինում, դրանք մեկը մյուսի հետ որոշակի հարաբերությունների մեջ են մտնում և այդպիսով հասարակական գիտակցության մեջ կայուն սոցիալական հավատալիքների համալիրներ են ձևավորում: Ժամանակակից հետազոտական ավանդույթը դրանք *սոցիալական առասպելներ* (միֆեր) է անվանում:

Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, թե կույր հավատքի և միֆերի դարաշրջանը վաղուց անցյալում է, սակայն մերօրյա քաղաքական փորձը մեզ հակառակն է ապացուցում:

Ինչպես գրում է գերմանացի փիլիսոփա Է. Կասիրերը. «Եթե ժամանակակից մարդն այլևս չի հավատում բնական մոգությանը, ապա նա, անկասկած, դավանում է մի շարք «սոցիալական մոգություններ» [14, c. 61]:

Լինելով կոլեկտիվ գիտակցության երևույթ՝ առասպելը ձևավորում է որոշակի աշխարհընկալում, հոգեբանական և գաղափարախոսական դիրքորոշում, որը պարուրված է նախապաշարումներով: Առասպելն իրական օբյեկտների միջև հորինված պատճառային կապեր է հաստատում, ծնում կեղծ օբյեկտներ, հորինում փառավոր անցյալի մասին լեգենդներ, կապակցում իրականությունը հորինվածի հետ:

Առասպելում առկա են նաև հետևյալ առանձնահատկությունները.

- անգիտակցականի վրա հիմնված լինելը,
- իրականի և իդեալականի միաձուլումը,
- մտքի իմպերատիվությունը. առասպելը որևէ գործողության է դրդում հենց միայն գիտակցության մեջ գոյություն ունենալու փաստի շնորհիվ, այն կառավարում է մեր վարքը,
- ընկալման չտարբերակվածությունը՝ սինկրետիզմը, երբ երևույթը չի ենթարկվում ձևական տրամաբանության օրենքներին. միևնույն երևույթը կարող է պատկանել երկու իրականությունների (մենք հասկանում ենք, որ, օրինակ, տվյալ քաղաքական գործիչը դժվար թե միայնակ կարողանա երկիրը փրկել, սակայն, մյուս կողմից, հենց այդ հանգամանքն էլ դառնում է նրա օգտին քվեարկելու մեր փաստարկը) [15, էջ 123]:

Է. Ֆրոմն ասում էր, որ քաղաքական մանիպուլյացիան գրկում է մարդուն աշխարհի ամբողջական պատկերը կազմելու հնարավորությունից, փոխարինում է այն, աբստրակտ, իրար միջև տարբեր փաստերով կապված խճանկարով [16]: Պ. Լեոնների կարծիքով՝ մարդու մեջ ծագում է հասկացությունների խառնաշփոթ, և բացակայում է իրադարձությունների փոխկապակցվածության զգացումը: Միակ համակարգը, որին նա կարող է համապատասխանեցնել առանձին փաստերը, նրա գիտակցությունում ձևավորված կարծրատիպերի համակարգն է: Այդ համակարգը կոմպորտված է պայքարի և մրցակցության, որտեղ բարի և չարի հասկացություններն ընդունվում են հավատքի վրա հիմնված [17]:

Միֆի ազդեցության տակ գտնվող մարդկանց համար այն անբեկանելի իրականություն է: Սա նշանակում է, որ միֆի միջոցով անգամ սուտը կարելի է արժանահավատ դարձնել լսարանի համար [18]: Այս հատկությունը միֆը դարձնում է մանիպուլյացիա, մասնավորապես՝ քաղաքական մանիպուլյացիայի կարևորագույն գործիք: Դրա կարևորությունը քաղաքական հաղորդակցության մեջ պայմանավորված է այն հանգամանքով, որ քաղաքականությունը հիմնված է ոչ այնքան խոր մշակված ինտելեկտուալ հայեցակարգերի, որքան քարոզչության վրա, իսկ քարոզչությունը ակեգորիաների, միֆերի... լեզու է [19, c. 120-127]:

Միֆերը ստեղծվում են քաղաքական կյանքի թատերականացման, խորհրդանշական բնույթ հաղորդելու, իրականությունը չափազանցված ներկայացնելու և այլ միջոցներով, որոնք հասարակությանը կարող են ավելի արժանահավատ և իրական թվալ, քան իրականում կան: Որպես միֆերի ստեղծման հատուկ հնարք հատկապես հաճախ օգտագործվում են սոցիալական գիտակցության մեջ ամրապնդված նախատիպերը, երբ արդեն գոյություն ունեցող և ընդունված միֆային կերպարը հարմարեցվում է ժամանակակից քաղաքական իրականության հետ: Այսպիսի միֆի հաջողության առաջին նախապայմանն այն է, որ ենթագիտակցորեն նմանություն է առաջանում նոր երևույթի և հնի միջև, որի ելքն արդեն հայտնի է [20, c. 107-109]: Միֆ ստեղծելու տարբերակ է նաև որոշակի իրականության հիման վրա նոր պատմություն ստեղծելը, որի փաստերի մեծամասնությունը կապ չունի իրականության հետ: Կիրառվում է նաև բացարձակ սուտ միֆային սյուժե հորինելը [21, c. 165]:

Ամերիկյան պրոֆեսոր Գ.Շիլլերի համաձայն՝ ԱՄՆ-ում կառավարող վերնախավի իշխանությունը հաստատող հիմնական գաղափարներն են 5 հիմնական սոցիալական միֆերը՝ անհատական ազատության և քաղաքացիների ազատ ընտրության; կարևորագույն քաղաքական ինստիտուտների չեզոքության (կոնգրեսի, դատարանի, նախագահի և ԶԼՄ-ի); մարդու եսասիրական բնույթի, նրա ագրեսիայի, սպառողական և կուտակման բնագոյների; հասարակությունում սոցիալական կոնֆլիկտների, շահագործման և ճնշման բացակայության; ԶԼՄ բազմակարծության, որոնք իրականում, չնայած իրենց բազմաթվության, վերահսկվում են խոշոր գովազդատուների, մեդիա-

սեփականատերերի և կառավարման մարմինների կողմից և հանդես են գալիս որպես պատրանքային գիտակցության միասնական ինդուստրիա [5]:

Նոր քաղաքական միջերը ստեղծվում են հստակ մշակված ծրագրի համաձայն, համապատասխան մարդկանց անձնական և սոցիալական հոգեբանության և մանիպուլյատորների նպատակներին: Ըստ Է.Կասիրերի, ժամանակակից միջի առանձնահատկությունն է դարձել նոր առասպելների «արտադրության» և «տեխնիկայի» ստեղծումը: Այսօր ոչ միայն անհատի անգիտակցականն է ստեղծում նոր առասպելներ, այլ նաև մասնագետներն են արարում դրանք. «Նոր քաղաքական առասպելներն այլևս ինքնաբուխ կերպով չեն առաջանում, դրանք անգուսպ երևակայության վայրի պտուղներ չեն: Ընդհակառակը, դրանք արհեստական ստեղծագործություններ են՝ ստեղծված հմուտ ու ճարպիկ «վարպետների» կողմից» [14, c. 61]:

Լեզվական, խոսքային հնարքների միջոցով մարդկային գիտակցության կառավարումը քաղաքական սեմանտիկայի հիմքն է: Քարոզչության և գիտակցության մանիպուլյացիայի ոլորտում լեզվի, նշանների և իմաստների դերի ուսումնասիրությամբ զբաղվող այս գիտական ուղղության հիմնադիրն է ամերիկացի սոցիոլոգ, քաղաքագետ Հարոլդ Լասուելը: Դեռ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ իրականացրած իր հետազոտության արդյունքները նա ներկայացրել է 1927թ. «Քարոզչության տեխնիկան համաշխարհային պատերազմում» գրքում [9]: Նա մշակել էր իմաստների փոխանցման կամ խեղաթյուրման նպատակով այս կամ այն բառերի օգտագործման հատուկ մեթոդներ¹: Լասուելն, ըստ էության, մեկ ամբողջական համակարգ էր ստեղծել, որի հիմքը հատուկ ընտրված համապատասխան բառերի միջոցով սոցիալական և քաղաքական միջերի ստեղծման սկզբունքներն էին:

Իհարկե, ԶԼՄ-ի կողմից յուրաքանչյուր միջի ստեղծումն ու տարածումն ուղղված է կոնկրետ նպատակի, և այդ գործընթացներում կիրառվող հնարքները յուրահատուկ են: Սակայն կարելի է առանձնացնել մի շարք հնարքներ և տեխնիկաներ, որոնք կիրառվում են ազդեցիկ մեդիա-տեքստեր ստեղծելու համար [22, c. 11]:

¹ Քաղաքական սեմանտիկան ուսումնասիրում է, թե ինչպես են մարդիկ հասկանում կարգախոսներն ու հայեցակարգերը, հիմնական քաղաքական եզրույթներն ու հասկացությունները (Տե՛ս՝ Психология лидерства, влияния, власти, В.П. Шейнов, 2-е изд., Минск, Харвест, 2008).

- **«Մն-սպիտակ» կամ կեղծ փաստարկումներ:** Երբ առաջ է քաշվում «կամ-կամ» տարբերակը և կոնսենսուսային այլընտրանքներ չեն ներկայացվում:
- **Նեգատիվ պարույրի փաստարկում:** Առանձին աննշան փոփոխությունների հետևանքներն անհիմն ուռճացվում և ընդունում են գլոբալ արհավիրքների չափեր: Այլ կերպ ասած՝ գործածվում է «*փոթորիկը բաժակում*» մոտեցումը:
- **Երևակայական հստակության ապացույցների ծուղակ:** Տեխնիկան այն է, որ որևէ հայտարարության ապացուցման համար ներկայացվում են թվեր, վիճակագրական տվյալներ, որոնք իրականությանը չեն համապատասխանում: Կամ էլ հավաստի փաստերը ստեղծագործաբար հերքվում են գոյություն չունեցող վիճակագրական տվյալների միջոցով և օղից վերցված թվերով:
- **Բացահայտման և համընդհանուր ճանաչման ծուղակ:** Օրինակ՝ «ինչպես պնդում են բոլորը...», «պետք չէ հակաճառել նրան, որ...», «մենք բոլորս արդեն համաձայնվել ենք այն փաստի հետ, որ...», «այսօր բոլորը գիտեն, որ...», «արդեն ապացուցված է, որ...», «բացահայտ է, որ...»: Հաճախ օգտագործվող հնարք է, որին շատ մասնագետներ են անդրադարձել:
- **Մեփական համոզումների երաշխիք, անձնական հեղինակության օգտագործում:** Օրինակ՝ «Ես Ձեզ երաշխավորում եմ...», «Ես արդեն հնարավորություն եմ ունեցել համոզվել նրանում, որ...», «Ոչ մի կասկած չկա նրանում, որ...»:
- **Բաժանումներ և թշնամու կերպար:** Աշխարհայացքի համակարգը կիսվում է երկու մասի՝ «մերոնք» և «օտարները», ընդ որում՝ օտարները մեխանիկորեն ձևափոխվում, վերածվում են «թշնամիների»: «Մերոնք» նկարագրվում են որպես բացարձակ դրական կերպարներ, իսկ «օտարները»՝ բացարձակ բացասական: Տեքստի բովանդակության առանցքը ձևավորվում է մեկ հիմնական արտահայտությամբ, որում զետեղված է վտանգի սպառնալիքը «մերոնց» նկատմամբ: Օրինակ՝ ժամանակակից դեկավարները կաշառակերներ են: Աշխարհը ստանում է սև-սպիտակ գունավորում: «Մերոնք» «լավն են», «օտարները»՝ «սրիկա և խաբեբա»: Այս հնարքն իր էությանմբ բավական մոտ է Ջ.Բրաունի նկարագրած «Թշնամու մատնանշում» տեխնիկային:

- **Գերբնդահանրացված մեղադրանքներ:** Արտահայտության ուժգնացման համար կարող են ներկայացվել մեղադրանքներ անմեղների հասցեին: Օրինակ՝ մեղադրանքներ բյուրոկրատների, պնդաճակատ օրինապահների, արտասահմանցիների և այլոց հասցեին:
- **Գերհուզականացում:** Հստակ թեմաները զգացմունքայնացվում են հիմնականում կոպիտ հակադրությունների միջոցով: Օրինակ՝ «իսկ բյուրոկրատները փորները բռնած բարձր կծիծաղեն Ձեզ վրա»: Ազդեցություն մեթոդներում օգտագործվում են զգացմունքային և զգացմունքայնացնող թեզիսներ, որոնց վրա ֆոկուսավորվում է ամբողջ փաստարկումը:
- **Ապագա գործողությունների վերագրում:** Հակառակ կողմին վերագրվում է, թե նրանք պատրաստ են անցնել բռնի գործողությունների, եթե անգամ ոչ հիմա, ապա մոտ ապագայում [23, c. 90-117]:
- **Կանխաստածված մոլորություն (The Red Herring):** Շեղում է ուշադրությունն իրական խնդրից, որտեղ նշանակություն է ստանում ներկայացված թեման, որպեսզի շեղի ուշադրությունը գլխավոր հարցից [24, p. 85-88]:
- **Փայլուն անորոշություններ (Glittering Generalities):** Զգացմունքայնորեն արտահայտված բառեր են, որոնք ընկալվում են որպես բարձրարժեք հասկացություններ, համոզմունքներ, որոնք լրացուցիչ տեղեկությունների կամ պատճառաբանությունների կարիք չունեն: Օգտագործվող բառերը կամ բառակապակցությունները հիմնականում ընկալվում են որպես հզորության ցուցանիշներ՝ ազատություն, հայրենասիրություն, խիզախություն, հույս, բարեփոխում [24]:
- **Ծանրակշիռ խոսք (Loaded Language):** Բառեր են, որոնք իրենց զգացմունքայնության շնորհիվ կարող են ձևափոխել կարծիքը: Այն օգտագործելիս ակնկալվում է դրական կամ բացասական արձագանք կամ ուղղորդում է որոշակի եզրահանգման: Ծանրակշիռ խոսքի բառերն ու բառակապակցությունները հանդես են գալիս «Boo!, փու՛հ, է՛հ» և «hooray!, Ուոա՛, Այո՛» տարբերակներով՝ առանձնացնելու դրական և բացասական զգացմունքային ենթատեքստը: Այս հնարքը համարվում է նաև ուղեղների լվացման տեխնիկա [24]:

Մեդիա-տեքստերում կիրառվող մանիպուլյացիոն հնարքները բազմազան են: Դրանք կարող են տարբերվել ըստ ազդեցության ուժգնության, արդյունքի և ըստ բովանդակության: Ա.Ալթունյանն իր «Քաղաքական տեքստերի վերլուծություն» գրքում անդրադառնում է հետևյալ հնարքներին [25, с. 218-220].

1. **Կրկնողություն**՝ Ա.Ալթունյանը նույնպես համարում էր, որ, եթե հաղորդագրությունը պարբերաբար կրկնվի, այն ժամանակի ընթացքում կընդունվի կամ կամրապնդվի ընկալող լսարանի գիտակցությունում:
2. **Հեզնական չակերտների օգտագործում**՝ այս մեթոդն առավելապես կիրառվում է քաղաքական տեքստերում ընդդիմադիրների թերությունները շեշտադրելու կամ սեփական անհատական ոճը ձևավորելու նպատակով: Օրինակ՝ ԱՄՆ նախագահ Ռ.Նիքսոնը հայտնի է իր «լռակյաց մեծամասնություն» արտահայտությամբ, որը հեշտությամբ կարելի է համարել հռետորական ֆիգուր կամ ֆորմալ հնարք, սակայն յուրաքանչյուր նմանատիպ արտահայտության հետևում կանգնած է կոնկրետ քաղաքական, սոցիալական ենթատեքստ, որն ուղղակի չի արտաբերվում, բայց լսարանի կողմից ընկալվում է նախապես դրված իմաստով և համապատասխան երանգավորմամբ:
3. **Մեծաստների օգտագործումը**. այսպես հեղինակներն առանձնացնում են արժեքավոր սիմվոլները, լսարանի համար նշանակալի հասկացությունները: Օրինակ՝ «Հայաստան աշխարհ» արտահայտությամբ դիմելիս ընդգծվում են լսարանի պատկանելությունը ՀՀ-ին և հայրենիքի կարևոր մասը լինելու անձնական շահը:
4. **Զուգահեռ կերպարներ և հակադրություններ**. Օրինակ՝ «Հայաստան» և դրա կողքին՝ սոցիալական խնդիրներ, ուժեղ, կայուն, զարգացող երկիր՝ ի հակադրություն այլ պետությունների, «Արևմուտք – տոտալիտար, մարդու իրավունքները ոտնահարող երկրներ» և այլն:

Ինչպես կարելի եզրակացնել վերը նկարագրված՝ ԶԼՄ-ում կիրառվող մանիպուլյատիվ հնարքներից, դրանք հաճախ նպատակաուղղված են հոգեբանական ազդեցության իրագործմանը: Մեդիա-տեքստերի ազդեցությունը տարածվում է ոչ միայն անհատի գիտակցականի վրա, այլև ընդգրկում է հուզական տիրույթը՝ ներշնչելով մանիպուլյատորի կողմից նախատեսված զգացմունքներ ու հույզեր, դրդելով համապատասխան գործողությունների [26]:

Որպես հոգեբանական ազդեցության առավել արդյունավետ տեխնիկա կարելի է առանձնացնել ներշնչումը կամ սուզեստիան:

Սուզեստիա տերմինն առաջացել է լատիներեն *suggestio*՝ ներշնչում¹ հասկացությունից: Ժամանակակից ընկալումների համաձայն՝ դա անձին ուղղված ազդեցությունն է, որը հանգեցնում է՝

- անձի որոշակի վիճակի, զգացմունքի, վերաբերմունքի ձևավորմանը՝ անկախ նրա կամքից և գիտակցությունից,
- անձի կողմից որոշակի գործողության իրականացմանը, որն անմիջականորեն չի համապատասխանում մինչ այդ նրա կողմից ընդունված նորմերին, գործունեության սկզբունքներին, դիրքորոշումներին:

Գրականության մեջ առանձնացվում են սուզեստիայի հետևյալ տեսակները՝

1. Ուղիղ սուզեստիա, որն իր հերթին բաժանվում է՝

- *Իմպերատիվ կոորդինացված սուզեստիա*: Մա անձի վրա սթրեսային ազդեցության տեսակ է, որն ավտորիտար, դիրեկտիվ բնույթ ունի: Իրագործվում է կտրուկ, հակիրճ, հաճախ մի քանի անգամ կրկնվող արտահայտությունների միջոցով և ուղեկցվում է ժեստերի, դիմախաղի և ինտոնացիայի ազդակներով: Այս տեսակը երբեմն անվանում են սուզեստիայի հայրական մեթոդ:
- *Սուզեստիվ հրահանգներ*: Մրանք ազդում են զգացմունքների, դիրքորոշումների և վարքի դրդապատճառների վրա: Իրականացվում են հանգիստ, մեղմ տոնով: Միապաղաղ են, նույնպես հաճախ կրկնվող:

2. Միջնորդավորված սուզեստիա, որը վերաբերում է ոչ բացահայտ կերպով հաղորդվող տեղեկատվությանը. չի գիտակցվում ազդեցության օբյեկտի կողմից և հիմնականում աննկատորեն է ընկալվում:

ԱՄՆ Արիզոնայի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Չալդինին նկարագրել է 5 հիմնական սկզբունք, որոնք հնարավորություն են տալիս ազդել անձի գիտակցության վրա [27]: Դրանք են՝

¹Ներշնչումը մեկ կամ մի քանի անձանց (սոցիալական խմբի) վրա խոսքի, գործողությունների և արտահայտիչ շարժումների օգնությամբ կատարվող այնպիսի ներգործությունը, որը շրջանցում է ներշնչվողի գիտակցությունն ու կամքը և հանգեցնում ներշնչողի համար ցանկալի գործողությունների, մտքերի, մտապատկերների, համոզմունքների առաջացման:

- **Փոխադարձ փոխանակման սկզբունք:** Նպատակն անհատի մեջ երախտագիտության զգացում ձևավորելն է և դրդումն է փոխադարձ ծառայություն մատուցելուն: Օրինակ՝ լրատվամիջոցները լսարանին ներշնչում են երախտագիտության, շնորհակալ լինելու զգացում կառավարության հանդեպ որոշակի զիջումների գնալու կամ բնակչությանը արտոնություններ տրամադրելու համար: Արդյունքում՝ լսարանում ձևավորվում է պարտավորվածություն՝ չդժգոհել որոշակի քայլերից կամ սատարել այդ գործիքներին քաղաքական պայքարում: Հաճախ փոխանակումն անհամաչափ և անարդար է լինում:
- **Հետևողականության սկզբունք:** Մեծամասնությունը, երբ կայացնում է որոշում կամ որևիցե քայլ է կատարում, ամեն կերպ փորձում է պաշտպանել իր դիրքորոշումը: Այս հնարքի միջոցով անձին դրդում են որոշակի խոստում տալուն և, հետևաբար, դրան հավատարիմ լինելուն: Ի դեպ՝ առավել անդրժելի խոստումները հանրային խոստումներն են: Օրինակ՝ մարդը, որը մեկ անգամ որևէ հարցում որոշակի քաղաքական ուժի իր աջակցությունն է հայտնում, հաճախ ստիպված է լինում հետևողական երևալու համար սատարել այդ ուժին այլ՝ ավելի սկզբունքային հարցերում:
- **Սոցիալական ապացույցի սկզբունք:** Մարդիկ, հատկապես այն ժամանակ, երբ իրենք էլ վստահ չեն իրենց որոշման վրա, հաճախ նմանակում են ուրիշների ռեակցիաները և արարքները: Նմանակման սկզբունքը հաճախ է խաղարկվում ՁԼՄ-ում: Հեռուստատեսությամբ հաճախ կարելի է տեսնել, թե ինչպես են տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչները նմանատիպ դատողություններ հնչեցնում կամ զանգվածային միջոցառումների մասնակցում:
- **Բարիդրացիական վերաբերմունքի սկզբունք:** Ավելի հեշտ է «այո» ասել կամ համաձայնել այն անձանց հետ, ովքեր համակրելի են: Այս պարագայում լրատվամիջոցները տեղեկատվությունը տարածում են հասարակության սերը վայելող անձանց՝ աստղերի միջոցով:
- **Հեղինակության ներգրավում:** Ռ.Չալիինին նույնպես անդրադառնում է այս հնարքին՝ ասելով, որ, ըստ հետազոտողների, մարդիկ, առավել ևս, երբ իրենց անիրազեկ են զգում որոշ հարցերում, ավելի հակված են վստահելու իրենցից ավելի բարձր դիրք, կարգավիճակ, կոչում ունեցող

մարդկանց: Օրինակ, երբ լրատվամիջոցները բարդ հարցերի քննարկմանն ու պարզաբանմանն են ներգրավում փորձագետներին:

- **Ղեկիցիտի՝ սակավության սկզբունք:** Այստեղ հիմնական նպատակը սահմանափակ առաջարկի տպավորություն ստեղծելն է, ինչը պայմանավորում է լսարանում արհեստական պահանջմունքի ձևավորում, քանի որ մարդիկ միշտ ձգտում են ունենալ այն, ինչը սահմանափակ քանակով է կամ դժվար հասանելի: Այսպես, օրինակ, լրատվամիջոցները կարող են կեղծ հետապնդումների, զանգվածների կողմից չհասկացված, թշվառ լինելու կամ քննադատության պատրանք ձևավորելու միջոցով գրավել լսարանի ուշադրությունն ու հետաքրքրությունն այդ անձանց կամ ուժերի հանդեպ:

Ներշնչման կամ սուզեստիայի ազդեցության արդյունավետությունը, ըստ հետազոտողների, գլխավորապես կախված է սուզեստիվ ազդեցության մեթոդների կիրառությունից, որտեղ կարևոր է համարվում ոչ այնքան ինֆորմացիայի բովանդակությունը, որքան դրա ներկայացման ձևը, զգացմունքային հատկանիշները, արտահայտչականությունը: Այլ կերպ ասած՝ ավելի մեծ ազդեցություն ունի ոչ թե այն, թե «ինչ է ասվում», այլ այն, թե «ինչպես է ասվում»:

Լեզվական միջոցներով սուզեստիվ ազդեցության մասին խոսելիս, ուշադրությունը դարձնում ենք ոչ թե իրականության օբյեկտիվ նկարագրությանը, այլ դրա սուբյեկտիվ մեկնաբանության տարբերակներին: Ներշնչման լեզվական հնարքները թույլ են տալիս միննույն երևույթը տարբեր կերպ ներկայացնել, ինչը հնարավորություն է ընձեռում ստեղծել իրականության արհեստական պատկերներ [28, c. 168]: Օրինակ՝ մարդկանց միննույն խմբին, որը պայքարում է ինքնորոշման համար, լրատվամիջոցները կարող են անվանել «ազատագրողներ», իսկ մյուս կողմից՝ «անջատողականներ»:

Մեր օրերում ՉԼՄ-ում հաճախ կիրառվող հոգեբանական ազդեցության մեխանիզմներից է նաև նյարդալեզվաբանական ծրագրավորումը՝ ՆԼԾ-ն (*Neuro-Linguistic Programming – NLP*): Կիրառական հոգեբանության այս ուղղությունը ստեղծվել է ԱՄՆ-ում 1970-ականների կեսերին, Ջ.Գրինդերի և Ռ.Բենդլերի կողմից: ՆԼ ծրագրավորման հիմնադրույթն է այն, որ մարդիկ իրենց ուղղված հաղորդագրություններն ընկալում են 3 տարբեր հարթությունում:

1. Վիզուալ (այս տիպն իրականությունն ընկալում է տեսողական պատկերների, կերպարների միջոցով: Սա ամենատարածված տիպն է, մարդկանց մոտ 80%-ը վիզուալներ են):
2. Աուդիալ (այս տիպին պատկանող մարդիկ աշխարհը նկարագրում և պատկերացնում են լսողական, ձայնային կերպարների միջոցով: Մարդկանց 15%-ն աուդիալ է):
3. Կինեստետիկ (5%-ն աշխարհն ընկալում է զգացմունքների և զգացողությունների միջոցով (համի, շոշափելիքի և այլն):

Գիտակցության մեջ միջինը տպավորվում և պահպանվում է վիզուալ ալիքների միջոցով ստացված տեղեկատվության 75%-ը, աուդիալ ճանապարհով ստացած տեղեկատվության 13%-ը, իսկ մնացածը ստացվում է կինեստետիկ ճանապարհով: Զրույցն ավելի բնական դարձնելու համար կարելի է այդ ալիքները համապատասխանեցնել և հարմարեցնել լեզվի միջոցով [3, c. 76-86]: Արդյունավետ մանիպուլյացիան ենթադրում է լսարանի լեզվով երկխոսության իրականացում, որտեղ հաղորդագրությունը միաժամանակ պետք է ուղղված լինի և՛ վիզուալներին (լինի պատկերավոր), և՛ աուդիալներին (ձայնային և ինտոնացիոն համապատասխան ազդեցություն ունենա), և՛ կինեստետիկներին (ստեղծելով համապատասխան զգացողություններ՝ համակրանք կամ տհաճություն) [29, c. 35]: Այս սկզբունքն իրագործվում է յուրաքանչյուր տիպի համար համապատասխան պրեդիկատներ կիրառելով: Օրինակ՝ վիզուալների համար. «պարզ երևում է», «ակնհայտ է», «վառ է», աուդիալների համար՝ «հնչեղ է», «աղմուկ բարձրացավ», կինեստետիկների համար՝ «ծանր հարց է», «ակնհայտ է», «նուրբ, փխրուն թեմա է» և այլն:

ՆԼԾ-ն վարքային մոդել է և մանրամասնորեն մշակված տեխնիկական հնարքների համալիր, որը հիմնված է մարդկային գիտակցության և ենթագիտակցության վրա լեզվական ձևերի ազդեցության, ուղեղի և լեզվի փոխազդեցության արդյունքում զարգացում ստացող ձևերի և կարծրատիպերի կամ «ծրագրերի» վրա:

ԶԼՄ-ում ՆԼԾ տեխնիկաները նպատակահարմար է կիրառել հատկապես դրանց ենթագիտակցության վրա ազդեցություն ունենալու տեսանկյունից: Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում խարսխման տեխնիկաները: Տվյալ համատեքստում խարսխիչը ցանկացած արտաքին

գրգռիչ է, խթան, որը հանգեցնում է համապատասխան արձագանքի: Խարսխումը գործընթաց է, որի միջոցով յուրաքանչյուր իրադարձություն՝ ներքին կամ արտաքին (բառ, ձայն, ժեստ, ինտոնացիա, հայում), կարող է կապված լինել որևէ ռեակցիայի և կիրառման դեպքում նորից առաջացնի դրա դրսևորումը: Որպես խարիսխ կարող են հանդես գալ ցանկացած բառ, հնչյուն, պատկեր և այլն:

Առանձնացնում են խարիսխների երեք հիմնական տեսակներ՝

1. Դրական սոցիալական դիրքորոշումների խարիսխ

Այս տեսակը ենթադրում է թևավոր խոսքերի, նշանավոր անձանց արտահայտությունների, ասացվածքների, հայտնի անեկդոտների ներառումը մեդիա-տեքստում: Նման տեքստերը, որպես կանոն, հիմնվում են այլուզիաների վրա: Այլուզիան հնարք է, որի շրջանակներում ոճային էֆեկտները ստեղծվում են լսարանին արդեն հայտնի ֆիլմերի, գրքերի, արտահայտությունների միջոցով:

2. Դրական էմոցիոնալ բնույթի խարիսխ

Այս հնարքը հիմնվում է հումորի, բարյացակամ տրամադրվածության (ուրախություն, տոն, երջանկություն և այլն), երջանիկ մարդկանց, հաճելի կերպարների ներկայացման և այլնի վրա: Այսպիսով, կերտվում են դրական տրամադրվածություն, ոգևորություն, որախության կայուն պատկեր:

3. Արբետիպերի և ազգային մշակույթի պատկերների խարիսխ

Այս դեպքում անդրադարձ է կատարվում խորքային ավանդույթներին, օգտագործվում են ազգային ֆոլկլորային կերպարները: Օրինակ՝ «բոլորը Քաջ Նազարի նման», «մեջը խոսեց Ծուռ Սասունը», «ժողովրդի համբերության բաժակը» և այլն:

Մեդիա-տեքստերում սուգեստիվ տեխնիկաների կիրառման գործընթացում, բացի նյարդալեզվաբանական ծրագրավորումից, հաճախ կիրառվում են նաև Էրիկսոնյան հիպնոսի տեխնիկաները և հնարքները:

Էրիկսոնյան հիպնոսի տեխնիկաների խումբը ներառում է սորանսի մեջ զցելու կամ սթափ՝ արթուն իրավիճակում ներշնչելու լեզվական ռազմավարությունները:

Էրիկսոնյան հիպնոսի հիմնական գաղափարն այն է, որ այստեղ, որպես կանոն, բացակայում են ուղիղ հրահանգները: Փոխարենը՝ նկատելի են քննարկում, հարց ու պատասխան, խորհուրդ որևէ հարցի վերաբերյալ: Ար-

դյունքում՝ այս տիպի լեզվական տեխնիկաները հնարավորություն են տալիս հասնել ցանկալի արդյունքին՝ խուսափել մարդկանց ուղիղ հրահանգների հակադրվելու սովորությունից: Էրիկսոնյան հիպնոսն առաջարկում է մի շարք հնարքներ նման ազդեցությունը չեզոքացնելու համար: Դրանցից հիմնականներն են.

- Թրյուիզմ
- Ընտրության խաբկանք
- Ենթադրություններ (*presuppositions*՝ լատիներեն *prae* - առաջ, նախա- և *suppositio* - գրավ, ավանդ)
- Հակադրությունների օգտագործում
- Լիարժեք ընտրություն:

Դիտարկենք յուրաքանչյուրն առանձին:

Թրյուիզմը (անգլերեն՝ *truism, true*՝ ճշգրիտ, հայտնի ճշմարտություն), որպես կանոն, գերընդհանրացված արտահայտություն է: Որպես հոգետեխնիկա՝ այն ներկայացնում է հիպնոտիկ հրահանգի փոխարինում ընդհանրացված արտահայտությամբ: Օրինակ՝ «օրինապահ քաղաքացին այդպես չէր վարվի», «բոլորը լքում են երկիրը»:

Ընտրության խաբկանքի շրջանակներում լսարանին կանգնեցնում են կեղծ ընտրության առջև՝ առաջարկելով ընտրել միևնույն տարբերակը չնչին տարբերությամբ: Սա ստեղծում է ազատ ընտրության պատրանք, սակայն այլընտրանքները սահմանափակ են կամ նույնիսկ բացակայում են: Օրինակ՝ «Դուք ընտրությունների կգնաք առավոտյան, թե՞ երեկոյան ժամին»:

Ենթադրությունների կիրառման տեխնիկայի շրջանակներում անհրաժեշտ հրահանգը ներկայացվում է որպես նախնական գործողություն կամ նախապայման որևէ այլ, պակաս կարևոր և գիտակցական վերահսկողությանը ենթարկվող գործողության իրականացման համար: Միևնույն ժամանակ, իրական հրահանգը դուրս է մնում գիտակցության քննադատությունից: Օրինակ՝ «Մինչև X-ին քվեարկելը, վերհիշեք նրա տված խոստումները»:

Հակադրությունների կիրառման տեխնիկայում օգտագործում են լսարանի հակադրությունը ներշնչանքին՝ արհեստականորեն ամրացնելով հիպնոտիկ հրահանգը լսարանի դիտարկվող վարքին: Այստեղ հարկավոր է հետևել արտահայտությունների որոշակի խիստ հաջորդականության պահ-

պանամանը և դրանց համար նախատեսված քերականական ժամանակներին:

Օրինակ՝ «Որքան երկար էք լսում նշված գործչին, այնքան ավելի պարզ է դառնում, որ նա հետևողական է և խելացի»:

Լիարժեք ընտրության տեխնիկան ներկայացնում է ընտրության բոլոր հնարավոր տարբերակները, սակայն մանիպուլյատորի նպատակների համար շահեկան տեսանկյունից: Եթե ընտրության խաբկանքի հնարքի դեպքում ընտրության տարբերակները տեքստերում արհեստականորեն սահմանափակվում էին, ապա այստեղ ներկայացվում են անհատի վարքի բոլոր հնարավոր տարբերակները, այն առանձնահատկությամբ, որ լսարանի շահավետ և անշահավետ վարքը ներկայացվում է մանիպուլյատորի համար որպես միևնույն օգտակարություն ունեցող: Օրինակ՝ «Դուք կարող եք գնալ ընտրությունների և քվեարկել, կամ, իհարկե, կարող եք մնալ տանը և կորցնել ձեր ձայնի իրավունքը»:

Այսպիսով, ՋԼՄ-ի կողմից կիրառվող ազդեցության ձևերն ու հնարքները բազմազան են և կարող են օգտագործվել ինչպես առանձին-առանձին, այնպես էլ տարբեր համադրություններով: Այնուհանդերձ, տեղեկատվության կառավարման մասնագետը պետք է ոչ միայն դրանք տեղին և արդյունավետ կիրառելու բավականաչափ հմտություններ ունենա, այլ նաև կարողանա դրանց հակազդելու եղանակներ մշակել:

Հուլիս, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Debray R.*, Cours de mediologie generale, Paris, 1991.
2. *Иголкин А.*, Пресса как оружие власти // Россия XXI, 1995, N 11-12.
3. *Кара-Мурза С.Г.*, Манипуляция сознанием, М., 2009.
4. *Франке Г.*, Манипулируемый человек, М., 1964.
5. *Шиллер Г.*, Манипуляторы сознанием, М., 1980.
6. *Амелин В.*, Социология политики, М., 1992.
7. *Швидунова А.*, СМИ как неотъемлемый элемент политических коммуникаций, 2006. <http://evartist.narod.ru/text5/86.htm>
8. *Brown J.A.*, Techniques of persuasion. From propaganda to brainwashing, Harmondsworth, 1963.
9. *Lasswell H.D.*, Propaganda Technique In The World War London. Kegan Paul, Trench, Trubner&C», Lid New York: Alfred A. Knopf, 1927.
10. *Cohen, B.* (1963). The Press and Foreign Policy. Princeton, NJ: Princeton University Press.
11. *Burstin D.*, The Image: A Guide to Pseudo-Events in America, N.Y., Vintage Books, 1992.

12. *Ноэль-Нойман Э.*, Общественное мнение: открытие спирали молчания, Москва, 1996.
13. *Lasswell H., Leites N.*, Language of Politics, N.Y., 1949.
14. *Кассирер Э.*, Техника современных политических мифов, «Вестник Московского университета», Сер. 7, №2, Москва, 1990.
15. *Մելքոնյան Ն.Ս.*, «Քաղաքական իմիջ. մեկնաբանություններ և ձևավորման սկզբունքներ», 2007:
16. *Фромм Э.*, Бегство от свободы, Минск, 1998.
17. *Лернер М.*, Развитие цивилизации в Америке, М., 1992.
18. *Лобок А.М.*, Антропология мифа, с. 24-25, Банк культурной информации, Екатеринбург, 1997.
19. *Шейгал Е.И.*, Семиотика политического дискурса, ВГПУ, Волгоград, 2000.
20. *Полосин В.С.*, Религия. Государство, «Ладомир», М., 1999.
21. *Шомова С.*, Политические шахматы паблик рилейшнз как интеллектуальная игра, Москва, «РИП-холдинг», 2003.
22. *Черепанова И.Ю.*, Заговор Народа: Как создать сильный политический текст, Москва, КСП+, 2002.
23. *Бредемайер К.*, Черная риторика: Власть и магия слова, 6-е изд., Москва, Альпина бизнес букс, 2008.
24. *Riker W.H.*, The Art of Political Manipulation, New Haven, Yale Univ. Press, 1986.
25. *Алтунян А.Г.*, Анализ политических текстов, Москва, Логос, 2010.
26. *Должикова С.Н.*, Манипулятивные стратегии медиатекста // Научно-практический журнал Краснодарского филиала РГТЭУ «Сфера услуг: инновации и качество», Выпуск №3, г.Краснодар, 2011.
27. *Robert B. Cialdini*, Influence. Science and Practice, 4th ed., Boston: Allyn&Bacon, 2001.
28. *Малинин А.В.*, «Социология рекламного воздействия», Питер, 2005.
29. *Дж.О'Коннор, Дж.Сеймор*, Введение в нейролингвистическое программирование, Челябинск, «Библиотека А.Миллера», 1998.

**ԶԼՄ-ՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻՈՆ
ՀՆԱՐՔՆԵՐՆ ՈՒ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

Նվարդ Մելքոնյան

Ամփոփագիր

Հոդվածում դիտարկվում են սոցիալ-հոգեբանական ներգործության հիմնական հնարքները և տեխնոլոգիաները, որոնք օգտագործվում են զանգվածային լրատվամիջոցներում՝ հանրային կարծիքի վրա ազդեցության համար: Բացահայտվում են մանիպուլյացիայի էությունը, գործառույթները և հնարավորությունները: Ներկայացված են օտարերկրացի հետազոտողների (Ջ.Բրաուն, Ռ.Չալդինի, Հ.Շիլլեր և այլք) առաջարկած մանիպուլյատիվ տեխնիկաների և մեթոդների դասակարգումները: Դիտարկվում են նաև ԶԼՄ-ում արդի միջաստեղծման տեխնիկաները, քանի որ մանի-

սուլացումը հիմնականում հենվում է սոցիալական միջաբանության վրա: Բացի այդ, արդի մեդիայում աճել է մանիպուլացիան հնարքների և միջոցների դերը, որոնք հենվում են զգացմունքային-հուզական ոլորտի վրա: Աշխատանքում ներկայացված են նաև անհատական և զանգվածային հոգեբանության (սուգեստիվ տեխնիկաներ և ՆԼՄ) առանձնահատկությունները:

МАНИПУЛЯТИВНЫЕ ТЕХНИКИ И МЕХАНИЗМЫ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ В СМИ

Нвард Мелконян

Резюме

В данной статье рассмотрены основные приемы и технологии социально-психологического воздействия, используемые в средствах массовой информации для влияния на общественное мнение. Раскрывается сущность, функции и возможности манипуляции. В статье представлены различные классификации манипулятивных техник и методов, предложенные зарубежными исследователями (Дж.Браун, Р.Чалдини, Г.Шиллер и др.). Автор также рассматривает техники современного мифотворчества в СМИ, так как манипулирование в основном опирается на социальную мифологию. Кроме того, в современных медиа возросла роль приемов и способов манипулирования, опирающихся на чувственно-эмоциональную сферу, особенности индивидуальной и массовой психологии (суггестивные техники и НЛП), которые также представлены в данной работе.

MANIPULATIVE TECHNIQUES AND MECHANISMS FOR SOCIO-PSYCHOLOGICAL INFLUENCE THROUGH MEDIA

Nvard Melkonyan

Resume

The article reviews the main techniques and technologies of socio-psychological influence used in mass media to impact public opinion. The essence, functions and potential of manipulation are uncovered. The article presents various classifications of manipulation techniques and methods proposed by foreign researchers (J. Brown, R. Cialdini, H. Schiller and others). The techniques of modern myth-making in mass media are reviewed, since manipulation is mainly based on social mythology. Also, in the modern media manipulation techniques and modes based on sensitive-emotional area, as well as on traits of individual and mass psychology (suggestive techniques and NLP) are playing an increasingly larger role, and these are presented in the work, too.

**ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ,
ՀՈՒՆԱԿԱՆ, ՀՐԵԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ
ԵՎ ԱՌՑԱՆՑ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ**

Գևորգ Պետրոսյան՝

Բանալի բառեր՝ մեղիա, Թուրքիա, ազգային փոքրամասնություններ, լրատվամիջոցներ, «Ակոս», «Մարմարա», «Ժամանակ»:

Թուրքիայում տասնամյակներ շարունակ տպագրվում են հայկական, հունական և հրեական պարբերականներ, որոնք այժմ ծանր ժամանակաշրջան են ապրում, քանի որ ինդիվիդուալ կան ինչպես ֆինանսավորման, այնպես էլ համացանցի առկայության պայմաններում տպագիր տարբերակների վաճառքի զգալի նվազման հետ կապված: Եվս մեկ ինդիվիդուալ է նաև հայ, հույն և հրեա համայնքների, ինչպես նաև մայրենի լեզվով կարդացողների թվի նվազումը: Համաշխարհային մեղիա-փոխակերպումներն անդրադառնում են նաև Թուրքիայի ազգային և կրոնական փոքրամասնությունների լրատվամիջոցների վրա, որոնք ևս սկսել են նախապատվությունը տալ համացանցին կամ էլ ավելի ակտիվ ներկայանալ այդ տիրույթում:

Հայկական և հայերեն լրատվամիջոցներ

Տարիների ընթացքում նվազել են ոչ միայն ազգային փոքրամասնությունների պարբերականների տպագրության ծավալները, այլև կրճատվել է հենց պարբերականների թիվը: Համեմատության համար. 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում (նաև Կ.Պոլսից դուրս) տպագրվում էր մեկ և կես տասնյակից ավելի հայկական պարբերական, մինչդեռ այսօր Թուրքիայում տպագրվում է միայն երկու հայերեն օրաթերթ [1]:

Թուրքիայում այժմ լույս են տեսնում հայկական «Ժամանակ» և «Նոր Մարմարա» օրաթերթերը (երկուսն էլ՝ արևմտահայերեն), «Ակոս» շաբաթաթերթը (արևմտահայերեն և թուրքերեն), «Փարոս», «Լույս», «Շողակաթ», «Լրա-

¹ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հայցորդ, թուրքագետ:

բեր» և այլ ամսագրեր: Գործարկվում են հայկական տպագիր թերթերի, ամսագրերի լրատվակայքերը: Իր ակտիվությամբ առանձնանում է Ստամբուլում լույս տեսնող «Ակոս» շաբաթաթերթի պաշտոնական կայքը, որը գործում է որպես տեղեկություններով հարուստ և օպերատիվ լրատվակայք: Վերջին շրջանում վերագործարկված կայքով է ներկայանում նաև «Ժամանակ» օրաթերթը:

Բացի հայկական լրատվամիջոցներից, Թուրքիայում հայերեն (արևելահայերեն) տարբերակ ունի պետական TRT հեռուստառադիոընկերության TRT World նախագիծը, որը մի քանի տասնյակ լեզվով լրատվություն է մատուցում հիմնականում Թուրքիայի վերաբերյալ: TRT World-ի հայերեն լրատվակայքը¹ գերազանցապես ներկայացնում է թուրքերեն տարբերակի հայերեն (արևելահայերեն) թարգմանված բովանդակությունը, սակայն մեծ ակտիվություն չունի: Կայքի արևելահայերեն բովանդակության մեջ շատ են ինչպես քերականական, այնպես էլ կետադրական ու շարահյուսական սխալները, լեզվամտածողության տեսանկյունից նույնպես ակնհայտ տարբերություններ կան:

«Ակոս» շաբաթաթերթն ու լրատվակայքը

«Ակոս» (թուրք.՝ *Agos*) շաբաթաթերթը սկսել է հրատարակվել 1996թ. ապրիլից: Պարբերականի հիմնադիրներն են Հրանտ Դինքը, Լուիզ Բաքարը, Հարություն Շեշեթյանը, Աննա Թուրայը: Պատկանում է «Ակոս հրատարակություն» ընկերությանը, որը ղեկավարում է Ռահիլ Դինքը: Շաբաթաթերթը 24 էջից է բաղկացած, լույս է տեսնում շաբաթը մեկ անգամ: «Ակոսի» տպագիր օրինակի 20 էջը թուրքերեն է, 4 էջը՝ արևմտահայերեն:

«Ակոսի» գլխավոր խմբագիրը մինչև 2007թ. եղել է Հրանտ Դինքը: Նրա սպանությունից հետո, 2007-2010թթ., հայկական պարբերականի գլխավոր խմբագիրն է եղել Էթիեն Մահչուփյանը², 2010- 2015թթ.՝ Ռոբեր Քոփթաշը, իսկ 2015-ի հունվարից մինչ օրս «Ակոսի» խմբագրապետն է Էդվարդ Տանձիկյանը³, հայերեն բաժնի խմբագիրն է Բագրատ Էստուկյանը: Պարբերականի

¹ TRT World-Հայերեն, պաշտոնական կայք, <http://www.trt.net.tr/armenian>.

² 2014-2015թթ. Թուրքիայի վարչապետի գլխավոր խորհրդականն էր:

³ Rober Koptaş'tan veda, Agos'un yeni yayın yönetmeni Yetvart Danzikyan, Demokrat Haber, <http://www.demokrathaber.net/medya/rober-koptastan-veda-agosun-yeni-yayin-yonetmeni-yetvart-danzikyan-h44077.html>.

խմբագրությունը Ստամբուլում է: «Ակօսի» տպաքանակը կազմում է շաբաթական 4000-5000 օրինակ¹:

«Ակօսն» իր ուշադրության կենտրոնում է պահում ոչ միայն հայ համայնքի խնդիրները, այլ նաև անդրադառնում է Թուրքիայի ներքին և արտաքին խնդիրներին, թեմաների լայն շրջանակների՝ քաղաքականություն, հասարակություն, մշակույթ, փոքրամասնությունների խնդիրներ, մարդու իրավունքներ և այլն:

«Ակօսի» առցանց տարբերակը (<http://agos.com.tr>) բավական ակտիվ է²: Այստեղ տեղ են գտնում ինչպես սեփական նորությունները, հոդվածները, ֆոտոռեպորտաժները, այնպես էլ տպագիր տարբերակում տեղ գտած նյութերը: Սկզբնական շրջանում «Ակօսի» լրատվակայքի ամբողջ բովանդակությունը հասանելի էր վճարովի բաժանորդներին, սակայն վերջին մի քանի տարիներին լրատվակայքի նյութերը բաց են բոլոր ընթերցողների համար: Ի տարբերություն «Ակօսի» տպագիր տարբերակի, կայքը, թուրքերենից և հայերենից բացի, մատուցում է նաև անգլերեն տեղեկատվություն, սակայն հիմնական բաժինը, այնուամենայնիվ, թուրքերենն է: «Ակօսի» կայքը հաճախ է ենթարկվում թուրքական հաքերային հարձակումների³, թիրախավորվում է ազգայնամոլական շրջանակների կողմից: «Ակօսի» հոդվածագիրների թվում են հայտնի թուրք պատմաբան Բասքըն Օրանը, Վահագն Քեշիշյանը, Բագրատ Էստուկյանը, Էդվարդ Տանձիկյանը, Պերճուհի Բերբերյանն ու այլք⁴:

«Մարմարա»/«Նոր Մարմարա» օրաթերթն ու առցանց պարբերականը

Թուրքիայում լույս տեսնող հայկական հին և հեղինակավոր պարբերականներից է «Մարմարան» (թուրք.՝ *Marmara*), որը 1967թ. վերանվանվել է «Նոր Մարմարա» (թուրք.՝ *Nor Marmara*) [2, էջ 82]: Թերթը ներկայանում է որպես «քաղաքական-հասարակական օրաթերթ»: Թերթը հիմնել է լրագրող Սուրեն Շամյանը: Առաջին համարը հրատարակվել է 1940թ. օգոստոսի 31-ին⁵: Լույս է տեսնում շաբաթվա վեց օրերին (բացի կիրակի օրվանից): Թերթի գլխավոր

¹ Azinlikların sesi kısık, Radikal, http://www.radikal.com.tr/turkiye/azinliklarin_sesi_kisik-1056953.

² «Ակօս», պաշտոնական կայք, <http://www.agos.com.tr/>.

³ Թուրք հաքերները հարձակվել են «Ակօսի» կայքի վրա, Թուրքազիտական պորտալ, <http://allturkey.am/10759>:

⁴ Yazarlar, Agos, <http://www.agos.com.tr/tr/yazarlar?page=1>.

⁵ Նոր Մարմարա, Մեր մասին, <http://www.normarmara.com/mermasin.html>.

խմբագիրն է Ռոբերտ Հատտեջյանը (Թուրքիայում հայտնի է Ռոբերտ Հադդելեր անունով)¹, որն այս պաշտոնը զբաղեցնում է 1967 թվականից: Թերթի խմբագրությունը Ստամբուլում է: «Նոր Մարմարան» լույս է տեսնում արևմտահայերեն, սակայն ուրբաթ օրերի համարում լինում են նաև թուրքերեն հոդվածներ: Տպաքանակը 1000-1500 օրինակ է, բաղկացած է 4 էջից:

Ունի իր առցանց տարբերակը² (<http://www.normarmara.com>), որը վերջին ամիսներին ակտիվացրել է աշխատանքը: Առցանց տարբերակը միայն արևմտահայերեն է: Այստեղ տեղ են գտնում հիմնականում տպագիր տարբերակի նյութերը: Երկար ժամանակ թերթի կայքում գետնելվում էր միայն այդ օրվա տպագիր թերթի համարի պատճենված տարբերակը, սակայն 2015 թվականից կայքը փոփոխությունների է ենթարկվել, ավելացել են արխիվը, գլխավոր խմբագիր Հատտեջյանի գրքերի մասին պատմող առանձին բաժինը և այլն: Կայքի թարմացվող լրահոսում տեղ են գտնում ոչ միայն Թուրքիայի հայերին վերաբերող նորություններ, այլ նաև տեղեկություններ Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքական կյանքից:

«Ժամանակ» օրաթերթն ու լրատվակայքը

«Ժամանակ» օրաթերթը Թուրքիայում լույս տեսնող հայկական պարբերականներից ամենահինն է: Այն նաև առանց ընդհատումների լույս տեսնող Թուրքիայի ամենահին թերթն է³: Ներկայանում է որպես «քաղաքական ժողովրդական օրաթերթ»:

Թերթը լույս է տեսնում միայն հայերեն (արևմտահայերեն), բաղկացած է 4 էջից: «Ժամանակը» հիմնադրել են Միսակ և Սարգիս Քոչունյան եղբայրները 1908թ.: Հիմնադրման օրվանից հայկական թերթի գլխավոր խմբագիրներն են եղել Քոչունյան ընտանիքի ներկայացուցիչները: Այժմ գլխավոր խմբագիրն է Արա Քոչունյանը, որն այս պաշտոնը զբաղեցնում է 1992 թվականից: 1920-30-ական թթ. թերթը ժամանակավորապես կրել է «Ժողովրդի ձայն-Ժամանակ» («Ժողովրդի ձայն» թերթի հետ միաժամանակ տպագրվելու համար), ապա նաև «Ժամանակ Թուրքիա» անվանումը [2, էջ 82]: Խմբագրությունը

¹ Ermeni gazeteleri, ESI, http://www.esiweb.org/index.php?lang=tr&id=322&debate_ID=4&slide_ID=7.

² «Նոր Մարմարա», պաշտոնական կայք, <http://www.normarmara.com/marmara.htm>.

³ Böyle olur Jamanak Gazetesi'nin kutlaması!, T24, 2013,

<http://t24.com.tr/yazarlar/raffi-a-hermonn/boyle-olur-jamanak-gazetesinin-kutlamasi>, 6790.

Ստամբուլում է: Տպաքանակը 1500-2000 օրինակ է¹: Ցավոք, «Ժամանակի», ինչպես և Թուրքիայում լույս տեսնող մյուս հայկական պարբերականների տպագիր տարբերակների քանակը տարեցտարի նվազում է, ինչը պայմանավորված է հայերեն ընթերցողների քանակի անկումով և համացանցի առկայությամբ:

«Ժամանակն» ուշադրության կենտրոնում է պահում Թուրքիայի հայ համայնքի և ընդհանրապես հայության խնդիրները, առօրյան, անդրադառնում է նաև այլ թեմաների, այդ թվում՝ քաղաքական, հասարակական: «Ժամանակում» են տպագրվել հայտնի հայ մտավորականներ Դանիել Վարուժանը, Գրիգոր Զոհրապը, Վահան Թեքեյանը, Ռուբեն Սևակը, Զապել Եսայանը, Հովհաննես Թումանյանը, Երվանդ Օտյանը և այլք:

«Ժամանակը» համացանցում որոշակի պասիվությունից հետո 2015թ. առաջին կեսին վերագործարկեց իր կայքը (<http://www.jamanak.com/>), որը ստեղծվել է «Գյուլբենկյան» հիմնադրամի աջակցությամբ²: Կայքի բովանդակությունը հասանելի է միայն արևմտահայերենով: Կայքում տեղ են գտնում Թուրքիայի հայերի կյանքին, Հայաստանին և համայն հայությանը վերաբերող նորություններ, վերլուծական հոդվածներ, հարցազրույցներ, խմբագրականներ, նաև 2006-2009թթ. թերթի համարների արխիվը³:

Թուրքիայում լույս տեսնող հայկական հանդեսները

Թուրքիայում լույս են տեսնում նաև մի շարք հայկական ամսագրեր, որոնք պատկանում են կամ Պոլսո Հայոց պատրիարքարանին, կամ էլ մասնավոր են: Թուրքիայի հայ համայնքի՝ ներկայում հրատարակվող ամսագրերը հիմնադրվել են ոչ վաղ անցյալում և մասնավոր են:

«Փարոս» (թուրք.՝ *Paros*) ամսաթերթը լույս է տեսնում 2011 թվականից Ստամբուլում, միայն թուրքերեն է: Անդրադառնում է հիմնականում հասարակական կյանքին, քաղաքական թեմաներ չի արձարծում: Ունի իր կայքը⁴, որը նույնպես միայն թուրքերեն է:

«Լույս» (թուրք.՝ *Luis*) ամսագիրը լույս է տեսնում 2013 թվականից: Հրատարակվում է Ստամբուլում: Թուրքերեն է: Անդրադառնում է հասարակա-

¹ Teknolojiye direnen azinliklar, Aksiyon, 1995,

<http://www.aksiyon.com.tr/aksiyon/haber-1166-34-teknolojiye-direnen-azinliklar.html>.

² Ժամանակ, պաշտոնական կայք, <http://www.jamanak.com/>.

³ Ժամանակ, արխիվ, [http://www.jamanak.com/arxivpdf?field_date_value\[value\]=&page=42](http://www.jamanak.com/arxivpdf?field_date_value[value]=&page=42):

⁴ Փարոս, պաշտոնական կայք, <http://www.paros.com.tr/>:

կան կյանքին, մշակույթին, քաղաքական ուղղվածություն չունի: Համացանցում գործարկված է «Լույսի» պաշտոնական կայքը, որը միայն թուրքերեն է¹:

Պոլսո Հայոց պատրիարքարանը լույս է ընծայում «Շոդակաթ» ամսագիրը, որտեղ անդրադարձ կա հոգևոր կյանքի, պատմական, մշակութային թեմաներին²: Բացի այդ, պատրիարքարանը հրատարակում է իր պաշտոնական հանդեսը՝ «Լրաբերը»:

Սեփական հանդեսն (ամսագիր) ունի նաև Ստամբուլի Սուրբ Փրկիչ հայկական հիվանդանոցի հիմնադրամը³, այն տարբեր ձևաչափերով լույս է տեսնում 20-րդ դարի սկզբից⁴: Մանուկների համար լույս է տեսնում «Ժպիտ» հանդեսը⁵:

Հունական և հրեական պարբերականները

Թուրքիայում լույս են տեսնում նաև հունական և հրեական համայնքի տպագիր պարբերականներ, որոնք նույնպես լուրջ խնդիրներ ունեն՝ կապված ֆինանսական վիճակի, համայնքի անդամների թվի նվազման և համացանցի առկայության հետ⁶: Հրեաները, սակայն, ստեղծված պայմաններում քայլեր են կատարում ակտիվացնելու համայնքային թերթի առցանց տարբերակը:

Հույների «Ապոնմատինի» (թուրքերեն՝ *Apyevmatini*, հունարենից թարգմանված՝ «Ցերեկ») պարբերականը տպագրվում է Ստամբուլում, հունարեն: Տպագրում է Թուրքիայի հունական համայնքը (վերջին շրջանում՝ շաբաթաթերթ): Հիմնադրվել է 1925թ.: Թերթում հիմնականում տեղ են գտնում Թուրքիայի հունական համայնքին վերաբերող թեմաներ: 1960-ականներին թերթի տպաքանակը կազմել է 35.000 օրինակ, սակայն 21-րդ դարում հույների թվի զգալի նվազման ու նորագույն տեխնոլոգիաների մուտքով պայմանավորված՝ թերթի տպաքանակը կազմում է ընդամենը 500-600 օրինակ: Ներկայում թերթում, որը շաբաթը մեկ անգամ է լույս տեսնում, ընդամենը երկու

¹ Լույս, պաշտոնական կայք, <http://www.luys.com.tr/hakkimizda>:

² Թուրքիայի հայկական պատրիարքարան, «Շոդակաթ», <http://www.turkiyeermenileripatrikligi.org/site/sogagat-dergisi-basin/>:

³ Սուրբ Փրկիչ հայկական հիվանդանոցի հիմնադրամի ամսագիր, <http://www.surppirgic.org/>:

⁴ Türkiye Ermenileri Patrikligi, Surp Pirgiç Hastane Dergisi, <http://www.turkiyeermenileripatrikligi.org/site/surp-pirgic-hastane-dergisi-basin/>:

⁵ Լույս տեղում:

⁶ Azınlık gazetelerinin varoluş mücadelesi, DW, 2011,

<http://www.dw.de/az%C4%B1n%C4%B1k-gazetelerinin-varolu%C5%9F-m%C3%BCcadelesi/a-15254238>.

մարդ է աշխատում, այն էլ՝ տնային պայմաններում¹: Ֆինանսական ծանր վիճակում հայտնված հունական պարբերականը դեռ չունի սեփական կայքը:

Թուրքիայի հույները տպագրում են նաև «Իհո» (թուրքերեն՝ *Iho*, հունարենից թարգմանված՝ «Արձագանք») օրաթերթը: «Իհոն» հիմնադրվել է 1977թ.: 2012 թվականից գործարկվել է նաև ռադիոն՝ *Iho Tis Polis* («Քաղաքի արձագանքը»), որը հեռարձակվում է պարբերականին կից և հասանելի է միայն համացանցում: Թերթում տեղ են գտնում Թուրքիայի հույներին, ինչպես նաև տեղական և միջազգային զարգացումներին առնչվող տեղեկություններ: Առկա ֆինանսական խնդիրների պատճառով թերթը ստիպված նվազեցրել է էջերի քանակը՝ հասցնելով 4-ի: Պարբերականն ունի իր կայքը, որը հունարեն է²: Կայքում ներկայացվում է օրվա լրահոսը, ինչպես նաև թերթի տպագիր համարները: Կայքում հնարավոր է լսել նաև ռադիոն՝ հունարեն:

Հրեական համայնքի «Շալոմ» (թուրք.՝ *Şalom*) թերթը հիմնադրվել է 1947թ.: Երկար տարիներ լատինատառ եբրայերենով է հրատարակվել, այժմ ունի նաև թուրքերեն էջ: «Շալոմը» ներկայում տպագրվում է շաբաթական մեկ անգամ: Քաղաքական և մշակութային պարբերական է: «Շալոմն» ունի ակտիվ գործող կայք³՝ գերազանցապես թուրքերեն: Տպագիր տարբերակի սպառման նվազման հետ մեկտեղ թերթում ավելի մեծ ուշադրություն են հատկացնում առցանց տարբերակին:

Ամփոփում

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների շարունակաբար նվազող թվի հետևանքով տուժում են նաև տասնամյակներ շարունակ տպագրվող համայնքային թերթերը, որոնց տպաքանակն աստիճանաբար նվազելու միտում է ցուցաբերում: Առկա բարդ ֆինանսական պայմաններում, հիմնականում թերթերի աշխատակիցների ջանասիրության շնորհիվ, համայնքների համար մեծ կարևորություն ունեցող լրատվամիջոցները շարունակում են աշխատանքը: Մի բացասական միտում էլ է նկատվում. ազգային փոքրամասնությունների լրատվամիջոցները սկսել են ավելի շատ նախապատվություն

¹ Ստամբուլում լույս տեսնող հունական թերթի գրասենյակը փակվել է, Թուրքագիտական պորտալ, 2014, <http://allturkey.am/10658>.

² Iho, <http://www.ihotispolis.com/>.

³ Şalom, պաշտոնական կայք, <http://www.salom.com.tr/>.

տալ թուրքերենին, ինչը նույնպես մայրենի լեզվի և ինքնության պահպանման տեսանկյունից խնդիր է ստեղծում համայնքների համար: Օրինակ, «Ակօսի» և՛ տպագիր, և՛ առցանց տարբերակների հիմնական լեզուն թուրքերենն է: Թուրքերեն են նաև վերջին տարիներին հիմնադրված հայկական ամսագրերը:

Թերթերի զգալի մասն էլ, ճիշտ կողմնորոշվելով արդի պայմաններում, փորձում է ակտիվացնել աշխատանքը համացանցում: Հայկական թերթերից «Ակօսն» առաջինն էր, որ լուրջ ուշադրություն դարձրեց համացանցին, ինչի արդյունքում պարբերականի կայքն այժմ ակտիվ աշխատում է: Համացանցում որոշակի պասիվությունից հետո, 2015թ. առաջին կեսին, «Ժամանակն» ու «Նոր Մարմարան» վերագործարկեցին սեփական կայքերը, որոնք նախկինի համեմատ տեխնիկապես ավելի հագեցած են և ավելի օպերատիվ են աշխատում: Այս փոխակերպումները ևս մեկ անգամ ցույց են տալիս, որ Թուրքիայում լույս տեսնող պարբերականները, հասկանալով մեր ժամանակներում համացանցի կարևորությունը, փորձում են ակտիվանալ նաև այս տիրույթում: Հաշվի առնելով, որ «Ժամանակն» ու «Նոր Մարմարան» կենտրոնացած են հայերեն լրատվության վրա, կարևոր է նրանց աշխատանքի ակտիվացումը համացանցում, ինչն ուղղակի կապված է հայապահպանության արդիական խնդրի հետ: Հունական «Իհոն» ներկայանում է նաև ռադիոյով՝ օգտագործելով համացանցի ընձեռած հնարավորությունները:

Այսպիսով, Թուրքիայի ազգային փոքրամասնությունների պարբերականները շարունակում են իրենց կարևորագույն աշխատանքը՝ հաճախ պարզապես ստիպված լինելով գոյատևել: Ֆինանսական հարցերի հետ մեկտեղ, լուրջ խնդիրներ են ստեղծում մայրենի լեզվով ընթերցողների թվի նվազումը և ընդհանրապես ազգային փոքրամասնությունների շարքերի նոսրացումը: Ժամանակը ցույց է տալիս, որ փոքրամասնությունների մամուլի ապագան մեծապես կապված է համացանցի հետ, որտեղ էլ այժմ ակտիվանալու փորձեր են կատարվում:

Մեկտեմբեր, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Խառատյան Ա.*, Արևմտահայ մամուլի սկզբնավորման և զարգացման պատմությունից (1832-1914թթ.), Պատմա-բանասիրական հանդես, 1995, № 2:
2. *Մելքոնյան Ռ.*, Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության, Երևան, 2010:

**ԹՈՒՐԲԻՍՅՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՅՎԱԿԱՆ, ՀՈՒՆԱԿԱՆ, ՀՐԵՎԱԿԱՆ
ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՌՑԱՆՑ ԼՐԱՏՎԱՍԻՋՈՑՆԵՐԸ**

Գևորգ Պետրոսյան

Ամփոփագիր

Տասնամյակներ շարունակ Թուրքիայում ծանր պայմաններում գործող ազգային փոքրամասնությունների՝ հայերի, հույների և հրեաների պարբերական մամուլը դժվար ժամանակներ է ապրում: Ֆինանսավորման, ինչպես և ընթերցողների պակասը ստիպում է թերթերին կրճատել տպաքանակն ու ավելի մեծ ուշադրություն հատկացնել համացանցում աշխատանքին: Հայկական թերթերից Թուրքիայում այժմ գործում են «Ակօսը», «Նոր Սարմարան» ու «Ժամանակը», որոնք համացանցում ներկայացված են սեփական կայքերով: Թուրքիայի հունական համայնքը տպագրում է «Ապոլոնատինի», «Իհո» թերթերը, իսկ հրեաները՝ «Շալոմ» թերթը: Թեև տպագիր տարբերակների տպաքանակի կրճատմանը, համացանցը նոր հնարավորություններ է ստեղծում Թուրքիայի ազգային փոքրամասնությունների մեդիայի համար:

**АРМЯНСКИЕ, ГРЕЧЕСКИЕ, ЕВРЕЙСКИЕ
ПЕЧАТНЫЕ И ОНЛАЙН СМИ В ТУРЦИИ**

Геворг Петросян

Резюме

Несмотря на имевшиеся трудности, медиа-ресурсы нацменьшинств Турции – армян, греков и евреев – десятилетиями продолжали свое существование. Правда, у некоторых газет сейчас не самые лучшие времена, что обусловлено нехваткой финансирования и сокращением количества читателей. Редакции газет вынуждены сокращать тираж, а также проявлять большую активность в Интернете. В настоящее время в Турции издаются три армянские газеты: «Акос», «Жаманак», «Мармара». Печатаются также греческие газеты «Апоевматини», «Ихо» и еврейская «Шалом». Несмотря на сокращение тиража печатных версий, Интернет предоставляет вышеперечисленным ресурсам более широкие возможности и новые перспективы.

**ARMENIAN, GREEK, AND JEWISH
PRINTED AND ONLINE MEDIA IN TURKEY**

Gevorg Petrosyan

Resume

For decades the media of national minorities in Turkey, Armenians, Greeks, Jews, continued their publications through struggle. These newspapers continue enduring difficulties currently due to the lack of funds and decreasing number of readership. The newspapers of Turkey's minorities have to cut down their print-runs and pay more attention to online publications. In Turkey there are three Armenian newspapers: “Jamanak” and “Marmara” dailies, and “Agos” weekly, which have their own websites. Greeks in Turkey publish “Apoyevmatini” and “Iho” newspapers, and Jews publish “Shalom” newspaper. Though the numbers of printed copies of the newspapers are reduced, Internet opens new prospects for media of national minorities.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՓԱՂԱՓԱՐԸ «ՄԱՄԻՉԴԱՏ» ԹԵՐԹԵՐՈՒՄ

Արման Գալոյան՝

Բանալի բառեր՝ այլախոհական շարժում, «սամիզդատ», ընդհատակյա տպագրություն, հակախորհրդային հայացքներ, անկախության գաղափար, ԽՍՀՄ փլուզում:

Նախկին ԽՍՀՄ-ում 1960-ական թթ. ծավալված այլախոհական շարժումը լուրջ դրսևորումներ ունեցավ նաև Հայաստանում: Սակայն հայկական այլախոհական խմբերն ու խմբակներն իրենց բնույթով էապես տարբերվում էին խորհրդային մյուս երկրներում գործող նմանատիպ կազմակերպություններից:

Ռուսաստանում 1960-ականների կեսին սկիզբ առած այլախոհական շարժումն ուներ հիմնականում իրավապաշտպան բնույթ, և դա արտացոլվում էր նաև նրանց տպագրած «սամիզդատ» թերթերում (հայերեն օգտագործվում է նաև ինքնահրատ տերմինը): Ամենահայտնի «սամիզդատը», որ ընդհատումներով տպագրվեց 15 տարի շարունակ՝ 1968-1983թթ., «Хроника текущих событий» («Ընթացիկ իրադարձությունների ժամանակագրություն») ամսագիրն էր, որը հիմնականում անդրադառնում էր խորհրդային տարիների քաղաքանտարկյալներին, ներկայացնում նրանց նկատմամբ իրականացվող հետապնդումները, դատավարությունները:

Հայաստանում այլախոհ գործիչների պայքարն ավելի շատ ազգային բնույթ ուներ: Հայ այլախոհների գերակշիռ մեծամասնությունն առաջնահերթ խնդիր էր համարում միակուսակցական ռեժիմի դեմ պայքարը, ազգային կերպարի և հայոց լեզվի անադարտության պահպանումը, ինչպես նաև ԽՍՀՄ կազմից Հայաստանի դուրս գալն ու անկախ պետականության հռչակումը: Պատմական գիտությունների դոկտոր Արմենակ Մանուկյանն այս առթիվ գրում է. «Հայ ժողովուրդն իր գիտակցության մեջ կրում էր հայկական պատմական տարածքների կորստյան չմարող գաղափարը, և հենց այդ հողի վրա դրսևորվեցին հանրապետությունում սկիզբ առած այլախոհական (հա-

¹ Բանասիրական գիտությունների թեկնածու:

կախորհրդային) կազմակերպությունները, որոնք, բնականաբար, առաջ էին քաշում նաև անկախության և ազատության կարգախոսներ» [1, էջ 33]:

Անկախության ձգտումը հատուկ էր նաև խորհրդային մյուս հանրապետությունների այլախոհներին: Մասնավորապես, Լատվիայում, Լիտվայում, Էստոնիայում, Ուկրաինայում և Վրաստանում գործող այլախոհական շարժումները ևս իրենց գործունեության առաջնային նպատակներից մեկը հռչակել էին ազատությունն ու անկախությունը: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա ԽՍՀՄ այլախոհության պատմությանը նվիրված գրքի հեղինակ Լյուդմիլա Ալեքսեևան գրում է հետևյալը. «Հայաստանը ԽՍՀՄ հանրապետություններից միակն էր, որտեղ գործում էր կուսակցություն¹, որն իր առաջ նպատակ էր դրել Հայաստանի անջատումը ԽՍՀՄ-ից, և այդ գաղափարը հասարակության համակրանքն էր վայելում: 15 տարվա մեջ ՊԱԿ-ը հնարավորություն ունեցավ համոզվելու Ազգային միացյալ կուսակցության անկոտրում լինելու մեջ. ձերբակալությունների յուրաքանչյուր ալիքից հետո նորանոր հետևորդներ էին ի հայտ գալիս» [2, c. 63]:

Այլախոհների գործունեության հիմնական մեթոդը թռուցիկների, «սամիզդատ» թերթերի, գրքերի և բրոշյուրների ընդհատակյա տպագրությունն ու տարածումն էր: Այդ մասին են վկայում այլախոհների քրեական գործերը: Դրանցում որպես ապացույց հիմնականում ներկայացված են «սամիզդատ» թերթերը, բրոշյուրները, թռուցիկները, որոնցում հեղինակները քննադատում էին խորհրդային կարգերը, ինչպես նաև պահանջում Հայաստանի անկախության հռչակում²:

Հայաստանի անկախացման պահանջ հանդիպում ենք առաջին այլախոհական խմբակների պատրաստած թռուցիկներում:

¹ Նկատի ունի ընդհատակյա «Ազգային միացյալ կուսակցություն» կազմակերպությունը, որն ուներ կանոնադրություն, ծրագիր:

² Խորհրդային տարիներին այլախոհ գործիչները բացահայտ գործունեություն ծավալելու հնարավորություն չունեին և ստիպված էին գործել ընդհատակյա պայմաններում, ոչ լեգալ: Բացահայտվելու դեպքում նրանց սպառնում էր երկարատև բանտարկություն կամ քսոք: ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածը պատիժ էր սահմանում «հակասովետական ագիտացիայի կամ պրոպագանդայի», 67-րդ հոդվածը՝ «առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեության, ինչպես նաև հակասովետական կազմակերպությանը մասնակցելու», իսկ 206.1 հոդվածը՝ «սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելու» համար: Այլախոհների դատավարությունն իրականացվում էր Գերագույն դատարանում, որի դատավճիռը բողոքարկման ենթակա չէր: Իսկ այդ հոդվածով դատապարտվածները կոչվում էին «առանձնակի վտանգավոր պետական հանցագործներ» (մանրամասն տե՛ս [3]):

1955թ. նախկին Լենինականում (այժմ՝ Գյումրի) փորձ է արվել ձևավորել այլախոհական առաջին խմբակը: Վերջինիս անդամները տպագրել ու տարածել են թռուցիկներ: Սակայն խմբակը շատ արագ բացահայտվել է, և բոլոր 4 անդամները 1958թ. դատապարտվել են տարբեր տարիների ազատազրկման: Թռուցիկների հիմնական հեղինակը և կազմողը եղել է Աշոտ Ղազարյանը, որն իր արարքի համար դատապարտվել է 5 տարվա ազատազրկման: Հետագայում՝ 1991թ., խմբի բոլոր չորս անդամները հանցակազմի բացակայության պատճառով արդարացվում են: Ա. Ղազարյանի կազմած թռուցիկը հետևյալ բովանդակությունն ունի. «Հայ ժողովուրդ, արդեն ժամանակն է պատռելու դեմոկրատիայի քողի տակ թաքնված սուտն ու կեղծիքը, որը ստիպված ենք եղել երկար ժամանակ լուռ կերպով տանելու և մեզ խաբելու: Այժմ հասել է այն ժամը, որ մենք պետք է թոթափենք կոմունիստական բռնապետության ստրկացնող լուծը, որը մեր՝ հայերիս ուսերին այսօրվա ծանր է դրված: Ժամանակն է արդեն, որպեսզի գիտակցենք անկախ ու ինքնուրույն հայկական միասնական պետություն ստեղծելու մասին: Իմ սիրելի ազգ, իմ սիրելի ժողովուրդ, ոտքի կանգնիր, պատրաստ մնա պաշտպանելու քո միասնության շահերը: Քո հարցը քննարկվում է ամենուրեք, նույնիսկ ՄԱԿ-ում, և յուրաքանչյուր հայրենասեր հայ մտահոգված է քո երջանիկ բախտով, քո ապագայով: Թող կորչի այս ստոր ու կեղծ կոմունիստական բռնակալությունը, որը խոչընդոտ է հանդիսանում մեր հայ ազգի վերամիավորմանը: Կեցցե՛ ապագա հայկական ազատ ու ինքնուրույն պետությունը» [2, 3, էջ 29-30]:

Հայաստանի անկախացման գաղափարը լայնորեն արձարծվել է նաև հետագայում:

1967թ. հիմնված Ազգային միացյալ կուսակցության կանոնադրության 6-րդ հոդվածում ամրագրված էր. «ԱՄԿ-ի հիմնական խնդիրն է ազատագրել ազգը օտարի լծից, դուրս գալ Ռուսաստանի ստրկատիրական գերիշխանությունից, Հայաստանը դարձնել ազատ, անկախ, քաղաքական չեզոք հանրապետություն» [3, էջ 80]:

ԱՄԿ-ն ստեղծման առաջին իսկ տարում հրատարակում է հայկական առաջին «սամիզդատ» թերթը՝ «Փարոս» վերնագրով: Այստեղ հանդիպում ենք հետևյալ արձանագրման. «Հայ մտավորականության սրբազան պարտքն է ժողովրդի հետ միասին կարճ ժամանակում լուծել Հայկական հարցը նոր և

ճիշտ ձևով, հայ ժողովրդի իղձերը իրականություն դարձնելու, այսինքն՝ Հայաստանն ազատագրել ռուսական լծից, դուրս գալ այսպես կոչված «սովետական կազմից» և հայտարարել Հայաստանն անկախ, չեզոք պետություն» [4]:

«Փարոս»-ի անդրանիկ համարի մեկ այլ հոդվածում ևս անկախանալու կոչ էր արվում: «Այսօր մեր բոլորիս սրբազան պարտքն է ազատագրել Հայ ժողովրդին Ռուսաստանի լծից, որի համար ներկայումս ստեղծված են միջազգային լայն հնարավորություններ հատկապես առաջադեմ ազգերի համար: Դրա համար ոչ մի դժվարությունների առաջ չենք կանգնի: Միայն միասնական վճռականությունն իրականություն կդարձնի հայ ժողովրդի դարավոր իղձը և հետագայում վերջ կդնի Հայկական դժվարամարս հարցին, որից Ռուսաստանը սնվում և մարսում է իրեն յուրահատուկ գայլի ախորժակով» [4]:

1915թ. Հայոց ցեղասպանության տարելիցին նվիրված հոդվածում նույնպես հանդիպում ենք նման պնդման. «Ժողովուրդ հայոց, քո սրբազան պարտքն է հավատարիմ մնալ քո նախնիների սրբազան գործին, պահպանել ազգային էությունը, պայքարել նրա անկախության համար: Ապրիլի 24-ը պետք է նշվի յուրաքանչյուր տարի և պետք է հանդիսանա Հայ ժողովրդի ցասումնայի բողոքի օր՝ անցյալի և ներկա բռնությունների ԴԵՍ» [4]:

«Փարոս» «սամիզդատի» առաջին համարի տպագրումից ու տարածումից հետո ԱՄԿ հիմնադիրները՝ Ստեփան Զատիկյանը, Շահեն Հարությունյանն ու Հայկազն Խաչատրյանը, բացահայտվել ու դատապարտվել են ազատագրկման: «Փարոս»-ի երկրորդ համարը լույս է տեսել 1971թ.՝ որպես մեկ էջանոց մեքենագիր թուղթիկ, 1973թ. այն վերահրատարակվել է նույն տեսքով: 1974թ. տպագրվում են «Փարոս-3», իսկ 1981թ.՝ «Փարոս-4» «սամիզդատները»:

1969թ. ԱՄԿ-ականները տպագրել են ևս մեկ «սամիզդատ»՝ «Երկունք» վերնագրով¹: Այստեղ ևս կարևորվում էր Հայաստանի անկախացման գաղափարը: «Սամիզդատի» առաջին էջում տպագրված «Անկախությունը՝ որպես կենսական պահանջ» հոդվածում հեղինակը կարևորում էր Հայաստանի անկախության հռչակումը, և այս հարցը փորձ է արվել լուսաբանել ազգերի ինքնորոշման իրավունքի տեսանկյունից:

«Անգամ հեղափոխության մեծ երզիչ Եղիշե Զարենցը կյանքի վերջին տարիներին ամբողջ խորությամբ ճանաչեց «պրոլետարիատի դիկտատուրա»

¹ Այդ ժամանակ հրատարակվել է նաև «Ցասում» վերնագրով սամիզդատ թերթ, որից, սակայն, որևէ նմուշ չի պահպանվել, սակայն «Ցասում»-ի մասին հիշատակումներ կան այլ սամիզդատներում:

հասկացողության ողջ էությունն ու բռնատիրական սկզբունքները: Նա, որ իր ազգի փրկությունը կապում էր հեղափոխական Հայաստանի հետ, զգալով կոմունիստական գաղափարախոսության բուն էությունը, մարգարեաբար ավանդեց. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» [5]:

Հաճախ խորհրդային կարգերի նկատմամբ բացասական տրամադրվածությունն ինքնըստինքյան հանգեցնում էր ռուս ժողովրդի հասցեին քննադատության, չնայած՝ ակնհայտ է, որ տվյալ դեպքում բացասական այս խոսքերն ուղղված էին իշխանություններին: «Ձեզ համար պարզ է, թե ռուս (եղբայրն) ինչպիսի նողկալի դավեր է նյութել հայ ժողովրդի դեմ, ինչպիսի դժոխային, բազմաթիվ ոճրագործություններ, որոնցից ամենադժոխայինները կատարվեցին XX դարում, մի դարաշրջան, երբ աշխարհի ամենահետամնաց և փոքրիկ ազգերն անգամ դարձան անձեռնմխելի պետություն, իսկ հայն այսօր դեռ մնում է ստրկական վիճակում, այն էլ՝ մի գծով, ապերախտ ազգի լծի տակ», - նման ձևակերպման ենթ հանդիպում «Փարոս»-ում:

Հատկանշական է, որ խորհրդային կարգերը քննադատելիս այլախոհները, որպես կանոն, օգտագործում էին նույն արտահայտությունները. խորհրդային իշխանությունը նրանք համարում էին «կոմունիստական բռնապետության ստրկացնող լուծ», «օտարի լուծ», «Ռուսաստանի ստրկատիրական գեր-իշխանություն»: Իսկ այդ «լծից» ազատվելը, այսինքն՝ ԽՍՀՄ կազմից Հայաստանի դուրս գալն ու անկախ պետականության հռչակումը նրանք որակում էին «հայ ժողովրդի և մտավորականության սրբազան պարտք»:

Նշենք, որ ԽՍՀՄ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն, վերջինիս կազմի մեջ գտնվող պետությունները ցանկացած պահի ինքնորոշվելու իրավունք ունենին, սակայն գործնականում դա հնարավոր չէր իրականացնել. ԽՍՀՄ կազմից Հայաստանի դուրս գալու և անկախության հռչակման գաղափարն այդ տարիներին թվում էր ցնորական միտք, անիրականանալի ծրագիր, իսկ նման կոչեր հնչեցնողներն՝ առնվազն ռոմանտիկներ:

Պատահական չէ, որ 1960-ական թթ. գործող այլախոհական կազմակերպություններից մի քանիսը, ի տարբերություն ԱՄԿ-ի, որն անկախություն հռչակելու գաղափարը դարձրել էր իր գործունեության անկյունաքարը, ուղղակի հպանցիկ էին անդրադառնում այս թեմային կամ մերժում էին այն:

Այս կապակցությամբ Վարդան Հարությունյանի գրքում հանդիպում ենք հետևյալ հիշատակումները: 1961-1962թթ. Երևանում գործող «Հայ երիտասարդական միություն»-ը «չի եղել հակախորհրդային կամ հակակոմունիստական կառույց, քայց սա չի նշանակում, որ դրան անդամակցող առանձին անձինք չէին կարող այս կամ այն չափով դեմ լինել խորհրդային երկրի արտաքին կամ ներքին քաղաքականության առանձին դրսևորումներին, ունենալ ընդգծված հակախորհրդային հայացքներ, անգամ խոսել կամ գրել անկախ Հայաստան ունենալու անհրաժեշտության մասին» [3, էջ 31]:

1969թ. գործող «Հանուն Հայրենիքի» խումբը, որ հրատարակեց նույնանուն «սամիզդատ» ամսագիրը, բացահայտ խոսում, գրում էր նաև խորհրդային կարգերի դեմ: «Ճիշտ է, հստակ երևացող անկախական միտումներ դեռ չկային, քայց արդեն նշմարվում էին դեպի անկախություն տանող զարգացումները» [3, էջ 102]:

Հայաստանում մինչև 1980-ական թթ. վերջը՝ Ղարաբաղյան շարժման սկսվելը, «սամիզդատ» թերթերի քանակը քիչ էր. 1967-1987թթ. Հայաստանում լույս են տեսել հետևյալ «սամիզդատ» թերթերը՝ «Փարոս», «Երկունք», «Ցասուն», «Հանուն Հայրենիքի»: Նշվածներից միայն «Փարոս» «սամիզդատն» է, որ 14 տարվա ընթացքում չորս համար է տպագրվել, մյուսները տպագրվել են մեկական համար: ՊԱԿ-ին հաջողվում էր բացահայտել հրատարակիչներին ու դադարեցնել «սամիզդատների» տպագրությունը: 1980-ական թթ. վերջին, պայմանավորված Ղարաբաղյան շարժմամբ, բոլորովին նոր որակներ և մեծ թափ ստացավ այլախոհական պայքարը, դրան ներդաշնակ, մեծ ծաղկում ապրեց «սամիզդատ» մամուլը: Արդեն 1987-90թթ. Հայաստանում լույս տեսած «սամիզդատների» թիվն անցնում է երեք տասնյակից [6, էջ 35]:

1960-70-ական թթ. անկախության գաղափարը քիչ էր տարածված, միայն որոշակի նեղ խմբեր էին ակտիվորեն քննարկում այդ հարցը: Հայաստանում ԽՍՀՄ-ից անջատվելու և անկախ պետություն հիմնելու մասին լայնորեն սկսեց խոսվել Ղարաբաղյան շարժման ժամանակ: Ընդ որում, այս հարցում մտածելակերպի փոփոխություն տեղի չունեցավ միանգամից, անկախացման մասին զանգվածաբար սկսեցին բացահայտ խոսել քաղաքական իրադրության փոփոխությանը զուգահեռ, երբ վերջապես ժողովրդի առաջ բացվել էր ինքնորոշման իրավունքի իրականացման դուռը:

ԱՄԿ հենքի վրա ձևավորված «Ազգային ինքնորոշում միավորումը» 1987թ. հրատարակեց «Անկախություն» շաբաթաթերթը: Ի տարբերություն իր նախորդների, այս «սամիզդատը» տպագրվում էր ամեն շաբաթ (քիչ դեպքեր են եղել, երբ պարբերականությունը խախտվել է) և համեմատաբար երկար կյանք ունեցավ: «Սամիզդատի» վերնագիրն արդեն հուշում էր հրատարակիչների առջև դրված գերխնդիրը: Այդ գերխնդիրն արձանագրված էր նաև պարբերականի առաջին էջում՝ «մեր նպատակն է ազգային պետականության վերականգնումը, առաջնահերթ խնդիրը՝ Խ.Հայաստանի անկախացումը հանրաքվեի միջոցով»: «Անկախություն» «սամիզդատի» առաջին իսկ համարից կարևորվում էր հայոց պետականության վերականգնման գաղափարը. «Ազգն ինքն է իր ճակատագրի տնօրենը, և ամեն մի միջամտություն ապօրինի է ու հակամարդկային, էթե դրա օգտին չի արտահայտվում ազգի մեծամասնությունը համաժողովրդական հարցման՝ ռեֆերենդումի միջոցով... Հայաստանի անկախության կողմնակիցները կարող են համաժողովրդական հարցման միջոցով որոշակիորեն իմանալ ժողովրդի կարծիքը և ենթարկվել նրան» [7]: «Սամիզդատի» երկրորդ համարում արդեն հանդիպում ենք հետևյալ տողերին. «ԽՍՀՄ-ը չի արդարացնում արդարության նկատմամբ հայության ունեցած սպասելիքները, այդ պատճառով ավելի ու ավելի հրամայական է դառնում ազգային անկախության անհրաժեշտությունը» [8]: «Միայն մի միջոց կա դուրս պրծնելու կառավարական սաղրանքի այդ փակ շրջանակից: Այն է՝ ազգային դիմակ հագած սովետական, վերակառուցողական շարժումը վերածել ազգային-ազատագրական պայքարի, հրաժարվել ենթարկվել Մոսկվային, անօրինական հայտարարել խորհրդային իշխանությունը Հայաստանում և Հայաստանի բռնակցումը Խորհրդային Միությանը, ազգերի ազատ ինքնորոշման իրավունքով, հանրաքվեի միջոցով, Հայաստանը հայտարարել անկախ, ստեղծել ազգային կառավարություն, ստեղծել ազգային բանակ» [9]:

1988թ. լույս տեսած «Ինքնորոշում» «սամիզդատում» ևս անխնա քննադատվում էր խորհրդային իշխանությունը. «Ազգային շարժման սկզբից մինչև օրս մենք միշտ ենթարկվել ենք Մոսկվայի կողմից կազմակերպված հոգեբանական և մարմնական ահաբեկչության: 1988 թվականը հայ ժողովրդի համար եղավ քաղաքական հասունացման և ճշմարտության հետ հաղորդակցվելու տարի: Ոչ մի կոտորած, ոչ մի սաղրանք մեզ չպետք է կարողանա ետ պահել մեր պայքարից»: Այնուհետև արվում է հետևյալ եզրակացությունը.

«Դժվար լինի դա, թե հեշտ, իրականությունն այն է, որ հանրաքվեի միջոցով անկախաանալուց բացի ուրիշ ոչ մի նպատակ մշակել մենք չենք կարող: Հայ ազգի համար համազգային գաղափար կարող է լինել միայն անկախությունը, նպատակը՝ ինքնորոշումը ԽՍՀՄ Սահմանադրության 72-րդ կետով» [10]:

1988թ. փետրվարին սկիզբ առած Հայոց համազգային շարժումը և վերջինիս ղեկավար «Ղարաբաղ» կոմիտեն գործունեությունը սկսեցին Արցախը Հայաստանին միավորելու պահանջով, սակայն որոշ ժամանակ անց՝ 1989թ. ամռանը, նրանց պահանջներին ավելացավ ևս մեկը՝ Հայաստանի անկախության հռչակումը: Այդ ժամանակ արդեն քաղաքական իրադրությունը փոխվել էր, և ստեղծվել էր հստակ հնարավորություն՝ ԽՍՀՄ-ից անջատվելու և անկախ պետություն հիմնելու համար:

Այս առումով ուշագրավ վկայությունների հանդիպում ենք Թոմաս դը Վաալի «Սև այգի. Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով» գրքում, որտեղ հեղինակը մեջբերել է 2000թ. մայիսի 24-ին ՀՀ առաջին նախագահ, «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ հարցազրույցից հատվածներ. «Առաջին Ղարաբաղ կոմիտեն՝ Իգոր Մուրադյանը, Զորի Բալայանը, Սիլվա Կապուտիկյանը և մյուսները, մտածում էր միայն Ղարաբաղի մասին: Նրանց համար պարզապես գոյություն չունեին այնպիսի հարցեր, ինչպես ժողովրդավարությունը կամ Հայաստանի անկախությունը: Այս հողի վրա էլ տեղի ունեցավ պառակտումը: Երբ զգացին, որ մենք վտանգավոր ենք դառնում խորհրդային համակարգի համար, նրանք հեռացան: Բնական փոփոխություն տեղի ունեցավ: Նրանք կարծում էին, որ Ղարաբաղի հարցը պիտի լուծվեր խորհրդային համակարգի միջոցով: Իսկ մենք հասկանում էինք, որ այդ համակարգը երբեք չի լուծելու Ղարաբաղի հարցը, և ճիշտը հակառակն է՝ այս հիմնահարցը լուծելու համար պիտի համակարգը փոխես», - ասել է ՀՀ առաջին նախագահը [11, էջ 93]: Լևոն Տեր-Պետրոսյանը նույն հարցազրույցում նաև նշել է, թե ինքը անկախության մասին լրջորեն մտածում էր արդեն 1989թ. ամռանը: «Թերահավատությամբ էի վերաբերվում Բալթյան հանրապետություններում, Հայաստանում, Ուկրաինայում, Մոլդովայում կատարվող իրադարձություններին: Ասում էին, որ մենք առայժմ չենք կարող մտածել անկախության մասին: Մինչև նույնը չսկսվեր Ռուսաստանում, ոչ մի անկախություն չէր լինի: Ես հասկացա, որ Խորհրդային Միությունը մոտ է փլուզմանը, և որ մենք կարող ենք հասնել անկախության միայն Ռուսաստանում 1989թ. հանքա-

փորձերի գործադրույից հետո: Այդ շուրջ միլիոն մարդ ընդգրկած գործադրույներն անմիջապես քաղաքականացվեցին Սախարովի և մյուսների կողմից: Հզոր շարժում էր: Դրանից հետո էր, որ ասացի. «Ժամանակն է: Պետք է պայքարենք անկախության համար»: Որովհետև շատ վտանգավոր կլինեք, եթե Խորհրդային Միությունը փլուզվեր, իսկ մենք դրան պատրաստ չլինեինք», - Տեր-Պետրոսյանի խոսքերն է մեջբերում նա [11, էջ113]:

Կարճ ժամանակ հետո Հայաստանի անկախությունն այլևս իրականություն էր. 1990թ. օգոստոսի 23-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց Հայաստանի անկախության մասին հռչակագիրը, իսկ արդեն 1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի տարածքում անցկացվեց հանրաքվե՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու և անկախանալու նպատակով: 2 միլիոն 43 հազար մարդ կամ քվեարկության իրավունք ունեցողների 94,39%-ն «այո» ասաց անկախությանը: Հանրաքվեի արդյունքների հիման վրա 1991թ. սեպտեմբերի 23-ին հանրապետության Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն:

Հուլիս, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Մանուկյան Ա.*, Քաղաքական այլախոհությունը Հայաստանում. 1950-1988թթ., Երևան, 2005:
2. *Алексеева Л.*, История инакомыслия в СССР, М., 1992.
3. *Հարությունյան Վ.*, Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում, Երևան, 2014:
4. Փարոս, N 1, Երևան, 1967:
5. Երկունք, N1, Երևան, 1969:
6. *Գալոյան Ա.*, Սամիզդատը Հայաստանում, Երևան, 2013:
7. «Անկախություն» շաբաթաթերթ, N1, Երևան, 1987:
8. «Անկախություն» շաբաթաթերթ, N 2, Երևան, 1987:
9. «Անկախություն» շաբաթաթերթ, N 1923 (84), Երևան, 1989:
10. «Ինքնորոշում», N 2, Երևան, 1989:
11. *Թոմաս դը Վաալ*, Սև այգի. Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով, Երևան, 2007:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ «ՍԱՄԻԶՐԱՏ» ԹԵՐԹԵՐՈՒՄ

Արման Գալոյան

Ամփոփագիր

Նախկին ԽՍՀՄ-ում 1960-ական թթ. ծավալված այլախոհական շարժումը լուրջ դրսևորումներ ունեցավ Հայաստանում: Սակայն հայկական այլախոհական խմբերն էապես տարբերվում էին խորհրդային մյուս երկրներում գործող նման կազմակեր-

պություններից: Ի տարբերություն Ռուսաստանում 1960-ական թթ. ծավալված այլախոհական շարժման, որը հիմնականում իրավապաշտպան ուղղություն ուներ, Հայաստանում այլախոհ գործիչների պայքարն ավելի շատ ազգային բնույթ ուներ: Հայ այլախոհներն առաջնահերթ խնդիր էին համարում միակուսակցական ռեժիմի դեմ պայքարը, ազգային կերպարի և հայոց լեզվի անաղարտության պահպանումը, ԽՍՀՄ կազմից Հայաստանի դուրս գալն ու անկախ պետականության հռչակումը, ինչն էլ իր արտահայտությունն է գտել «սամիզդատ» թերթերում:

ИДЕЯ НЕЗАВИСИМОСТИ АРМЕНИИ В САМИЗДАТОВСКИХ ГАЗЕТАХ

Арман Галоян

Резюме

Развернувшееся в СССР в 1960-х гг. диссидентское движение довольно ощутимо проявилось и в Армении. Однако армянские диссидентские группы существенно отличались от подобных организаций, действующих в других советских республиках. В отличие от российского диссидентского движения, имевшего преимущественно правозащитную направленность, в Армении борьба инакомыслящих деятелей носила в первую очередь национальный характер. Армянские диссиденты считали приоритетной борьбу против однопартийного режима, за сохранение национального облика и незатумненность армянского языка, выход Армении из состава СССР и провозглашение независимой государственности, что отразилось в публикациях самиздата.

THE IDEA OF INDEPENDENT ARMENIA IN “SAMIZDAT” PUBLICATIONS

Arman Galoyan

Resume

The dissident movement of 1960s in the former USSR had serious manifestations in Armenia. However, the Armenian dissident groups significantly differed from similar organizations in other countries. Unlike the dissident movement that emerged in 1960s in Russia that was mostly directed to defending the human rights, the activities of dissidents in Armenia were more national in their character. For Armenian dissidents, the primary objectives included the struggle against the single-party system, maintaining the national image and purity of the Armenian language, Armenia's secession from the Soviet Union and declaration of independence, all of which were reflected in samizdat publications.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼՐԱՏՎԱԴԱՇՏԻ ԸՆԿԱԼՄԱՄԲ

*Դավիթ Սարգսյան**

Բանալի բառեր՝ եվրոպական ինտեգրում, «Արևելյան գործընկերություն», գազաթափոփում, իդեոլոգիա, աշխարհաքաղաքական երկընտրանք, ինտեգրացիոն ուղեգիծ, ասոցացման պայմանագիր:

Եվրոպայի հետ Հայաստանի փոխհարաբերությունների որակապես նոր էջն սկսվում է 2008-2009թթ., երբ նախաձեռնվում և գործողության մեջ է դրվում Եվրոպական միության «Արևելյան գործընկերություն» ծրագիրը, որի հանգման կետը պիտի լիներ ԵՄ արևելյան հարևանների՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ Ասոցացման և խոր ու համապարփակ ազատ առևտրի պայմանագրերի ստորագրումը: 2008-ին գործընթացը նախաձեռնած Լեհաստանն ու Շվեդիան Եվրամիության հաստատմանն են ներկայացնում «Արևելյան գործընկերության» գործողությունների ծրագիրը, իսկ 2009-ին Պրահայում տեղի են ունենում ծրագրի շնորհանդեսն ու ԵՄ արևելյան գործընկերների առաջին գազաթափոփումը [1]:

«Արևելյան գործընկերության» մեկնարկի հետ եվրոպական առաջատար լրատվամիջոցները ևս ընդգծված հետաքրքրություն են ցուցաբերում ասոցացվող երկրների, այդ թվում՝ Հայաստանի նկատմամբ: Բհարկե, նախորդած տարիներին ևս եվրոպական լրատվամիջոցներն անդրադարձել էին Հայաստանին ու հայկական թեմատիկային, սակայն լուսաբանումները հետևողական, համակարգված ու թիրախային չէին: Հայոց ցեղասպանության հիմնահարց, արցախյան հակամարտություն, ներքաղաքական երբեմնակի սրացումներ, քրիստոնեության՝ որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակ, Եվրոպայի խորհրդի առջև Հայաստանի հանձնառություն և այլն. եվրոպական մամուլի ուշադրության կենտրոնում Հայաստանը հայտնվում էր այս և նմանաբնույթ հարցերի համատեքստում, ու լուսաբանումներն էլ կրում էին կա՛մ

* ԵՊՀ ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոնի ասպիրանտ:

ճանաչողական, կա՛մ զուտ լրատվական երանգ: Առաջին անգամ, փաստացի, «Արևելյան գործընկերություն» ծրագրում Հայաստանի մասնակցության լուսաբանմամբ լայնորեն խոսվելու էր մեր երկրի աշխարհաքաղաքական ընտրության, ժողովրդավարության և խոսքի ազատության մակարդակի, հանրության սոցիալական բարեկեցության, տնտեսության վիճակի և այլ հասարակական-քաղաքական սկզբունքային հարցերի շուրջ: Ավելին, Հայաստանը, փաստացի, ոչ միայն եվրապաշտոնյաների, այլև եվրոպական մամուլի աչքում դիտարկվելու էր որպես ծրագրի վեց հավասարաթեք մասնակից երկրներից մեկը՝ ինքնաբերաբար համեմատության մեջ դրվելով դրանց հետ:

Ծրագրի մեկնարկային փուլում եվրոպական լրատվադաշտը հիմնականում միասնաբար էր ընկալում մասնակից վեց երկրներին, դրանց զարգացման մակարդակն ու հնարավորությունները՝ բնորոշելով դրանք որպես հետխորհրդային կամ մերձուսաստանյան տարածություն: Հետագայում արդեն, ծրագրի գործողության մեջ մտնելու և արդյունքներ գրանցելու ընթացքում, կերևան որակական տարբերություններն, օրինակ, հենց Հայաստանի և Ադրբեյջանի միջև: Բացի այդ, սկզբից նեթ ակնհայտ է դառնում, որ եթե Եվրամիությունն «Արևելյան գործընկերություն» ծրագիրը չի համարում հակառուսաստանյան նախաձեռնություն, ապա եվրոպական մամուլն այն ընկալում է որպես Արևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում Ռուսաստանին նետված մարտահրավեր և նրա ազդեցությունն այդ տարածաշրջաններում սահմանափակելու փորձ:

Այսպես, դեռևս 2008-ի մայիսի 25-ին՝ «Արևելյան գործընկերություն» ծրագրի արշալույսին, անդրադառնալով Լեհաստանի վարչապետ Դոնալդ Տուսկի նախաձեռնությանը, անգլիական հեղինակավոր «Դեյլի Թեյլեգրաֆը» կանխատեսում է Կրեմլի բացասական արձագանքը Եվրամիության՝ դեպի Արևելք ընդլայնման մտքին. «Լեհաստանն առաջ կանցնի իր հզոր հարևան Ռուսաստանից՝ առաջարկելով Եվրամիությանն ընդլայնվել դեպի Արևելք՝ նախկին Խորհրդային Միության երկրներ... Առաջարկը ցավոտ կլինի Կրեմլի համար այն դեպքում, եթե ծրագրում ներառվի նաև Բելառուսը»¹: Ծրագրում որոշակիություն մտնելուց հետո Ռուսաստանի հնարավոր արձագանքի սպասումները միայն ուժգնանում են: 2009թ. մայիսի 7-ին Պրահայում ծրագրի

¹ <http://www.telegraph.co.uk/news/2027636/Poland-takes-on-Russia-with-Eastern-Partnership-proposal.html>
Poland takes on Russia with 'Eastern Partnership' proposal

շնորհանդես-գազաթաժողովին անգլիական հեղինակավոր «Գարդիանն» անդրադարձն սկսում է հետևյալ կերպ. «Կրեմլի և Արևմուտքի միջև մրցակցությունը Ռուսաստանի և Եվրոպական միության միջև առկա տարածքի համար մտավ նոր փուլ. Եվրոպան Մոսկվայի ուղեծրից փորձում է դուրս բերել վեց երկիր»¹: Բացասական համատեքստում անդրադարձ է կատարվում արևելյան գործընկեր երկրներում վերջին տարիներին Ռուսաստանի դերին ու ներկայությանը, մասնավորապես հիշատակվում են 2008թ. ռուս-վրացական պատերազմն ու 2009թ. ռուս-ուկրաինական գազային դիմակայությունը:

Ծրագրի մեկնարկին հաջորդած՝ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի զգուշացումը Եվրամիությանը, թե այն չպետք է վերածվի գործընկերության ընդդեմ Մոսկվայի², կարծես հաղթաթուղթ է դառնում եվրոպական մեդիայի ձեռքում և առավել սրում ծրագրի աշխարհաքաղաքական համատեքստը. ասոցացման արդյունքում, ըստ եվրոպական լրատվադաշտի ձևավորած միասնական իդեոլոգիայի, հետխորհրդային երկրները պետք է թոթափելին ռուսաստանյան ազդեցությունն ու մուտք գործելին բարեկեցիկ ու զարգացած կյանք: Երբեմն, գոնե ծրագրի սկզբնական փուլը լուսաբանելիս, մասնակից երկրներում քաղաքակրթական և աշխարհաքաղաքական համատեքստերը միասնականացվում էին, ինչը եվրոպական լսարանում թյուրըմբռնման տեղիք էր տալիս, իսկ մասնակից երկրներում՝ հաճախ ընդունվում դժկամությամբ: Այսպես, եթե, օրինակ, Ուկրաինայում կամ Մոլդովայում տեղի էին ունենում զանգվածային հակառուսական ցույցեր՝ Եվրամիության հետ ասոցացվելու պահանջով, ապա Հայաստանում հակառուսական մթնոլորտի բացակայության պատճառով նման ակցիաներ չէին անցկացվում: Փոքրաթիվ մասնակիցներով ակցիաները, սակայն, անպայման լուսաբանում էին գտնում առնվազն եվրոպական առցանց մեդիայում: Օրինակ, 2013թ. դեկտեմբերի 2-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի պետական այցը Հայաստան բողոքով դիմավորած մի խումբ քաղաքացիների ցույցերն արտացոլվեցին «Բիզնես Այու Յուրովի» կայքում³:

¹ <http://www.theguardian.com/world/2009/may/07/russia-eu-europe-partnership-deal>
EU pact challenges Russian influence in the east

² <http://news.bbc.co.uk/2/hi/europe/8061042.stm> - Russia alarmed over new EU pact

³ <http://www.bne.eu/content/story/armenians-rally-against-customs-union-putin-delivers-rewards>
Armenians rally against Customs Union Putin delivers rewards

Բացի այդ, եթե, օրինակ, Ուկրաինայի աշխարհագրական մոտիկությունը Եվրամիությանը, Եվրոպայի համար դրա բացառիկ կարևորությունն ու ռեսուրսներն ստիպում էին եվրոպացի լրագրողներին առավել հետևողական լինել այդ երկրի լուսաբանումներում, ապա Հայաստանը, փաստացի, հիմնականում ներկայացվում էր որպես արևելյան գործընկերների շարքից հերթականը, լավագույն դեպքում՝ արվում էին պատմական և մշակութային որոշակի անդրադարձեր: Մինչև 2013թ. Հայաստանի նահանջն «Արևելյան գործընկերությունից» եվրոպական մամուլն առավելապես չէր պատկերացնում մեր երկրի աշխարհաքաղաքական, անվտանգային և հարևանների հետ հարաբերությունների համատեքստերը: Եթե արվում էին հարավկովկասյան տարածաշրջանի մյուս երկրների՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ ընդհանրացումներ, դրանք սովորաբար մեր օգտին չէին լինում, քանի որ վերջիններս ընդգծված արևմտամետ դիրքորոշման կրող են: Ընդհանուր առմամբ, Վրաստանը եվրոպական մեդիա-դաշտին առավելապես հետաքրքրում էր իբրև Ռուսաստանի հետ նորագույն դիմակայության օջախ, իսկ Ադրբեջանը՝ որպես Եվրոպայի էներգետիկ այլընտրանքային աղբյուր:

2011թ. սեպտեմբերի վերջին Վարշավայում կայացած «Արևելյան գործընկերության» երկրորդ զագաթաժողովն արդեն առավել համեստ և իրատեսական լուսաբանում է ստանում եվրոպական մեդիայի կողմից՝ զերծ պատրանքներից և հավակնոտ կանխատեսումներից: Եվրագոտում ճգնաժամ էր սկսվել, Սիրիայում քաղաքացիական պատերազմ էր, իսկ ամենակարևորը՝ եվրոպական մեդիա-դաշտն արձանագրում էր, որ Բրյուսելը շոշափելիորեն զգում է Մոսկվայից եկող անհանգստությունը ծրագրի հետագա գործողության առնչությամբ: Ավելին, Կրեմլն անթաքույց բավարարվածությամբ էր հետևում ծրագրի բարդ ընթացքին, ԵՄ ուռճացված բյուրոկրատական ապարատի և եվրագոտու հետ կապված դժվարություններին [2]:

2011-ին արդեն եվրոպական մամուլը ոչ միայն թերահավատորեն էր մոտենում ծրագրի գործողության նպատակահարմարությանը, այլև քննադատում էր Եվրոպական միության ղեկավարությանն, օրինակ, Բելառուսի կամ Ադրբեջանի պես բռնատիրական վարչակարգերի հետ համագործակցելու և դրանք բարեփոխելու ցանկության համար: Տարլոիդների էյֆորիկ տրամադրություններին փոխարինելու են գալիս ծրագրի երկու տարվա փորձը հաշվի առնող խորքային վերլուծականները, որոնք հեղինակում են առաջատար

լրատվամիջոցների և ուղեղային կենտրոնների այունակագիրներն ու փորձագետները: «Սթրաթեջիկ Քալչը Ֆաունդեյշն» հեղինակավոր պարբերականն, օրինակ, ամփոփելով վարչապետի գազաթափողովի արդյունքները, արձանագրում է, որ միայն Բելառուսում մարդու իրավունքների խախտումները դատապարտող հոշակագրի չստորագրումը ծրագրի մասնակից մյուս երկրների ղեկավարների կողմից բավական է դրա ձախողման մասին խոսելու համար: Բացի այդ, Եվրամիության «հնաքնակները»՝ Գերմանիան, Ֆրանսիան և Իտալիան, առանձնապես հետաքրքրված չեն դեպի Արևելք նոր ընդարձակմամբ, քանի որ զբաղված են առավելապես ներքին խնդիրներով¹:

Եվրոպական մեդիա-դաշտը հանգամանորեն քննում է նաև ծրագրի մասնակիցների կազմի նպատակահարմարությունը՝ դիտարկելով երկրների մասնավոր շահերը: Մասնավորապես, մասնակիցներից չորսը՝ Վրաստանը, Ուկրաինան, Ադրբեյջանը, Մոլդովան, կազմում են ՎՈւԱՄ քառյակը (որն, ի դեպ, ընկալվում է որպես հակառուսաստանյան էներգետիկ կազմակերպություն), դրանցից երեքն արտաքին քաղաքական ուղեգիծ են ընտրել ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի հետ մերձեցումը²: Հայաստանը և Բելառուսն, ընդհակառակը, եվրոպական մամուլի կողմից ընկալվում են որպես Ռուսաստանի անդավաճան ռազմավարական դաշնակիցներ:

2012-2013թթ. եվրոպական մամուլն արձանագրում է, մի կողմից՝ ծրագրի մասնակիցների անվտանգությունը Եվրամիության հանդեպ, մյուս կողմից՝ Եվրոպայի անիրատեսական սպասումները հետխորհրդային այդ երկրներից: 2013թ. նոյեմբերին նախանշված Վիլնյուսի գազաթափողովն արդեն մի քանի ամիս առաջ իր վրա է բնեռում արևմտյան, այդ թվում՝ ԱՄՆ լրատվադաշտի համակ ուշադրությունը, իսկ մասնակից երկրների հնարավոր վարքը, այսինքն՝ Ասոցացման համաձայնագրի ստորագրումը կամ չստորագրումն ընկալվում է որպես կենսա-մահու պայքար և հետխորհրդային տարածքն արդիականացնելու և եվրոպականացնելու վերջին հնարավորություն: ԵՄ-ի հետ ասոցացված Հայաստանի հեռանկարը հենց եվրոպական մամուլի կողմից ընկալվում է իբրև Հարավային Կովկասից Ռուսաստանի վերջնական դուրսմղում³:

¹ <http://www.strategic-culture.org/news/2011/10/07/shaky-prospects-for-the-eastern-partnership.html>
Shaky Prospects for the Eastern Partnership

² <http://carnegieeurope.eu/publications/?fa=51983> – A Successful Vilnius Summit: Mission Possible

³ <http://www.globalresearch.ca/eastern-partnership-the-west-s-final-assault-on-the-former-soviet-union/12299> - Eastern Partnership: The West's Final Assault On the Former Soviet Union

Վիլնյուսյան գագաթաժողովին ընդառաջ՝ եվրոպական մամուլը թեև կանխատեսում է Մոսկվայի կողմից հուժկու ճնշում անդամ երկրների վրա, սակայն իրատեսորեն չի դիտարկում վեց երկրից չորսի՝ Հայաստանի, Ադրբեյջանի, Բելառուսի և Ուկրաինայի կողմից Ասոցացման պայմանագրի ստորագրումից հրաժարման սցենարը: Մինչև 2013-ի սեպտեմբերին Երևանի՝ ստորագրումից փաստացի հրաժարումը եվրոպական լրատվադաշտն ուրվագծում է երկու խումբ մասնակից երկրներ՝ Հայաստան, Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա, որոնք կարծես միտված են ԵՄ-ի հետ գործակցության խորացման, և Բելառուս ու Ադրբեյջան, որոնցում գործող բռնատիրական վարչակարգերին վերապահումով է մոտենում ինքը՝ Բրյուսելը: «Իյու օբզերվերն», օրինակ, 2013-ի օգոստոսին կանխատեսում է երեք հնարավոր սցենար, որոնցից ոչ մեկն, արդյունքում, չի իրականանում. կա՛մ մասնակից երկրներին ԵՄ անդամության թեկնածուի կարգավիճակի շնորհում, կա՛մ առնվազն վերոնշյալ չորս երկրի հետ ԵՄ գործակցության՝ մեկ աստիճանով բարձրացում, կա՛մ էլ ԵՄ-ի հետ ընդհանուր շուկայի ստեղծում ու եվրոպական նորմերի ընդունում¹: «Քարնեգի Յուրոփն» իր հերթին 2013-ի հունիսին արձանագրում է, թե անգամ Հայաստանը՝ Ռուսաստանի մերձավորագույն դաշնակիցը տարածաշրջանում, բանակցում է ԵՄ-ի հետ²:

ԵՄ վիլնյուսյան գագաթաժողովից ամիսներ առաջ՝ 2013-ի սեպտեմբերի 3-ին, երբ ՀՀ նախագահը Մոսկվայում հայտարարում է Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի Մաքսային միությանն անդամակցելու՝ Երևանի մտադրության մասին, եվրոպական առաջատար պարբերականները հեղեղվում են եվրոպական ինտեգրման ճանապարհին Հայաստանի հետքայլի մասին լրատվանյութերով: Ընդ որում, գոնե սկզբնական շրջանում՝ 2013-ի սեպտեմբերին, այս որոշումը ներկայացվում է ոչ միայն որպես Հայաստանի ներքին և անսպասելի ընտրություն, այլև Ռուսաստան-Եվրամիություն դիմակայության նոր օջախ: «Հայաստանի սակարկումներն առևտրային գործարքի շուրջ սրում են ԵՄ-Ռուսաստան կապերը». այս վերնագրով նյութում «Բի-Բի-Սի-ն» տեղեկացնում է, որ Մաքսային միությանն անդամակցելու Երևանի որոշումը զրոյացրել է հարավկովկասյան այդ երկրի հետ կապերի խորաց-

¹ <https://euobserver.com/opinion/121250> - Vilnius: A milestone in the Eastern Partnership

² <http://carnegieeurope.eu/publications/?fa=51983> – A Successful Vilnius Summit: Mission Possible

ման ԵՄ ծրագիրը: «Հայաստանն այլևս դժվար թե կարողանա ստորագրել համաձայնագիրը», - եզրակացնում է լրատվամիջոցը¹: Ե՛վ այս, և՛ շատ այլ հրապարակումներում նշվում է, թե պայմանագրի ստորագրումը վերջնարդյունքում պետք է հանգեցնե՞ր ԵՄ-ին անդամակցությանը, մինչդեռ նման հնարավորություն ոչ միայն չի նախատեսվել արևելյան գործընկերների համար, այլև ամեն առիթով բացառվել է այդ սցենարը:

Երևանի կողմից նման որոշում կայացնելու շարժառիթները որոնելիս եվրոպական մեդիա-դաշուն անդրադարձներ է կատարում Հայաստանի քաղաքական, տնտեսական, էներգետիկ և ռազմական վիճակին, նշում Ռուսաստանի որոշիչ դերը հարավովկայան փոքրիկ հանրապետության կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Ընդհանուր առմամբ, եվրոպական հրապարակումներում սկզբնապես ուրվագծվում է ԵՄ «տանուլ տված ճակատամարտի» կամ «կորսված հնարավորության» մոտիվը, և որոշ ժամանակ անց միայն եվրոպացի վերլուծաբաններն ու սյունակագիրները փորձում են հիմնավորումներ կամ արդարացումներ գտնել Երևանի անսպասելի որոշման համար՝ հղվելով մե՛կ Եվրամիության քաղաքականության ապաշնորհությանը, մե՛կ Ռուսաստանի ագրեսիվ նկրտումներին և հիվանդագին խանդին հետխորհրդային երկրների կողմնորոշման հարցում, մե՛կ էլ Հայաստանի իշխանությունների չմտածված, անհասկանալի պահվածքին:

2013-ի նոյեմբերին Ուկրաինայում ծայր առած պառակտումը Ասոցացման համաձայնագրի կնքման նպատակահարմարության հարցի շուրջ, Յանուկովիչի վարչակազմի հրաժարումը դրա ստորագրումից և Կիևում եվրոպամետ, ապա և հակակառավարական զանգվածային ցույցերը եվրոպական մեդիայի ուշադրությունը կենտրոնացնում են իրենց վրա: Ադրբեջանը և Բելառուսը ևս չեն ստորագրում Ասոցացման համաձայնագիրը, արդյունքում՝ Վիլնյուսում հաջողում են միայն Մոլդովան և Վրաստանը: Գազաթաժողովի և դրան հաջորդած օրերին եվրոպական առաջատար լրատվամիջոցները ծայրահեղ բացասական են ներկայացնում և գնահատում Ռուսաստանի ջանքերը՝ ուղղված «Արևելյան գործընկերության» տապալմանը՝ նշելով, որ ծրագրի մասնակից երկրների և մասնավորապես Ուկրաինայի վրա Մոսկվայի գործադրած ճնշումը, սպառնալիքներն ու վերջնագրերն աննախադեպ են²:

¹ <http://www.bbc.com/news/world-europe-23975951> - Armenia rift over trade deal fuels EU-Russia tension

² <http://www.bbc.com/news/world-europe-25133721> - EU-Russia rivalry looms over Vilnius summit

Ընդհանուր առմամբ, 2013-ի նոյեմբեր-դեկտեմբերին եվրոպական մեդիա-դաշտն առատորեն զուգահեռներ է անցկացնում Կիևի և Երևանի միջև՝ պայմանագրի ստորագրումից հրաժարումը պայմանավորելով այդ երկրներում ռուսաստանյան ազդեցությամբ: Սակայն եթե Ուկրաինայում ծայր առած բողոքի ակցիաներն ի ցույց են դնում հասարակության երկփեղկվածությունը ռուսամետ և արևմտամետ կողմնորոշումների կրողների միջև, Հայաստանում նման զանգվածային ակցիաներ տեղի չեն ունենում: Այնուամենայնիվ, համեմատաբար փոքրաթիվ, ընդամենը մի քանի հարյուր մարդ հավաքած բողոքի ակցիաներն ընդդեմ Մաքսային միությանն անդամակցության տեղ են գտնում եվրոպական լրատվամիջոցների թողարկումներում: Այդպիսով տպավորություն է ստեղծվում, թե Ուկրաինայի պես՝ Հայաստանում էլ զանգվածային եվրոպամետ ցույցեր են: Շուտով՝ արդեն 2013-ի դեկտեմբերի վերջին, Կիևում իրավիճակի սրմանը զուգընթաց, հայաստանյան թեման եվրոպական մեդիայում աստիճանաբար մարում է, իսկ Ուկրաինան՝ դառնում ամենօրյա լուսաբանումների առարկա: Հետագայում արդեն Հայաստանը սկսում է հիշատակվել կա՛մ «Արևելյան գործընկերության» գրանցած անհաջողության, կա՛մ ԵՄ նոր նախաձեռնությունների համատեքստում:

2014-ը պակաս հազեցած էր Եվրամիության և Հայաստանի փոխգործակցությանը վերաբերող և երկկողմ հետաքրքրություն ներկայացնող իրադարձություններով, քանի որ, մի կողմից, Երևանը նախապատրաստվում էր Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելուն, մյուս կողմից՝ Բրյուսելն ինտենսիվորեն զբաղված էր ուկրաինական հիմնահարցով, ինչպես նաև պայմանագիրն ստորագրած երկրների՝ Վրաստանի և Մոլդովայի հետ համագործակցության խորացմամբ: Բնականաբար, եվրոպական մեդիա-դաշտն էլ հետևում էր ձևավորված օրակարգին՝ այս փուլում առանձնակի չկարևորելով Երևանի հետ գործակցությունը: Հայաստան-ԵՄ հարաբերությունների գրանցած հատվածական հաջողությունները 2014-ին՝ Մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման և Ռեադմիսիայի մասին համաձայնագրերի կյանքի կոչում, ԵՄ ծրագրերին Հայաստանի մասնակցության ընդհանուր սկզբունքների վերաբերյալ արձանագրության կիրառում, ԵՄ-ի կողմից 2014-17թթ. Հայաստանին տրամադրվելիք աջակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի կնքում, որոշ փոխայցեր և այլն, գրեթե աննկատ են մնում անգամ հայաստանյան մեդիայի կողմից [3]:

Ընդհանուր առմամբ, եվրոպական փորձագիտական միտքը, վերլուծաբանները, ուղեղային կենտրոնները Հայաստանի աշխարհաքաղաքական ընտրությունը քննելիս ձևավորում են մի քանի իդեոլոգեմներ, որոնք կայուն կերպով շրջանառվում են Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների գրեթե ցանկացած հիշատակման մեջ: Մաքսային միությանն անդամակցելու՝ Երևանի որոշումը գնահատվում է որպես այսրոպեական և անակնկալ, արձանագրվում է Մոսկվայի անդրկուլիսային հուժկու ճնշումը Երևանի վրա, Ռուսաստանի հետ կապված անվտանգային և տնտեսական բաղադրիչներն առավել ծանրակշիռ են Եվրամիության հետ գործակցության խորացման համեմատ: Գերակա է նաև սպասվող Եվրասիական միությունը որպես նախկին Խորհրդային Միության վերստեղծման փորձ ներկայացնելու միտումը¹: «Ազատ Եվրոպա» ռադիոկայանն անգամ ենթադրում է, որ Մոսկվայի օգտին որոշում չկայացնելու դեպքում Հայաստանը կարող էր ենթարկվել Վրաստանի և Մոլդովայի նկատմամբ կիրառվող առևտրային պատժամիջոցներին²: Հատկապես արցախյան հակամարտության առկայության և Գյումրիում ռուսական ռազմաբազայի տեղակայման հաշվառմամբ եվրոպացի որոշ փորձագետներ արձանագրում են, թե Երևանն ուղղակի ստիպված էր նման որոշում կայացնել:

2015-ը նշանավորվելու էր «Արևելյան գործընկերության» անդամ երկրների համար հերթական՝ Ռիգայի գագաթաժողովով, որում պետք է հստակեցվեր դրանցից յուրաքանչյուրի և ԵՄ հարաբերությունների առանձնահատկությունը: Փաստն այն է, որ վեց երկրները տրամագծորեն տարբեր ներքաղաքական և արտաքին քաղաքական իրավիճակներ ունեին, մասնավորապես՝ Հայաստանը պետք է ներկայանար որպես ԵՏՄ անդամ երկիր: Մոտ մեկուկես տարվա հարաբերական տեղեկատվական դադարից հետո՝ 2013-ի նոյեմբերի Վիլնյուսի գագաթաժողովից ի վեր, 2015-ի մայիսին նախանշված Ռիգայի գագաթաժողովը զգալիորեն ակտիվացնում է եվրոպական մեդիադաշտի հետաքրքրությունն արևելյան գործընկերների նկատմամբ:

Փորձագիտական միտքը համերաշխ է այն հարցի շուրջ, որ Բրյուսելը պետք է դասեր քաղի Վիլնյուսի տապալումից և տարբերակված մոտեցում

¹ <http://www.theguardian.com/world/2014/jun/09/post-soviet-states-new-east-network-guardian-welcome-From-Soviet-Union-to-New-East-welcome-to-our-new-network>

² <http://www.rferl.org/content/caucasus-report-armenia-customs-union/25216605.html>
Armenian U-Turn On EU Not As 'Objective' As Thought

ցուցաբերի երկրներից յուրաքանչյուրի նկատմամբ: Լոնդոնի թագավորական «Չաթեմ Հաուսի» կանխատեսմամբ՝ Ռիգայի գազաթաժողովը սթրես-թեստ է լինելու ԵՄ ներուժի չափման և դրա կենսունակության գնահատման համար: Եվրոպական փորձագիտական միտքն անգամ արձանագրում է, որ Երևանն ակնարկել է Ասոցացման համաձայնագրի միայն քաղաքական մասն ստորագրելու պատրաստակամության մասին, մինչդեռ Բրյուսելն անարձագանք է թողել առաջարկը¹: Եվրոպական առաջատար պարբերականների հրապարակումներում, ընդհանուր առմամբ, առկա են խոր անվստահություն և թերահավատություն արևելյան գործընկերների հարցում Եվրամիության իրական հանձնառության նկատմամբ: Որպես հիմնական օրինակ՝ ներկայացվում են ուկրաինական ճգնաժամն ու այդ երկրի եվրաինտեգրման մշուշոտ հեռանկարը: «Գարդիանի» պնդմամբ՝ Ուկրաինայի ուրվականը կսավառնի Ռիգայում, իսկ մնացած արևելյան գործընկերների հետ ԵՄ-ը, միննույն է, չի հաջողի պայմանավորվել²:

Ռիգայի գազաթաժողովը և դրան հաջորդած իրադարձությունները լուսաբանելիս եվրոպական մեդիա-դաշտն առավելապես կենտրոնանում է Կիևի, մասամբ նաև Թբիլիսիի և Քիշնևի ու Բրյուսելի գործակցության վրա: Հայաստանի մասնակցության շուրջ ակնարկների դեպքում նախ նշվում է ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցությունը, ապա մեջբերվում պաշտոնական Երևանի այն հավաստիացումը, որ հանձնառու է խորացնելու ԵՄ-ի հետ գործակցությունը և չի առաջնորդվում «կա՛մ-կա՛մ» սկզբունքով³: Ամերիկյան «Սթրաթֆոր» առաջատար հետազոտական կենտրոնի կանխատեսմամբ՝ Ռիգայից հետո էլ «Արևելյան գործընկերությունը» կշարունակի մնալ որպես Ռուսաստանի ազդեցությունը հետխորհրդային տարածքում սահմանափակելու փորձաքար⁴:

Հուլիս, 2015թ.

¹ <http://www.chathamhouse.org/expert/comment/17712> - The South Caucasus and the Precarious Eastern Partnership

² <http://www.theguardian.com/world/2015/may/20/eu-eastern-partnership-highlight-failure-plan-check-russia> - EU Eastern Partnership Summit will highlight failure of plan to check Russia

³ <http://www.dw.com/en/dim-expectations-for-eastern-partnership/a-18464241>
Dim expectations for 'Eastern Partnership'

⁴ <https://www.stratfor.com/image/rising-importance-europes-eastern-partnership>
The rising Importance of Europe's Eastern Partnership

Աղբյուրներ և գրականություն

1. Eastern Partnership, Ministry of Foreign Affairs of the Republic of Poland, pp. 10-11.
2. *Сергунин А.А.*, «Восточное партнерство»: вызов российской дипломатии в Восточной Европе. Вестник ВГУ. Сер. Лингвистика и межкультурная коммуникация, 2010, N 1, стр. 205-210.
3. Հաշվետվություն 2014թ. Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության գործունեության, Երևան, 2015, էջ 10-11:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼՐԱՏՎԱԴԱՇՏԻ ԸՆԿԱԼՄԱՄԲ

Դավիթ Մարգարյան

Ամփոփագիր

Հոդվածը ներկայացնում է արևմտյան առաջատար լրատվամիջոցների դիրքորոշումները Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշման թեմայով, մասնավորապես՝ եվրոպական մամուլի կողմից Հայաստանի եվրոպական, ապա և եվրասիական ինտեգրացիոն ուղեգծերի մեկնաբանումները, Հայաստանի՝ որպես գործընկերոջ, կերպարի ձևավորման օրինաչափությունները, «Արևելյան գործընկերություն» ծրագրի ընթացքում պաշտոնական Երևանի քայլերի լուսաբանումները: Ուրվագծվում են եվրոպական մամուլում Հայաստանի ինտեգրացիոն ուղեգծերի լրագրային արձագանքների հիմնական օրինաչափությունները:

ЕВРОИНТЕГРАЦИЯ АРМЕНИИ: ВОСПРИЯТИЕ ЕВРОПЕЙСКОЙ ПРЕССЫ

Давит Саргсян

Резюме

В статье рассматриваются позиции передовых западных СМИ относительно геополитического выбора Армении, в частности, трактовка европейской прессой европейского и евразийского интеграционных векторов Армении, особенности формирования образа Армении как партнера, освещение шагов официального Еревана в ходе программы «Восточное партнерство». Анализируются также основные особенности журналистских подходов европейской прессы к интеграционным векторам Армении.

**EUROPEAN INTEGRATION OF ARMENIA:
PERCEPTION OF THE EUROPEAN MEDIA**

Davit Sargsyan

Resume

The article discusses the perceptions of the leading Western media in terms of geopolitical choice of Armenia. Particularly, the main issues are media interpretations of the European and Eurasian integration paths of Armenia by the European press, the patterns of image-making process of Armenia as a counterpart, the media coverage of Yerevan's steps during the Eastern Partnership initiative. The main features of the coverage of the integration vectors of Armenia in the European press are presented.

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*), ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), շ. (ռուսերեն), ք. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, շ. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
 - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
 - *Շարիպովա Ք.*, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, շ. 15, М., 1986.
 - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.
5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ԲԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 28.09.2015թ.
Թիվ 5 (63), 2015թ.
Տպաքանակը՝ 200:

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում